


Մորիս Բարրաթ

«Արմատական քրիստոնեություն»
մաս 3



ՕՐԵՆՔԻ

ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Ջրաժարում հեղինակային իրավունքներից

**Դուք ազատ կարող եք մեջբերել,
կրկնօրինակել ու տարածել այս գրքի նյութը:
«Barratt Ministries»-ը ոչ մի բնօրինակ նյութի
նկատմամբ չի կիրառում հեղինակային
իրավունքի քաղաքականություն:**

Մորիս Բարրաթ

«Արմատական քրիստոնեություն» շարք
մաս 3

ՕՐԵՆՔԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Գիրքն առաջին անգամ լույս է տեսել 2004թ.:
Երկրորդ հրատարակություն՝ 2008թ., երկու լրացուցիչ գլուխներով:

«Barratt Ministries» հրատարակչություն
Մանչեսթեր M14 5QH, Մեծ Բրիտանիա



Էլ. փոստ: info@barrattministries.org.uk
Ինտերնետային կայք: www.barrattministries.org.uk

Բովանդակություն

Ներածություն	5
--------------------	---

ՄԱՍ 1 - Օրենքն ու մեղքը

1. Մի կարծեք	9
2. Ինչու համար մահացավ Յիսուսը	14
3. Օրենքը. նզովք և օրհնանք	20
4. Հավատք որ գործում է սիրով	27
5. Ասելն ու անելը	33
6. Սիրո դրդապատճառները	39
7. Գթասրտություն զարգացնելը	48

ՄԱՍ 2 - Օրենքն ու սերը

Ներածություն	57
8. Սպանությունն Օրենքում	61
9. Սպանությունը սրտում	66
10. Արատավոր ընծաներ	72
11. Շնանալն Օրենքում	79
12. Շնանալը սրտում	83
13. Օրենքն ու ամուսնալուծությունը	89
14. Ամուսնացած, սակայն բաժանված	94
15. Երդվելը	101
16. Մի՛ երդվեք ընդհանրապես	108
17. Ակն ընդ ական	116
18. Լրացուցիչ մղոնի փիլիսոփայությունը	123
19. Սիրի՛ր ընկերոջդ, ասի՛ր թշնամուդ	130
20. Սիրի՛ր թշնամիներիդ	132
21. Քրիստոնյա կատարելություն	139

Ներածություն

Աստուծոյ եւ չորր առջեւ՝ մաքուր ու անարատ կրօնասիրութիւնը սա՛ է.- այցելել որբերուն եւ այրիներուն՝ իրենց տառապանքին մէջ, ու ինքզինք անբիծ պահել աշխարհէն:

Հակոբոս 1:27

Այս շարքի առաջին գրքում ես փորձեցի դնել այն հիմքը, որ մեզ կօզնի Լեռան քարոզի ուսումնասիրության ժամանակ: Երկրորդ գրքում ես դիտարկեցի իրական աշակերտի էությունն ու այն, թե ինչպես է Աստված դիտարկում այդպիսի էությանմբ մարդուն, այն է՝ որպես աղ՝ իր արարչությունում և լույս՝ այս խավար աշխարհում: Մենք այժմ հասել են Մատթեոսի ավետարանի 5:17-ին և սկսում ենք Լեռան քարոզի մի դժվար հատված: Հիսուսն այս հատվածը սկսում է՝ պնդելով հետևյալը. *«Մի՛ կարծէք թէ եկայ՝ արելու Օրէնքը կամ Մարգարէները: Եկայ ո՛չ թէ արելու, հապա՝ գործադրելու.» (Մատթեոս 5:17-18):* Հիսուսն իր աշակերտների հետ էր խոսում, ուրեմն հավատացած եմ, որ այս խոսքերը մեզ՝ քրիստոնյաներիս համար են, և, ինչպես միշտ՝ շիտակ են և հստակ:

Շնորհ հավատքով

Աստծու թագավորությունում *շնորհով, այսինքն հավատքի միջոցով* ծնվելը այն պայմանն է, որով մեր անունը մուտքագրվում է կենաց գրքի մեջ: Բայց Աստծու հասուն զավակը դառնալը, ինչպես առհասարակ նորածնի դեպքում է, պահանջում է բազում տարիների աճ, շատ ջանասիրություն ու **աշխատանք**: Չափազանց հեշտ է *ծուլլ ծառա* լինելն ու մեր ժառանգությունը վատնելը: Իմ մոտավոր գնահատմամբ՝ չափից ավելի շատ քրիստոնյաներ են շնորհն օգտագործում՝ որպես

հեշտասեր ու ցոփ կենսակերպ վարելու պատրվակ: Նրանց համար շնորհը ծածկում է ցանկացած կենսակերպ, որ իրենք ցանկանում են վարել: Եթե որևէ մեկը հարցականի տակ դնի նրանց կենսակերպը, ապա նրանք կասեն, թե չեն պատրաստվում կապանքների տակ դրվել, ու որ Աստված եկավ նրանց ազատ արձակելու ու առատ կյանք տալու:

Օրե՞նք, թե՞ շնորհ

Չիսուսի քարոզի այս հաջորդ մասը, որը շարունակվում է մինչև 5-րդ գլխի ավարտը, այդպիսի շատ քրիստոնյաների համար սայթաքման քար է: Չիսուսը պարզորոշ կերպով ասում է, որ նա չի եկել օրենքն ավերելու, բայց այս քրիստոնյաները հավատում են, որ իրենք ամեն տեսակ օրենքից ազատված են, ուրեմն, պնդում են, թե Լեռան քարոզը Չիսուսի օրերի հրեաների համար էր, այլ ոչ թե ներկայիս աշակերտների: Սա այն պատճառով է, որ նրանք չեն հասկանում ո՛չ օրենքը և ո՛չ էլ շնորհը:

Այս գրքի առաջին մասում մենք կդիտարկենք օրենքն ու շնորհը: Ես ցանկանում եմ ցույց տալ, որ Չիսուսը խոսում էր այսօրվա աշակերտների հետ, և որ կատարելապես հնարավոր է հետևելու Աստծու ողջ օրենքին՝ առանց շնորհն անտեսելու: Իրականում, Պողոս առաքյալն ասում է, որ *շնորհն, ըստ Էուբայան, հաստատում է Օրենքը*:

Այնուհետև Չիսուսը շարունակում է՝ տալով մեզ վեց օրինակ, թե ինչպես մենք կարող ենք այսօր պահել այդ պատվիրանները: Խնդիրն այն է, որ այս օրինակները բացահայտում են մեր սրտերում եղած գաղտնիքները: Սա կարող շատ ցավոտ լինել, և ենթադրում եմ, որ սա մեկ այլ պատճառ է, որից ելնելով ժամանակակից քրիստոնյաները խուսափում են Լեռան քարոզից:

Մեր սեփական սրտի մասին ճշմարտությունը միշտ էլ չափազանց գարշելի է դեմ առ դեմ բերելու և ընդունելու համար, սակայն ճշմարտությունը միակ բանն է, որ մարդուն կարող է ազատ արձակել:

Այլընտրանքը

Այն քրիստոնյաները, որոնք չեն ցանկանում բացահայտված լինել, միայն մեկ այլ տարբերակ ունեն, այն է ցուցադրել **արտաքին** սրբություն՝ առանց սրտի հետ հաշիվները պարզելու, ինչը ոչ այլ ինչ է, քան ինքնագոհ կեղծավորություն: Մինչ սա կարող է մոլորեցնել շատ քրիստոնյաների, որոնք միևնույն կերպ են գործում, իրական աշակերտները ճշմարտության մասին երազկոտ պատկերացումներ չունեն: Չավեշտալին այն է, որ շատ ոչ-քրիստոնյաներ նույնպես կարող են շատ հեշտությամբ տարբերակել կեղծավորությունն ու խուսափել այդ մարդկանց հետ շփվելուց: Ապշեցուցիչ է այն փաստը, որ մեղսավորները սիրում էին Յիսուսին, որովհետև նրանք տեսան իրականությունն ու ճշմարտությունը, և Յիսուսն էլ նրանց էր սիրում: Կյանքիս տասնչորս տարիների ընթացքում գանգստերների ու ոճրագործների հետ աշխատելով՝ ես սա կարող եմ հասկանալ, որովհետև հաճախ կեղծիքն ավելի քիչ է նրանց կյանքում, քան թե որոշ քրիստոնյաների:


Ինչ հայրս սկսեց ուսուցանել Լեռան քարոզը մոտ երեսուն տարի առաջ, ես ամաչել եմ ու նվաստացած եղել այն բաներով, որոնք բացահայտվել ու դեռ շարունակում են բացահայտվել իմ գատնի կյանքում: Այնուամենայնիվ, այն փոփոխությունը, որ տեղի է ունեցել այդ բաներն ընդունելով ու դրանց հետ գործ ունենալով, առաջ է բերել մի ազատություն, որ երբեք չէի էլ երազի, թե դա կարող է հնարավոր լինել: Ես գիտեմ, թե ինչ ասել է ինքս ինձ տեսնել՝ որպես *մեղավորների գլխավորը*՝ միաժամանակ լինելով *անարատ ու անմեղադրելի* Աստծու աչքին: Սա իրական ազատություն է, քանզի ազատությունը առանց մեր մասին ճշմարտության բացահայտված լինելու, իրականում, մոլորություն է: Աղոթքս այն է, որ այս գիրքը շատ քրիստոնյաների կղնի ճշմարտության ու ազատության այս ուղղու վրա:

Բոլոր մեջբերումները Աստվածաշնչից բերված են այս կայքից՝

http://armenianbiblechurch.org/armenian_bible.htm

ገጽ 1

ዐቲኤቲን በኩል ገጽ ለገጽ



ԳԼՈՒԽ 1

Մի՛ կարծեք

Մի՛ կարծեք թէ եկայ՝ արելու Օրէնքը կամ Մարգարէները: Եկայ ո՛չ թէ արելու, հապա՛ գործադրելու: Որովհետեւ ճշմարտապես կը յայտարարեմ ձեզի. "Մինչեւ որ երկինքն ու երկիրը անցնին, Օրէնքէն յովտ մը կամ նշանագիր մը պիտի չանցնի՝ մինչեւ որ բոլորն ալ կատարուին" :

Մատթեոս 5:17-18

Տէրոջ Օրէնքը անթերի է, անձը կը վերանորոգէ:

Սաղմոս 19:7

Արդարեւ գիտենք թէ Օրէնքը հոգեւոր է, բայց ես մարմնաւոր եմ՝ ծախուած մեղքին հպատակութեան:

Հռովմեացիս 7:14

Յիսուսն իր աշակերտներին ասաց. «Մի՛ կարծեք»: Արդյոք ինչու նա ասաց մեզ, որ **չկարծենք** մի բան, եթե նա չգիտեր, որ մենք **պիտի** կարծենք: Երբ ճոճանակն ամբողջութեամբ մի կողմ է ճոճվել, բնական տենդենց է, որ այն կճոճվի ճիշտ հակառակ կողմը՝ հակառակ ծայրահեղությունը: Միևնույնը տեղի է ունենում, երբ քրիստոնյան լսում է, *թե ինքն ազատ է Օրենքի անեծքից* և այժմ անվճար շնորհ ունի: Հասկանալի է, որ նա սկսում է արհամարհել օրենքը որպես մի բան, որ պետք է դեն նետել, կարծես թե օրենքն ինքնին անիծված է այժմ:

Մոլորությունն այն է, երբ մարդիկ հավատում են, թե շնորհն ու Օրենքն իրար հակառակ են, և որ նրանք պետք է մեկն ընտրեն՝ մյուսի հաշվին: Սա չէ իրականությունը: Ճատ քրիստոնյաներ արհամարհել են **Օրենքը՝ մեղքն** արհամարհելու փոխարեն, իսկ սա վտանգավոր սխալ է, քանզի այն հանգեցնում է բազմաթիվ այլ կեղծ ենթադրությունների: Ճիշտ այնպես, ինչպես մենք պետք է սիրենք մեղսավորներին ու ատենք նրանց մեղքը, միևնույն կերպ էլ մենք պետք է սիրենք Աստծու Օրենքն ու ատենք մեղքը, որ **օգտագործում է** այդ կատարյալ Օրենքը՝ մեզ դատապարտելու համար:

Հակասություններ

Մենք երբեք չպետք է սուրբ գրություններն առանձնացնենք, այլ պետք է դիտարկենք դրանք կոնտեքստում ու այլ սուրբ գրությունների համեմատ՝ անգամ եթե այլ սուրբ գրությունները կարող են հակասական թվալ: Օրինակ՝ Պողոս առաքյալը Հռովմեացիս 6:14-ում պնդում է. *«Արդարեւ մեղքը պիտի չիչխէ ձեզ վրայ, որովհետեւ ո՛չ թէ Օրէնքի տակ էք, հապա՝ չնորհքի տակ»*: Սա կարող է հակասական թվալ միևնույն նամակի 3:31-ին. *«Ուստի մենք կ'ոչնչացնենք Օրէնքը հաւատքով: Ամենեւին. նոյնիսկ կը հաստատենք Օրէնքը»*:

Դժվար չի լինի հասկանալ Օրենքն ի հակադրություն շնորհքի, եթե մենք ազատամիտ լինենք ու սկսենք այն նախադրյալը, որ Հիսուսն ասաց, թե ինքը չէր եկել Օրենքն ավերելու, այլ հաստատելու: Բնական է մտածել, թե Օրենքն ավերվեց Հիսուսի՝ խաչ բարձրանալով, և հավատացած եմ, որ հենց այս պատճառով էլ Հիսուսը մեզ այդ մտածողության նկատմամբ զգուշացրեց: Թույլ տվեք մի քանի պատճառ բերել Աստծու խոսքից այն բանի համար, թե ինչու Հիսուսը չէր կարող եկած լինել Օրենքն ավերելու:

1. Բարոյական օրենքը նախատիպ չէ

«Օրենք» ասելով՝ Յիսուսն ի նկատի ուներ Աստծու օրենքը, այլ ոչ թե ընծաների, զոհաբերությունների ու ծեսերի արարողակարգը: Սրանք պարզորոշ կերպով ոչնչացվել էին խաչից ու հարությունից հետո: Դրանք նախատիպեր էին, որոնք Յիսուսը եկավ ի կատար ածելու, և այժմ, երբ մենք իրականությունը գիտակցում ենք, այլևս կարիք չունենք նախատիպերի: Այնուամենայնիվ, Աստծու օրենքը մարգարեություն, նախատիպ չէ, ուրեմն այն ոչնչացված չէ: Աստծու օրենքը պիտի կանգուն մնա ու պահպանվի՝ *մինչև որ երկինքն ու երկիրն անցնեն*, այն է՝ մինչև նոր երկինքն ու նոր երկիրը հաստատվեն:

2. Օրենքը բարի է ու կատարյալ

Աստծու բարոյական օրենքը կատարյալ է: Աստված Իսրայելի որդիներին թերի կամ արատավոր օրենք չէր տա: Յիսուսը չեկավ Աստծու Օրենքն ավերելու, այլ այն հաստատելու: Դավիթը Սաղմոս 19:7-ում ասում. *«Տէրոջ Օրենքը անթերի է...»*:

Պողոս առաքյալը մատնանշում է մեր խնդիրներն ու դրանց սիստեմատիկ կերպով պատասխանում է իր՝ Յովմեացիս 7-ում: Սա քննարկման մեծ առարկա է և այս գրքի նյութից դուրս է, որպեսզի ես այն խորությամբ դիտարկեմ, բայց ես կարող եմ հակիրճ կերպով ասել, որ խնդիրն Օրենքը չէ, այլ մեղքը: Մեղքն Օրենքն օգտագործում է մեզ մեղավորներ դարձնելու, և հենց այդ պատճառով է, որ մենք, բնականաբար, չենք սիրում Օրենքը: Մեղքը չի կարող մեղադրվել առանց Օրենքի: Օրինակ՝ ես չեմ կարող արագության սահմանը գերազանցել, եթե օրենսդրական ակտերում այն գոյություն չունի: Աստված Օրենքը հաստատեց՝ որպես *ուսուցիչ*, որպեսզի ցույց տա, թե որքան մեղավոր ենք մենք Աստծուն չհաճոյանալու մեջ, իսկ դրանով մենք դարձանք *չափից ավելի մեղսավոր*՝ ինչպես Պողոս առաքյալն է ասում 10-13 տողերում:

«...եւ այն պատուիրանը՝ որ կեանքի համար էր, նոյնը ինծի մահուան համար եղաւ: Որովհետեւ մեղքը՝ պատուիրանէն առիթ առնելով՝ խաբեց զիս եւ, սպաննեց անով: Հետեւաբար, Օրէնքը սուրբ է, ու պատուիրանը՝ սուրբ, արդար եւ բարի: Ուրեմն ինչ որ բարի է՝ մա՞հ պատճառեց ինծի: Ամենեւի՛ն: Հապա մեղքն էր որ մահ իրագործեց իմ մէջս՝ բարիին միջոցով, որպէսզի մեղքը գերազանցօրէն մեղաւոր երեւնայ՝ պատուիրանին միջոցով»: Այսպիսով, տեսանք, որ մեղքն է խնդիրը, այլ ոչ Աստծու կատարյալ Օրենքը:

3. Հավատքը հաստատում է օրենքը

Մենք փրկված ենք շնորհքով, բայց հավատքն այն միջոցն է, որով մենք շնորհ ենք ստանում: *«Որովհետեւ դուք շնորհքով փրկուած էք՝ հաւատքի միջոցով, եւ առիկա ո՛չ թէ ձեզմէ է՝ հապա Աստուծոյ ընծան է» (Եփեսացիս 2:8):* **Հավատքն է**, այլ ոչ շնորհքը, միակ միջոցը, որով մարդը կարող է արդարացված լինել Աստծու աչքին: Սա ոչ թե պարզապէս Նոր կտակարանի ուսմունքն է և ոչ էլ մի բան, որ եկավ միայն Հիսուսի՝ մեղքի համար զոհաբերութիւնից հետո: Սա կիրառելի է Յննդոց գրքից մինչև Հովհաննէսի հայտնութիւնը: Պողոս առաքյալի՝ եբրայեցիներին ուղղված նամակն ասում է մեզ, որ Աբելը՝ Ադամի որդին, արդարացված էր հավատքով: Այս հավատքով արդարութիւնը ողջ Աստվածաշնչով մեկ է. Դանիէլը, Հոբը, Չաքարիան՝ նրանք բոլորը Աստծու կողմից արդար են համարվում: Նրանք արդարացված էին ոչ թե գործերով կամ Օրենքի արարքներով, այլ հավատքով: *«Արդարը հավատքով պիտի ապրի»* սուրբ գրութիւնը Նոր կտակարանից չէ, այլ վերցված է Հին կտակարանից՝ Ամբակում 2:4-ից. *«...Բայց արդարը իր հաւատքով պիտի ապրի»:*

Հավատքի հայրը

Աբրահամը, որը Նոր կտակարանի համաձայն *հավատքի հայրն է*, ապրել է Օրենքից առաջ: Աստծու առաջ արդարացումը միշտ էլ եղել է հավատքով, և Աբրահամի հավատքի գործերը արդարություն են համարվում:

«Աբրահամ՝ մեր հայրը՝ գործերով չարդարացա՞ւ, երբ իր որդին՝ Իսահակը մատուցանեց զոհասեղանին վրայ: Կը տեսնե՞ս թէ հաւատքը գործակից եղավ անոր գործերուն, ու գործերով հաւատքը կատարեալ եղավ, եւ իրագործուեցաւ Գիրքին խօսքը՝ որ կ'ըսէ. «Աբրահամ հաւատաց Աստուծոյ, ու ատիկա արդարութիւն սեպուեցաւ անոր, եւ ինք Աստուծոյ բարեկամ կոչուեցաւ» (Հակոբոս 2:21-23):

Մենք կարող ենք հետևյալ հետևությունն անել. որ նրանք, ովքեր Օրենքի ներքո էին, կարող էին **հավատքով** արդարացված լինել ճիշտ այնպես, ինչպես մենք՝ առանց Օրենքի: Մենք եզրահանգում ենք, որ մարդն արդարանում է հավատքով՝ առանց Օրենքի գործերի. *«Քանի որ մէկ Աստուած կայ, որ թլպատութիւնը կ'արդարացնէ հաւատքով, նաեւ անթլպատութիւնը՝ նոյն հաւատքով: Ուստի մենք կ'ոչնչացնե՞նք Օրէնքը հաւատքով: Ամենեւին. նոյնիսկ կը հաստատե՞նք Օրէնքը» (Հոովմեացիս 3:28-31):*

Ես այս գլուխն ավարտում եմ կրկին պնդելով, որ **մեղքն** է խնդիրը, այլ ոչ Օրենքը, և որ Հիսուսը եկավ մեղքի հետ հաշվեհարդար տեսնելու ու Օրենքը հաստատելու: Աստված հաշվեհարդար տեսավ մեղքի խնդրի հետ, որպեսզի այն այլևս որևէ ուժ չունենա գործածելու Օրենքը մեզ դատապարտելու համար: Ուրեմն, Օրենքը պետք է մեր հաճույքը լինի, և մենք պետք է դրա շուրջ խորհենք օր ու գիշեր՝ ինչպես Դավիթ թագավորը. *«Մրչափ կը սիրեմ քու Օրէնքդ. ա՛ն է ամէն օր իմ խոկումս» (Սաղմոս 119:97):*



ԳԼՈՒԽ 2

ԻՆՃՈՒՐ համար մահացավ Յիսուսը

Ահա՛ Աստուծոյ Գառը՝ որ կը քաւէ աշխարհի մեղքը:

Հովհաննէս 1:29

Մահուան խայթոցը մեղքն է, ու մեղքին դորութիւնը՝ Օրէնքը:

Ա. Կորնթացիներին 15:56

Նախորդ գլխում մենք տեսանք, որ շնորհի առջև հայտնված խնդիրը ոչ թե Օրենքն է, այլ մեղքը, որը գործածում է Օրենքը մեզ՝ Աստծու առաջ մեղադրելու համար: Այժմ ցանկանում եմ ցույց տալ, որ Յիսուսը խաչի վրա մահացավ ոչ թե **մեղքերին** թողութուն տալու, այլ հենց **մեղքը հեռացնելու** համար:

Ներող Աստված

Կարծել, թե Աստված իրականում խաչից առաջ մեղքերին թողութուն չէր տվել, սխալ է: Աստված մեղքերին թողութուն էր տալիս ու քավության ուղիներ ստեղծում անգամ Ծննդոց գրքից ի վեր: Մեղքերի քավության համար միայն մի ուղի կա, այն է՝ արյամբ: *«Օրէնքին համաձայն՝ գրեթէ ամէն բան կը մաքրուի արիւնով. եւ առանց արիւն թափելու՝ ներում չ'ըլլար»* (Եբրայեցիս 9:22): Արյան զոհաբերությունները միշտ էլ քավել են մեղքը անհատական կամ ազգային մակարդակի վրա: Տարին մեկ անգամ քահանայապետը զոհաբերություն ու քավություն էր

կատարում Իսրայելի ողջ ժողովրդի համար: *«Ասիկա ձեզի յաւիտենական կանոն թող ըլլայ, տարին անգամ մը քաւութիւն ընելու Իսրայելի որդիներուն համար - իրենց բոլոր մեղքերուն համար» (Ղեւտացոց 16:34):* *«...որովհետեւ մարմինն կեանքը արիւնին մէջ է, եւ ես ձեզի տուի զայն՝ որպէսզի զոհասեղանին վրայ ձեր անձերուն համար քաւութիւն ընէք. արդարեւ արիւնն է անձին համար քաւութիւն ընողը» (Ղեւտացոց 17:11):*

Քավութիւնն՝ հովանի, ծածկոց

Քավութիւնն Աստվածաշնչում նշանակում է հովանի, ծածկոց, բայց նաև ի նկատի ունի գտում, հաշտեցում, ներում, մաքրում: Բայց ես Աստվածաշնչում որևէ տեղ չեմ կարող գտնել, երբ քավութիւնը նշանակում է փոխարինում: «Յիսուսի փոխարինող քավիչ մահվան» դոկտրինան եկեղեցի է սողոսկել ու ընդունելի դարձել գրեթէ տիեզերականորեն: Ես այս ուսմունքը չեմ կարողանում գտնել Նոր կտակարանում:

Եթէ Յիսուսն իմ փոխարինողն է, ապա նա պետք է իմ տեղը, իմ փոխարեն կանգնի: Իմ արժանի պատիժը կրակի լճում հավիտենական անեծքն է, բայց Աստվածաշունչը չի ասում, թէ Յիսուսը գնաց կրակի լիճն ինձ փրկելու համար: Եթէ նա իմ փոխարեն էր, ապա նա պետք է որ գնար այնտեղ: Իր մահվանից *հետո նա քարոզեց քանտում եղած հոգիներին* (մեռյալների վայրում, Ա Պետրոս 3:19-20), բայց դրանցից և ոչ մեկը դեռ կրակի լճում չէ, քանզի միայն ահեղ սպիտակ գահի մոտ դատաստանից հետո է, որ մարդիկ դատապարտվում են այդտեղ գնալուն: Անգամ անհնազանդ հրեշտակներն ու դևերն են սպասում դատաստանին ու զատված են մինչ այդ օրը¹:

Յիսուսը վճարեց այն գինը, որ Աստված պահանջում էր մեղքը հեռացնելու համար: Սա ազատագրութիւնն է, ետ գնելը, և այն ամենը, ինչ պահանջվում էր, ճիշտ գինը վճարելն էր, այն է՝ կատարյալ, հնազանդ Ադամի արյունը: Յիսուսը վճարեց այդ գինը:

Խաչից առաջ ցուլերի ու այծերի արյունն էր վճարում մեղքերի թողութայան գինը, բայց դա ժամանակավոր թողություն էր, այն է՝ մինչ մենք նորից մեղք կգործեինք, ուրեմն այդ առումով այն բավարարող չէր: Պողոս առաքյալն ասում է, որ միշտ էլ գոյություն ունի մեղքի հիշատակում նախքան Քրիստոսի կատարյալ զոհաբերությունը²: Աստվածաշունչը չի ասում, թե կենդանիների արյունը չի կարող մեղքերին թողություն տալ, այլ այն ասում է, թե այդ արյունը չի կարող **մեղքը հեռացնել**, ինչն ամենևին տարբեր է:

Մենք կարող ենք ասել, որ արյուն թափելով միշտ էլ հնարավոր է եղել մեղքերի թողությունը, ուրեմն Հիսուսը պետք է ավելին աներ, քան մեղքերը թողնելը, որպեսզի կատարյալ զոհաբերություն լիներ: Նա պետք է, ըստ Էության, վերցներ մեղքը և ընդմիշտ հեռացներ այն:

Առաջին և երկրորդ Ադամը

Պողոս առաքյալն ասաց, որ առաջին Ադամն անհնազանդության միջոցով **բուրբ** մարդկանց մեղսավոր դարձրեց: Ողջ մարդկությունը ծնվել է որպես մեղսավոր՝ Ադամի պատճառով: Մենք բնականորեն ենք մեղք գործում, որովհետև մենք այդպես ենք ծնվել Ադամից: Պողոս առաքյալը նաև ասում է, որ մի մարդու հնազանդությամբ, այն է երկրորդ Ադամի, **ողջ աշխարհը դարձավ արդար**, որովհետև Հիսուսը, ըստ Էության, չեղյալ համարեց այն ամենը, ինչ Ադամն էր արել ու հեռացրեց աշխարհի մեղքը: *«Հետևեալ օրը Յովհաննէս տեսաւ Յիսուսը՝ որ իրեն կու գար, եւ ըսաւ. «Ահա՛ Աստուծոյ Գառը՝ որ կը քաւէ աշխարհի մեղքը» (Յովհաննէս 1:29)*: Ուշադրություն դարձրեք այն բանին, որ նա չի ասում «մեղքերը», այլ «աշխարհի մեղքը»: Հիսուսը հաշիվները պարզեց արմատների հետ, և մեղքն այլևս չի իշխում (Հռովմեացիս 6:14): *«...այլապէս, պէտք էր որ յաճախ չարչարուէր՝ աշխարհի հիմնադրութենէն ի վեր: Բայց հիմա, դարերու վախճանին, մէկ անգամ երեւցաւ՝ ջնջելու համար մեղքը ինքզինք զոհելով» (Եբրայեցիս 9:26)*:

Այժմ **ողջ մարդկությունն** արդար է: Մեղքն այլևս չի դատապարտում մարդուն կրակի լճին, որը պատրաստվել էր մարդու, այլ ոչ սատանայի ու իր հրեշտակների համար: Բազմություններն իրենց վախճանը կունենան կրակի այս լճում, բայց ոչ մեղքի պատճառով, քանզի շնորհքը կարող է և արդեն ծածկել է ողջ մեղքը խաչի վրա: Ապստամբությունն է մարդկանց կրակի լիճն ուղարկելու, այլ ոչ մեղքը: Միակ բանը, որ մարդուն նզովում է, ըմբոստ մերժումն է ընդունելու այն անվճար ընծան, որն արդեն վճարվել է ողջ աշխարհի ազատագրման համար:

Գոռոզությունը, որ մարդուն կուրացնում է, պիտի մոլորեցնի միլիոնավոր մարդկանց՝ մերժելու այս անվճար ընծան, որի համար արդեն լիովին վճարվել է: *«Քանի որ եթէ մէկ մարդու յանցանքով՝ մահը թագաւորեց այդ մէկով, ո՛րչափ աւելի անոնք՝ որ կը ստանան շնորհքի ու արդարութեան պարգեւին առատութիւնը, կեանքի մէջ պիտի թագաւորեն միակ Յիսուս Քրիստոսի միջոցով: Ուրեմն, ինչպէս բոլոր մարդոց դատապարտութեան վճիռ տրուեցաւ մէկին յանցանքով, այնպէս ալ բոլոր մարդոց կեանք տուող արդարութիւն շնորհուեցաւ մէկին արդարութեամբ»* (Հռովմեացիս 5:17-19):

Խղճմտանքից ազատ

Մեկ այլ բան, որ խաչը կատարեց, մեզ խղճի զգացողությունից ազատելն էր, այսինքն բարու ու չարի գիտենալու ծառից: Հավատացած եմ, որ բարոյականության ծառը այն ծառն էր, որին Հիսուսը գամվեց, և մենք այժմ ազատ, չդատապարդված կյանք ունենք: Մենք ազատված ենք կենաց ծառից սնվելու համար: «Առաջին խորանը» նախատիպն էր ներկա ժամանակվա համար: *«Անոր մէջ կը մատուցանուէին ընծաներ ու զոհեր, որոնք չէին կրնար կատարեալ ընել պաշտամունք կատարողը՝ խղճմտանքին հանդէպ. ...ա՛լ ո՛րչափ աւելի Քրիստոսի արիւնը, որ յաւիտենական Հոգիին միջոցով մատուցանեց ինքզինք Աստուծոյ՝ իբր*

անարատ զոհ, պիտի մաքրէ ձեր խղճմտանքը մեռած գործերէն՝ պաշտելու համար ապրող Աստուածը» (Եբրայեցիս 9:9,14):

Ինչու եմ արդյոք ես կարևոր համարում հասկանալն այն, որ աշխարհի մեղքը հեռացվել է: Դե, ես ցույց եմ տվել, որ խնդիրն Օրենքը չէ, այլ մեղքը: Մեղքն օգտագործում է օրենքը՝ ինձ դատապարտելու համար: Ուրեմն, եթե մեղքի հետ հաշիվները պարզված են, ապա Օրենքը որևէ բան չի կարող անել քրիստոնյային դատապարտելու համար: Ես արդար եմ դառնում, չնայած նրան, որ ես դեռ մեղք եմ գործում, որովհետև ինձ դատապարտելու միջոցները հեռացվել են, այսինքն ոչ թե Օրենքի՝ այլ մեղքի հեռացումը: Օրենքն այժմ կարող է իմ ընկերը դառնալ, այլ ոչ թշնամին: *Ես ազատված եմ Օրենքի անեծքից:* Օրենքի անեծքն Օրենքը չէ: Դա Օրենքը խախտելու հետևանքներն են, այլ ոչ Օրենքն ինքնին:

Ամեն բան արտոնված է

Պողոս առաքյալն ասում է, որ *ամեն բան արտոնված է*, որովհետև նա չի կարող դատապարտված լինել: Ծնորհի ներքո շատ մեղսավոր բաներ *օգտակար* չեն, չնայած նրան, որ դրանք մեր հավիտենական ճակատագրի վրա որևէ ազդեցություն չեն ունենում: Ես զգում եմ, որ փոքրաթիվ քրիստոնյաներ են սա ամբողջությամբ հասկանում և իրականում իրենց խղճմտանքից ազատ չեն: Նրանք դեռ շարունակում են ուտել բարի կամ չար լինելու ծառից: Եթե մենք շնորհ ունենք, ուրեմն մենք պետք է դադարենք ուտել բարին ու չարը գիտենալու ծառից ու սկսենք ուտել կենաց ծառից, որին այժմ մոտենալու հնարավորություն ունենք մենք: Անկարելի է ուտել երկու ծառից միաժամանակ: Պողոս առաքյալն ասում է, որ մենք *անարատ ու անմեղադրելի ենք նրա առջև* շնորհքով: Այսպիսի պնդումներից ելնելով էլ մենք որևէ արդարացում չունենք Քրիստոսով կատարյալ ազատ չլինելու:

Լշումներ

1. *Բ Պետրոս 2:4, Հուդա 6, Մատթեոս 8:29:*
2. *Տես էրալյեցիս 9 և 10:*



ԳԼՈՒԽ 3

Օրենքը.

Նզովք և օրհնանք

...և այն պատուիրանը՝ որ կեանքի համար էր, նոյնը ինձի մահուան համար եղաւ: Որովհետեւ մեղքը՝ պատուիրանէն առիթ առնելով՝ խաբեց զիս, և սպաննեց անով: Հետեւաբար, Օրէնքը սուրբ է, ու պատուիրանը՝ սուրբ, արդար և բարի: Ուրեմն ինչ որ բարի է՝ մա՞հ պատճառեց ինձի: Ամենեւին: Հապա մեղքն էր որ մահ իրագործեց իմ մէջս՝ բարիին միջոցով, որպէսզի մեղքը գերազանցօրեն մեղաւոր երեւնայ պատուիրանին միջոցով:

Հռովմեացիս 7:10-13

Հապա այդ օրերէն ետք՝ Իսրայէլի տան հետ կնքելիք ուխտս սա՛ է,- կը պատգամէ Տէրը.- Իմ օրէնքս անոնց սիրտին վրայ պիտի գրեմ. Ես անոնց Աստուածը պիտի ըլլամ, անոնք ալ իմ ժողովուրդս պիտի ըլլան:

Երեմիա 31:33

Շատ քրիստոնյաներ ցանկանում են ավերել Օրենքն այժմ, երբ նրանք շնորհն ունեն: Նրանք չեն հասկանում Օրենքն ու, հետևաբար, չգիտեն, թե ինչպես պետք է այն պահել: Հիսուսն ասաց, որ նա իրականում եկավ օրենքն իրագործելու, և 4-րդ գլխում մենք կտեսնենք,

թե որքան հեշտ կլինի, եթե մենք այժմ հասկանանք պահանջները. որ իրական խնդրի՝ մեղքի հետ, հաշիվները պարզված են:

Մեռած տա՞ռը, թե՞ հոգին

Խնդիրն առաջանում է, երբ մենք խոսքի մեռած տառը գործածում ենք որպես «վերջնական տեքստ»: Օրինակ Տասը պատվիրաններն ասում են. «Մի՛ սպանիր»: Եթե մենք վերցնենք մեռած տառը, ապա այս պնդումը վերջնական է ու մեկնաբանության հնարավորություն չի տալիս, և առաջին հայացքից սա թվում է այն դիտարկելու միակ ապահով ու ճշմարիտ ուղին: Սակայն սա կատարելապես սխալ կլիներ ու ամենևին էլ հաշվի չէր առնի Օրենքի հիմքում ընկած հոգին: Այն կնաշանակեր, որ ես չեմ կարող սպանել ուտելու կամ էլ Աստծուն զոհաբերելու համար, չեմ կարող սպանել բակտերիաները, վարակիչ հիվանդություն կրող ճանճին, մուլախոտը, գայլին՝ ոչխարներիս պաշտպանելու նպատակով, և այսպես շարունակ: Իսրայելը չէր կարողանա հնազանդվել Աստծու ցուցումներին և ավերել Քանանի երկրում ապրող բոլորին՝ տղամարդ, կին, երեխա, թե անասուն: Նրանք չէին կարողանա ի կատար ածել Աստծու արդարությունն ու մարդուն քարերով սպանել միասեռականության կամ շնանալու համար:

Օրենքը հստակորեն սահմանելը

Ելից գրքի 20-րդ գլխում բերված Տասը պատվիրանների մի քանի տողից հետո Հին կտակարանի ամբողջական գրքեր հստակորեն սահմանում են անհատական պնդումներն, ինչպիսիք են «Մի՛ սպանիր» կամ «Մի՛ շնանա» ցույց տալով, որ հոգին նույնպես մասնակից է. և որքան ավելի է Օրենքը մեզ բացահայտ դառնում, մենք հայտնաբերում ենք, որ նրանում սերն ու սիրտն են սկսում հանդես գալ աճման կարգով: Աստծուն միշտ էլ հետաքրքրում են իր ժողովրդի դրդապատճառներն ու

Նրանց սիրտը: Աստված ոչ թե նայում է այն ամենին, ինչ մենք անում ենք (այն է օրենքը արտաքուստ պահելուն), այլ դա անելու դրդապատճառին, այն է՝ *սրտի ծածուկ մարդուն*: Ահա մի քանի օրինակ, թե ինչպես Աստված հարայելին ցույց տվեց, որ պատվիրաններն ավելի էին, քան մեռած օրենքները:

«Վրէժ մի՛ առներ, եւ ոխ մի՛ պահեր քու ժողովուրդիդ որդիներուն դէմ, հապա սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս» (Ղեւտացոց 19:18): Սա Հին կտակարանի ուսմունք է, որ գալիս է Ղեւտացոց գրքից՝ Օրենքի գրքից: Սերն իրագործում է Օրենքը: Սերն անում է այն, ինչ սերն է անում, և փառք Աստծու, որ այն անում է դա. այլապես Աստված երբեք իր Որդուն չէր զոհաբերի անարժան մեղսավորների համար:

Սիրի՛ր քո տեր Աստծուն

Օրենքի երկրորդ գրքում Աստված հարայելին ասաց, թե ինչ էր նրանցից պահանջում: Դա իր ճամփաներով ընթանալն էր և Օրենքին հնազանդվելը, բայց ոչ մեռած տառին, քանզի այնուհետև նա պատվիրում է սիրել սրտով ու անձով: *«Ուրեմն հիմա, ո՛վ Իսրայել, Տէրը՝ քու Աստուածդ՝ քեզմէ ի՞նչ կը պահանջէ.- միայն Տէրոջմէն՝ քու Աստուծմէդ վախնալ, իր բոլոր ճամբաներէն ընթանալով ու զինք սիրելով. նաեւ Տէրը՝ քու Աստուածդ պաշտել ամբողջ սիրտովդ եւ ամբողջ անձովդ» (Բ Օրինաց 10:12)*: Առանց սիրո մենք միշտ էլ դատարկություն կունենանք, և այս պատճառով էլ Հովհաննեսի հայտնության գրքում Եփեսոսի եկեղեցուն Հիսուսն ասում է, որ մեղանչեն ու վերադառնան իրենց առաջին սիրուն: Նրանց գործերը դարձել էին լեգալիստական: Աստծու ժողովրդի հետ վտանգը միշտ էլ սա է լինում:

Ավելի կարևոր բաները

Նոր կտակարանում Հիսուսը փարիսեցիներին, ովքեր շահագրգռված էին Օրենքի տառը պահպանել, ասում է մի բան, որ նրանց համար պետք է խիստ արմատական պնդում լիներ: Նա ասաց, որ Օրենքի ավելի ծանր, ավելի կարևոր մասերն էին *իրավունքը, կարեկցությունն ու հավատքը*: Որքան տխրահոռչակ է այն, որ հարայելն ու եկեղեցին հաճախ չեն ունեցել Աստծու օրենքի այս սքանչելի հոգևոր հատկանիշները: Կարեկցությունը մեզ հետ է եղել Ադամից ի վեր, իսկ իրավունքը երբեք չի լքել մեզ խաչից հետո: Աստված երբեք չի փոխել իր եռությունը կամ պահանջները: Երկու ուխտ գոյություն ունի, սակայն հավատքով արդարությունը երկուսի համար էլ պայման է: *«Վա՛յ ձեզի, կեղծաւոր՝ դպիրներ ու Փարիսեցիներ, որ կը վճարէք անանուխին, սամիթին ու չամանին տասանորդը, բայց կը թողուք Օրենքին աւելի ծանր բաները՝ իրավունքը, կարեկցութիւնն ու հավատքը. ասո՛նք պէտք է ընէիք, եւ զանոնք չձգէիք» (Մատթեոս 23:23):*

Մեկ այլ սխալ

Մեկ այլ սխալ, որ կատարել է թե՛ հարայելը և թե՛ եկեղեցին. Տասը պատվիրանները արտաքին ցանկապատ դարձնելն է, որ ցույց է տալիս մեզ այն գիծը, որը չպետք է անցնենք: Այսպիսի մտածողության խնդիրն այն է, որ մենք կարող ենք հասնել ընդհուպ մինչև ցանկապատն ու դեռ արդար զգալ: Օրինակ՝ եկեք «ցանկապատ» կառուցենք «Մի՛ սպանիր» պատվիրանի համար: Դե, սա ինձ թույլ է տալիս ատելու հարևանիս, ինձ հետ դանակ ման տալ, որ եթե հանկարծ հանդիպեմ նրան, դանակով խոցեմ նրան ու կիսամեռ վիճակում թողնեմ: Քանի դեռ նա կենդանի է, ես չեմ զանցել այն օրենքը, որ ասում է «Մի՛ սպանիր»: Մեկ այլ պատվիրան ասում է «Մի շնանա»։ ուրեմն այս ցանկապատն ինձ խորամանկության շատ տեղիք է տալիս: Ես կարող եմ հանդիպել իմ կնոջից բացի մեկ այլ կնոջ հետ, կարող եմ

փաղաքշէլ նրան ու նրա կողքին անկողնում պառկել, բայց քանի դեռ ես նրա հետ չեմ կենակցել, ես իրագործել եմ օրենքը, որ ասում է՝ «Մի շնանա»։ Սրանք կարող են հիմար օրինակներ թվալ, բայց սա ընդհանուր մտածելակերպ է, այն է, որ Օրենքն ինձ ցույց է տալիս, թե ինչ է կարելի թույլ տալ առանց մեղավոր լինելու։ Տասը պատվիրանները սահմանվեցին, որովհետև մարդն իր սրտի հետ հաշիվները չէր մաքրում, և ուրեմն, երբ սրտում եղած ատելությունը, որի հետ պետք է անմիջապես հաշիվները պարզել, հանգեցնում է սպանության, այդժամ Աստված պատիժ է պահանջում. կյանքի տեղ կյանք։

Աստված միշտ էլ ցանկացել է, որ մենք սկսենք սրտից, և եթե մենք սրտի հետ մեր հաշիվները պարզենք, ապա արտաքին մեղքը երբեք չի դրսևորվի։ Մենք անգամ կարիք էլ չենք ունենա մտածելու արտաքին օրենքն իրագործելու մասին, եթե մենք կենտրոնանանք սրտի ներքին դրդապատճառների վրա։

Այն պահից ի վեր, ինչ եկեղեցին օրենքներ է հաստատում մարդկանց իրագործել սուրբ լինելու նպատակով, մենք այդժամ շնորհքից անցնում ենք մահվան, քանզի օրենքը տուգանքների ու պատիժների կարիք ունի՝ արդյունավետ լինելու նպատակով։ Մենք կարող ենք պատմությունից տեսնել, որ եկեղեցին մարդկանց խարույկի վրա այրել է հանուն Քրիստոսի ու Աստծու արդար Օրենքին հետևելով։

Աստծու սեփական ժողովուրդը մեջբերում էր Մովսեսի Օրենքն Աստծուն սպանելու նպատակով, երբ նա եկավ մահկանացու մարմնով։ *«Մենք Օրենք մը ունինք, եւ մեր Օրենքին համաձայն՝ պարտաւոր է մեռնիլ...»* (Հովհաննես 19:7)։ Հավատացած եմ, որ եկեղեցում օրինականությունն ու սահմանադրությունները հանգեցնում են մեռյալության ու բացառում են շնորհը։ Նաև հավատացած եմ, որ «Հավատքի պնդումներն» ու դավանանքները լավագույն դեպքում ոչ այլ ինչ են, քան կողմնակալ ուսմունքային պնդումներ։

Նզովքից օրհնանքի

Երբ մենք իրական շնորհ ենք ստանում, այդժամ Օրենքը փոխվում է արտաքին պահպանումից ու նզովքից դեպի մեր սրտերում գրված օրենքի: *«Արդարեւ սա՛ է այն ուխտը՝ որ պիտի հաստատեմ Իսրայելի տան հետ այդ օրերէն ետք,- կ'ըսէ Տէրը.- իմ օրէնքներս պիտի դնեմ անոնց միտքին մէջ, զանոնք պիտի գրեմ անոնց սիրտին վրայ, ու ես պիտի ըլլամ անոնց Աստուածը, անոնք ալ պիտի ըլլան իմ ժողովուրդս»* (Եբրայեցիս 8:10): Ուրեմն, այն իրականում օրհնանք է, չնայած նրան, որ բառերը երբեք չեն փոխվում: Արտաքին օրենքը դաժան ձայնով ասում է. «ՄՈՐԻՍ, ՄԻ ՄՊԱՆԻՐ», իսկ շնորհը մեղմ ու սփոփիչ ձայնով ինձ ասում է. «Մորիս, իմ օրենքները քո սրտում են գրված, և ես քեզանում եմ ապրում, ու դու չես սպանի»: Սա խոստում է դառնում, և ես ասում եմ. «Վա՛հ, շնորհակալ եմ, Տեր, ի՞նչ օրհնանք»: «ՄԻ ԾՆԱՑԻՐ» պնդումից ելնելով շնորհն ինձ կվստահեցնի հետևյալը. «Մորիս, դու այլևս չես շնանա»:

Ես այնքան օրհնված եմ, որորվիեստն Քրիստոսն է իմ մեջ ապրում քրիստոնյա կյանքը, Օրենքն այժմ իմ սրտում է գրված, և ես ազատ եմ ամեն դատապարտումից:

Այս գլուխն ավարտելով բերում եմ երկու սուրբ գրություն, որ հաճախ մեջբերվում է ապացուցելու, թե Օրենքն ավերված է:

Գաղատացիս 3:13

«Քրիստոս փրկանքով գնեց մեզ Օրենքի անէծքէն՝...», հայացք նետելով կարող ենք տեսնել, որ Օրենքի **անէծքն** է վերացվել, տուգանքն ու պատիժը, այլ ոչ հենց Օրենքը:

Յոզովմեացիս 8:2

«...քանի որ կեանքի Հոգին Օրենքը՝ Քրիստոս Յիսուսով ազատեց զիս մեղքի եւ մահուան օրէնքէն»: Կրկին, Պողոս առաքյալը հնարավոր չի, որ ասելիս լինի, թե Օրենքն ավերվել է, քանզի Յիսուսը Լեռան քարոզի ճիշտ այն տողում, որը մենք հիմա դիտարկում ենք, ասում է, որ Օրենքի

անգամ ամենափոքր մասը չի հեռացվի քանի դեռ երկինքն ու երկիրը գոյություն ունեն: Այն, ինչ նա ասում է, հետևյալն է. որովհետև մեղքի ու մահվան հետ հաշիվներն արդեն պարզվել են, մենք ազատված ենք, քանի որ Օրենքը չի կարող կիրառվել առանց մեղքի»:

Չնազանդությունը դժվար չէ

Շատ քրիստոնյաներ ասում են, թե Օրենքը դաժան էր ու որ ոչ ոք չի կարող այն պահել, բայց այս կարգի մտածելակերպը միայն բացահայտում է նրանց սեփական մոլորությունն ու հայտնի դարձնում, թե ինչ է նրանց սրտում: Աստվածաշունչը պարզորոշ կերպով մեզ ցույց է տալիս, որ անհնարին է **չպահել** ողջ Օրենքը, երբ մենք սիրում ենք Աստծուն մեր ողջ սրտով ու սիրում ենք մեր մերձավորին ճիշտ նույն չափ, ինչ ինքներս մեզ: Հաջորդ գլխում ցանկանում եմ ցույց տալ, որ անհնարին է չիրագործել Օրենքը, երբ մենք սիրում ենք:



ԳԼՈՒԽ 4

Յավատք, որ գործում է սիրով

Սիրէ՛ Տէրը՝ քու Աստուածդ՝ ամբողջ սիրտովդ, ամբողջ անձովդ, ամբողջ մտքովդ եւ ամբողջ զօրութեամբդ: Այս է առաջին պատուիրանը: Ու երկրորդը՝ ասոր նման. "Սիրէ՛ ընկերդ քու անձիդ պես":

Մարկոս 12:30-31

Աստուծոյ եւ Հօրը առջեւ՝ մաքուր ու անարատ կրօնասիրութիւնը սա՛ է.- այցելել որբերուն եւ այրիներուն՝ իրենց տառապանքին մէջ, ու ինքզինք անբիծ պահել աշխարհէն:

Հակոբոս 1:27

Արդարեւ Քրիստոս Յիսուսի մէջ եղողին՝ ո՛չ թլպատութիւնը որեւէ ազդեցութիւն ունի, ո՛չ ալ անթլպատութիւնը, հապա հաւատքը՝ որ կը ներգործէ սիրով:

Գաղատացիս 5:6

Աստծու Օրենքը երբեք նպատակ չունէր «լեգալիստական» լինելու: Սրանով ի նկատի ունեմ մի ֆիքսված, անշարժ դիկտատ: Սա հակասական կինչի, եթե մենք չընկալենք այն, որ Հիսուսն ասաց, որ ողջ Օրենքը կարող է ամփոփվել երկու պնդումներում.

- ◆ սիրի՛ր Աստծուն
- ◆ սիրի՛ր մերձավորիդ

«Յիսուս պատասխանեց անոր. «Բոլոր պատուիրաններուն առաջինը սա՛ է. "Մտի՛կ ըրէ, ո՛վ Իսրայէլ. Տէրը՝ մեր Աստուածը՝ միա՛կ Տէրն է: Սիրէ՛ Տէրը՝ քու Աստուածդ՝ ամբողջ սիրտովդ, ամբողջ անձովդ, ամբողջ միտքովդ եւ ամբողջ զորութեամբդ": Ա՛յս է առաջին պատուիրանը: Ու երկրորդը՝ ասոր նման. "Սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս": Ասոնցմէ մեծ ուրիշ պատուիրան չկայ» (Մարկոս 12:29-30):

Պողոս առաքյալը սա պարզորոշ կերպով հաստատում է ու որևէ կասկած չի թողնում այն փաստի մասին, որ **սերը** Օրենքն իրագործելու պատասխանն է: Կարդացեք հետևյալ սուրբ գրությունը դանդաղ ու մարսեք այն, քանզի այն չէր կարող ավելի պարզ կերպով գրված լինել: Մենք պետք է սիրենք Աստծուն ու մեր մերձավորին ինչպես ինքներս մեզ, և այդ ժամանակ մենք կիրագործենք Օրենքն ու այլևս չենք ցանկանա, որ այն վերացվի: Մենք հաճույք կստանանք Օրենքից օր ու գիշեր, ինչպես Դավիթ թագավորը ...

«Ո՛չ մէկ պարտք ունեցէք ոեւե մէկուն, բացի զիրար սիրելէ. որովհետեւ ո՛վ որ կը սիրէ ընկերը՝ գործադրած կ'ըլլայ Օրէնքը: Արդարեւ այն ասուածը. «Շնութիւն մի՛ ըներ, սպանութիւն մի՛ ըներ, գողութիւն մի՛ ըներ, սուտ վկայութիւն մի՛ տար, մի՛ ցանկար», եւ եթէ կայ ուրիշ որեւէ այլ պատուիրան՝ համառօտաբար կը բովանդակուի սա՛ խօսքին մէջ. «Սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս»: Սէրը ո՛չ մէկ չարիք կը գործէ իր ընկերին. ուրեմն սէ՛րն է Օրէնքին գործադրութիւնը»: (Հոովմեացիս 13:8-10)

Հակոբոսն անվանում է սա «արքայական Օրենքը»: Եթե դուք իրագործեք արքայական Օրենքը սուրբ գրությունների ասածի համաձայն. *«Սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս», լա՛ւ կ'ընէք»* (Հակոբոս 2:8):

Անձի գործողությունները, այլ ոչ անձի հավատալիքներն են իրագործում Օրենքը: Այն, ինչին մենք հավատում ենք, միայն միտք է ու մնում է մեր գլխի կամ սրտի մեջ: Սերը չի կարող մեր մտքում կամ մեր մարմնում մնալ, քանզի եթե այն չի արտահայտվում, ապա սեր չի: Սերը, ինչպես հավատքը, պետք է իրենից տարբեր մեկ այլ օբյեկտի նկատմամբ լինի:

Սերը միշտ էլ տալիս է: Այն պասսիվ զգացմունք չէ, և հենց այդ պատճառով էլ շատ քրիստոնյաներ թաքնվում են «էժան շնորհի» ետևում: Շնորհն անվճար է մեզ համար, բայց չափազանց մեծ գին ունի Աստծու համար: Շատ քրիստոնյաներ չեն ցանկանում տալ սիրո պահանջները: Աստված մեր օրինակն է, իսկ նա այնքան սիրեց, որ տվեց. ուրեմն մենք էլ պիտի նույնն անենք:

Չափազանց հեշտ է թվում

Շատ քրիստոնյաներ կարող են ասել, թե «պարզապես սիրել, ու ամեն բան լավ կլինի» չափից ավելի պարզունակ է հնչում: Այո, ճշմարիտ է, սերն իրագործում է Աստծու կողմից պահանջվող ցանկացած բան: Սակայն մի խնդիր կա: Գոյություն ունի սիրելու գին: Աստծու ողջ տիեզերքում գոյություն չունի ավելի արժեքավոր մի բան: Սերը Աստծուն արժեցավ իր միածին որդուն, թագավորներ են հրաժարվել գահից հանուն սիրո, մայրեր են մահացել մեքենաների տակ փորձելով փրկել իրենց երեխաներից մեկին ճակատագրական պատահարից:

Աստծուն ու մեր մերձավորին խոսքերով սիրելը հեշտ է, բայց նրանց սրտով սիրելն ամենևին էլ հեշտ չէ, և մենք հնարավոր չէ, որ մեր սեփական ուժերով կարողանանք դա անել: Իսրայելի ժողովրդի համար սա արտակարգ դժար էր, և նրանք կրկին ու կրկին տանուլ տվեցին: Եկեղեցին պատմության ընթացքում շատ ավելի հեշտ է համարել հարստություններ ու սեփականությունն դիզելը, քան այն բաժանելը այլ մարդկանց կարիքները հոգալու համար, չնայած Գործք Առաքելոցում բերված օրինակների: *«Քանի այս ժողովուրդը իր բերանով կը մօտենայ ինձի, միայն իր շրթունքով կը պատուէ զիս, բայց իրենց սիրտը ինձմէ հեռացած է, եւ ինձմէ ունեցած իրենց վախը մարդոց սորվեցուցած պատուիրան մըն է» (Եսայիա 29:13):*

Ահա և խնդիրը: Ո՞վ է ցանկանում մահանալ սեփական եսի նկատմամբ, որպեսզի մեկ ուրիշը կարողանա նրանց տիրանալ, անգամ

Եթե այդ մեկ ուրիշը հենց ինքն Աստված է: Նա չի կարող սիրել մեզ մեր միջոցով, երբ մենք փորձում ենք սիրել մեր իսկ **եսի** միջոցով: Թե որքան ենք մենք սիրում Աստծուն, չի համապատասխանում նրան, թե որքան ենք մենք կարծում կամ ասում, թե սիրում ենք նրան: Սա մեր կանանց ու երեխաներին սիրելու չափը չէ: Սա այն է, թե որքան ենք մենք սիրում մեր թշնամիներին: Սա է միակ ճշմարիտ ու հուսալի չափանիշը, սակայն, իհարկե, ամենատհաճը մեր Եսի կյանքի համար: Բարի սամարացու առակը (Ղուկաս 10:30) հստակորեն ցույց է տալիս մեզ, որ մեր թշնամին իրականում այն «մերձավորն» է, որին մենք պետք է ակնհայտորեն սիրենք: Այս առակը բացահայտում է մեզ այն փաստի նկատմամբ, որ մենք բոլորս էլ սիրում ենք ինքներս մեզ ավելին, քան մենք հաճախ պատրաստ ենք ընդունելու:

Հարուստ և ազահ

Երիտասարդ, հարուստ կառավարիչի օրինակն այս դեպքում կլինի ճիշտ տեղին: Հավատացած եմ, որ նա իրոք ցանկանում էր անել այն, ինչ Օրենքը պահանջում էր: Նա համոզված էր, որ իրագործել էր Օրենքի արտաքին կատարումը, բայց երբ Հիսուսը խոսեց մերձավորին այնպես սիրելու, ինչպես սեփական անձը, նա տխուր հեռացավ: Եթե նա սիրեր աղքատներին, նա կցանկանար կիսել իր մեծ հարստությունը նրանց հետ, բայց նա անգամ որևէ քայլ չկատարեց նրանց իր հարստության գոնե մի փոքր մասն առաջարկելու: Նա բացահայտվել էր: Նրա խոսքը լավն էր, բայց նրա սիրտը խաբուսիկ էր ու ազահ: Նա ծառայում էր մամոնային, չնայած նրան, որ հավատում էր, թե ծառայում էր Աստծուն:

Արդյոք քանի-քանի քրիստոնյաներ են այսօր անկեղծորեն հավատում, թե ծառայում են Աստծուն, երբ իրականում, իրենց եասեր կենսակերպով նրանք, ի վերջո, ապացուցում են, որ ծառայում են մամոնային: Պողոս առաքյալը բացահայտեց գաղատացիներին իրենց, այսպես կոչված, ազատության համար, երբ նրանք այն օգտագործում էին որպես միմիանց չսիրելու ծածկոց: *«Որովհետև դուք ազատութեան»*

կանչուած էք, եղբայրներ՝ միայն թէ ձեր ազատութիւնը մարմինի ցանկութիւններու առիթ թող չըլլայ, հապա սիրով իրարու ծառայեցէք: Քանի որ ամբողջ Օրէնքը սա՛ մէկ խօսքին մէջ կը գործադրուի. «Սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս»: Բայց եթէ զիրար խածնեք եւ լափեք, զգուշացէ՛ք որ իրարմէ չսպառիք» (Գաղատացիս 5:13-15):

Իսրայելը տանուլ տվեց այստեղ

Իսրայելը թշվառաբար տանուլ տվեց Աստծու Օրենքի ոգին հասկանալու գործում: Պողոս առաքյալն ինքն իր մասին ասաց, որ ոչ թե մեծ եռանդի պակաս ունէր, այլ իր հասկացողությունն էր մթազնած: Եթե Իսրայելը սիրէր Աստծուն ու իր մերձավորներին, ինչպես ինքն իրեն, ապա նրանք իրագործած կլինէին Օրենքի պահանջները: Արդյոք որն էր պակասող բաղադրամասը: Հավատքը, որովհետև թշնամիներիդ սիրելու, լրացուցիչ մղոն քայլելու, մյուս այտոյ շրջելու համար հավատքի կարիք ունես: Միայն հիմարը, կամ էլ իրական քրիստոնյան այս ամենը կանի: *«...իսկ Իսրայել՝ որ հետամուտ էր արդարութեան Օրէնքին՝ չհասաւ արդարութեան Օրէնքին: Ինչու՞. որովհետև ուզեց արդարանալ ո՛չ թէ հաւատքով, հապա որպէս թէ Օրէնքին գործերով» (Հռովմեացիս 9:31-32):*

Պողոս առաքյալն ասում է, որ Իսրայելը կարող էր իրագործել Օրենքը, եթե նրանք անէին դա հավատքով, այլ ոչ գործերով: Արդարացումը կամ արդարությունը միշտ էլ հավատքով է՝ թե՛ գործերով և թե՛ առանց գործերի: Պողոս առաքյալը Գաղատայի եկեղեցուն նաև հիշեցրեց հետևյալը. *«Արդարեւ Քրիստոս Յիսուսի մէջ եղողին՝ ո՛չ թլպատութիւնը որեւէ ազդեցութիւն ունի, ո՛չ ալ անթլպատութիւնը, հապա հաւատքը՝ որ կը ներգործէ սիրով» (Գաղատացիս 5:6):*

Երբ մենք ունենք բոլոր ճիշտ դոկտրիններն ու բարոյական արժեքները, բայց չենք կատարում սիրո արարքները, ուրեմն մենք հավատքի պակաս ունենք: Իրականում մենք չենք հավատում, այլ հավատում ենք, թե հավատում ենք, և մեր սրտերը դառնում են կարծր

ու գոռոզ: Եկեք Եփեսոսի եկեղեցու նման չլինեք, որը կատարում էր արարքները, բայց մոռացել էի իր առաջին սիրուն: Եկեք սիրենք Աստծուն մեր ողջ եռթյամբ և սիրենք մեր մերձավորներին, ինչպես ինքներս մեզ, և մենք *կգերազանցենք դպիրների ու փարիսեցիների արդարությունն* ու կիրագործենք Օրենքի ոգին, այլ ոչ թե պարզապես տառը:



ԳԼՈՒԽ 5

Ասելն ու անելը

Որովհետև ճշմարտապես կը յայտատարեմ ձեզի. "Մինչև որ երկինքն ու երկիրը անցնին, Օրենքէն յովտ մը կամ նշանագիր մը պիտի չանցնի՝ մինչև որ բոլորն ալ կատարուին": Ուրեմն ո՛վ որ այս ամենափոքր պարուիրաններէն մէկը լուծէ եւ մարդոց ա՛յնպէս սորվեցնէ, անիկա ամենափոքր պիտի կոչուի երկինքի թագաւորութեան մէջ. բայց ո՛վ որ գործադրէ ու սորվեցնէ, անիկա մեծ պիտի կոչուի երկինքի թագաւորութեան մէջ: Որովհետև կը յայտարարեմ ձեզի. "Եթէ ձեր արդարութիւնը չգերազանցէ դպիրներու եւ Փարիսեցիներու արդարութիւնը, բնա՛վ պիտի չմտնէք երկինքի թագաւորութիւնը":

Մատթեոս 5:18-20

Ինծի՛ նմանեցէք, ինչպէս ես ալ՝ Քրիստոսի:

Ա Կորնթացիս 11:1

Ոչ որ չի կարող մեկին տանել ավելի հեռու, քան ինքն է հոժար զնալ:

Թոմաս Ա Կեմպիս

Եթե Զիսուսը չէր եկել Օրենքն ավերելու, այլ այն հաստատելու համար, ուրեմն արդյոք այն պետք է տևական լինի ընդմիշտ: Արդյոք այն հավիտենական է: Սրանք լավ հարցեր են, և Զիսուսը դրանց բոլորին

Էլ մեզ համար պատասխանում է: Օրենքը պիտի կանգուն մնա *մինչև երկինքն ու երկիրն անցնեն*: Սա հետաքրքիր հայտնություն է, քանզի մենք սրանից կարող ենք որոշ փաստել հաստատել:

- ❖ Երբ Քրիստոսը թագավորի հազար տարով մենք դեռ պիտի Օրենքն ունենանք, քանզի երկիրը դեռ կանգուն կլինի: Հիսուսը պիտի *թագավորի երկաթե գավազանով*: Վստահաբար, սա ենթադրում է կայուն կանոններին հետևող խիստ կարգուկանոն:
- ❖ Նոր երկինքն ու նոր երկիրը Աստծու բարոյական Օրենքը չեն ունենա, քանի որ երկիրն ավերված կլինի:
- ❖ Նոր երկնքում ու նոր երկրում անհնար կլինի մեղք գործել, քանի որ այն միջոցը, որ մեղքը կիրառում է (Օրենքը) այլևս այնտեղ չի լինի, իսկ ուր օրենք գոյություն չունի, չի կարող որևէ մեղք գործվել:

Կրակով ավերված

Հովհաննեսի հայտնության գիրքն ասում է մեզ, թե երբ երկինքն ու երկիրը պիտի անցնի. այն բանից հետո, երբ Սատանան նետվել է կրակի լիճը: Աստված դատաստանի է ելնում մեծ ճերմակ գահի վրա, և երկինքն ու երկիրն անցնում է նրա ներկայությամբ: Նրա աչքերը պիտի կրակի բոցերի նման լինեն: Պետրոս առաքյալն ասում է, որ *տարրերը բռնկվելով պիտի տարանջատվեն*: Ես չեմ հավատում, թե երկիրը կավերվի Երրորդ համաշխարհային պատերազմով: Աստված աշխարհը վերապահել է անձամբ այն կրակով ավերելու համար, ճիշտ այնպես, ինչպես նա ջրով ավերեց Նոյի օրոք: Նա չի կիրառի մարդկային հայտնագործությունները դա անելու համար: Նա պիտի ստանա այն ավերելու ողջ փառքը: Մեր Աստվածը կլանող կրակ է¹:

«Որովհետեւ կը յայտարարեմ ձեզի. "Եթէ ձեր արդարութիւնը չգերազանցէ դպիրներու եւ Փարիսեցիներու արդարութիւնը, բնա՛ւ պիտի չմտնէք երկինքի թագաւորութիւնը» (Մատթեոս 5:20):

Նախորդ գլխում ես ասացի, որ Օրենքն իրագործելու բանալին հավատքն է, որ ներգործում է սիրով: Սա պետք է օգնի մեզ հասկանալ Հիսուսի վերոնշյալ պնդումները: Նա փարիսեցիների կենսակերպը համեմատում էր իրական օրինապահության հետ: Փարիսեցիներն, անկասկած, ջանասիրաբար պահպանում էին Օրենքի **գործերը**: Նրանք ծոմ էին պահում, աղոթում, ողորմություն տալիս, տասանորդ վճարում և ակինսայտորեն արտաքուստ չէին շնանում կամ էլ սպանում: Դժբախտաբար, նրանք զանցում էին ճշմարիտ Օրենքը բոլոր տեսակետներից ու մարդկանց ուսուցանում անելու միևնույնը, քանզի նրանք այս ամենը չէին կատարում ելնելով ճիշտ դրդապատճառից, այն է՝ սիրով, և նրանք իրենց բարի գործերը հավատքով չէին կատարում:

Այս գրքի երկրորդ մասում դիտարկվում են այն վեցը համեմատությունները, որ Հիսուսը բերեց Օրենքն արտաքուստ պահպանելու ու այն ներքին դրդապատճառներով իրագործելու միջև:

Մեկ այլ սկզբունք

«Ուրեմն ո՛վ որ այս ամենափոքր պարուիրաններէն մէկը լուծէ եւ մարդոց ա՛յնպէս սորվեցնէ, անիկա ամենափոքր պիտի կոչուի երկինքի թագաւորութեան մէջ. բայց ո՛վ որ գործադրէ ու սորվեցնէ, անիկա մեծ պիտի կոչուի երկինքի թագաւորութեան մէջ» (Մատթեոս 5:19):

Այստեղ Հիսուսը ներառում է մեկ այլ սկզբունք ևս, այն է՝ օրինակով սովորեցնելը, կամ սովորեցնել՝ անելով: Փարիսեցիները նույնպես սովորեցնում էին իրենց արարքներով, սակայն դա սխալ օրինակն էր: Նրանք ուսուցանում էին Մովսեսի ճշմարիտ խոսքը, բայց իրենց կյանքն Աստծու աղավաղված կերպարն էր ցուցադրում: Նրանք ցուցաբերում էին գոռոզություն և ազահություն, կեղծավորություն և

դիրքի որոնում, ատելություն ու մարդկանց գովասանքի նկատմամբ սեր²: Նրանք Օրենքը չէին պահում հավատքով, որ սիրով է ներգործում:

Ա Կորնթացիս 13-ի առաջին երեք համարները ցանկացած ազնիվ քրիստոնյայի համար հանդիսանում են այս դրդապատճառները քննելու մարտահրավեր: Պողոսն ասում է, որ եթե մեր դրդապատճառը սերը չէ, ապա անգամ եթե մենք գործերն անենք, ներառյալ Յոգու շնորհները, ապա *մենք*

- *կլինենք հնչող պղնձի կամ դողանջող ծնծղայի պես*, այսինքն, մենք Աստծուն կնյարդայնացնենք (տող 1),
- *ոչինչ ենք* (տող 2),
- *որևէ օգուտ չենք ունենա*, երբ կանգնենք Քրիստոսի դատաստանի առջև (տող 3):

Միակ ուսուցումը, որ ընդունելի է Աստծու կողմից այն է, որին հետևում է սիրո վրա հիմնված կենսակերպ: Գոյություն չունի Աստծու խոսքն իրագործելու մեկ այլ ուղի, քան սիրո պրակտիկ ցուցաբերումը: Մեր արդարությունը պետք է գերազանցի մեր դոկտրինաներն ու հավատալիքները: Ինչպես Թոմաս Ա Կեմպիսն է ասել. «Ի՞նչ պիտի շահեմ, եթե գիտենամ Երրորդության բոլոր առեղծվածները, բայց իմ կենսակերպով տիպա՞ լինեմ Երրորդությանը»:

Չիսուսի պրակտիկ կենսակերպը

Չիսուսն ապրում էր իր աշակերտների հետ: Նա նրանց հետ չէր հանդիպում օրական երկու անգամ դասախոսությունների համար, որպեսզի նրանք կարողանային թուփակի պես կրկնել իր խոսքերը: Սա է իրական ուսուցումը, և եկեղեցին կարիք ունի վերահայտնաբերելու դաստիարակության այս առաքելական մեթոդը, եթե մենք ցանկանում ենք պատրաստել Աստծու մարդկանց, այլ ոչ պարզապես եկեղեցական դավանանքի մարդկանց: Չիսուսի աշակերտները տեսնում էին նրա կենսակերպը, և Չովհաննեսն առաքյալն ավելի ուշ ասում է. *«Կեանքի*

Նօսքին մասին - որ սկիզբէն էր, որ մենք լսեցինք, որ մեր աչքերով տեսանք, որ դիտեցինք ու մեր ձեռքերը շօշափեցին...»:

Պողոսն ու մյուս առաքյալները նույնպես ուսուցանում էին սովորեցնելու ու անելու այս սկզբունքը: Կարդացեք, թե ինչ է ասում Պողոս առաքյալը Տիմոթեոսին՝ երիտասարդ հոգևոր սպասավորին: Նա իր ուսմունքը կենսակերպից չի գատում.

«Իսկ դուն հետեւեցար իմ վարդապետութեանս, ապրելակերպիս, առաջադրութեանս, հաւատքիս, համբերատարութեանս, սիրոյս, համբերութեանս» (Բ Տիմոթեոս 3:10):

«Որովհետեւ՝ նոյնիսկ եթէ դուք տասը հազար վարժապետներ ունենաք Քրիստոսով, ո՛չ թէ շատ հայրեր ունիք. քանի որ Քրիստոս Յիսուսով ե՛ս ծնայ ձեզ՝ աւետարանին միջոցով: Ուրեմն կ'աղաչե՛մ ձեզի, նմանեցէ՛ք ինձի» (Ա Կորնթացիս 4:15-16):

«Ինձի՛ նմանեցէք, ինչպէս ես ալ՝ Քրիստոսի» (Ա Կորնթացիս 11:1):

Նրանք Հիսուսի մասին ասացին. «Ի՞նչ տարօրինակ նոր ուսուցում է սա»: Ոչ թե նրա խոսքերը, այլ գործողությունները: Այլ կերպ ասած՝ նա իր ուսուցումները ցուցադրեց սիրով: *«Բոլորը այլայլեցան, այնքան՝ որ կը հարցնէին իրարու. «Այս ի՞նչ է. ի՞նչ նոր ուսուցում է ասիկա, որովհետեւ անմաքուր ոգիներո՞ւն ալ կը հրամայէ իշխանութեամբ, ու կը հնազանդին իրեն» (Մարկոս 1:27):*

Նոր ուսուցում

Թույլ տվեք գրքի այս մասն ավարտել այն պնդմամբ, որ եթե **մեր դրդապատճառներն** ու ցանկություններն արմատապես չփոխվեն, ապա մենք կամ այս, կամ էլ այն ճամբարում կլինենք. քանզի մենք կամ կվախենանք հավատքով բարի գործերից ու ոչինչ չենք անի, կամ էլ մենք կանենք «գործերը» սխալ դրդապատճառներով ու կդառնանք կեղծավորներ ու լեգալիստներ: Եթե մենք Օրենքը չենք պահպանում խոնարհ գթասրտությամբ, ապա մենք կդառնանք փարիսեցիների պես և, վաղ թե ուշ, Քրիստոսին վերստին կխաչենք:

Սա կարող է շատ լուրջ ու վանող թվալ, բայց մենք Լեռան քարոզի հաջորդ տողերում կտեսնենք, որ այն մարդկանց, ովքեր **բարի գործեր** էին անում՝ կիրառելով **Աստուծու գորուբյունը** (այն է անմաքուր ոգիներ դուրս նետում, մարգարեանում ու շատ հիասքանչ գործեր անում Ջիսուսի անունով), Ջիսուսն ասաց. *«...հեռացե՛ք քովէս դո՛ւք՝ որ անօրէնութիւն կը գործէիք»* (*Մատթեոս 7:23*): Քրիստոսի անունով բարի գործ անելն ու Քրիստոսի Էությունը, գթասրտությունը չցուցաբերելը Աստուծու աչքին չարագործություն է:

Նշումներ

1. *Իհարկե, ես ընդունում եմ, որ հնարավոր է, որ կլինի երրորդ համաշխարհային պատերազմ, որի պատճառը կհանդիսանա մարդու կողմից ատոմային ռումբերի կիրառումը, սակայն սա չի լինի երկրի վերջը: Դա պահպանված է Աստուծու համար: «Ապա տեսայ Նո՛ր երկինք մը եւ Նո՛ր երկիր մը, որովհետեւ առաջին երկինքն ու առաջին երկիրը անցան, եւ ա՛լ ծով չկար»:* (*Չայտնություն 21:1*):

«Իսկ երկինքն ու երկիրը, որ կան հիմա՝ պահեստի դրուած են Նո՛յն խօսքով, վերապահուած կրակի համար՝ մինչեւ դատաստանին եւ ամբարիշտ մարդոց կորուստին օրը» (*ԲՊետրոս 3:5-13*):

2. *Կարդացե՛ք Մատթեոս 23-րդ գլուխն ամբողջությամբ: Ջիսուսը բացահայտում է կրոնապաշտ մարդկանց խոսքերի ու գործերի միջև եղած այս անհետևողականությունը: Այն կատարելապես կիրառելի է նաև ներկայիս դավանանքների դեպքում:*



ԳԼՈՒԽ 6

Սիրո դրդապատճառները

Եթէ խօսիմ մարդոց եւ հրեշտակներուն լեզուները՝ բայց սէր չունենամ, ես հնչող պղինձի պէս կ'ըլլամ, կամ դողանջող ծնծղայի պէս: Ու եթէ ունենամ մարգարէութեան պարգեւը, հասկնամ բոլոր խորհուրդները եւ ամբողջ գիտութիւնը, ու եթէ ունենամ ամբողջ հաւատքը՝ որ կարենամ լեռներ տեղափոխել, բայց սէր չունենամ, ես ոչինչ եմ: Եւ եթէ սնուցանեմ աղքատներին՝ իմ ամբողջ ինչքովս, ու մարմինս այրուելու ընծայեմ, բայց սէր չունենամ, ես օգուտ մը չեմ ունենար:

Ա Կորնթացիս 13:1-3

Եթե սերն իրագործում է Աստծու Օրենքը, ապա տեղին կլինի ավարտել գրքի այս մասը Պողոս առաքյալի Ա Կորնթացիս 13-րդ գլխի ուսումնասիրությամբ: Համոզված եմ, որ սա կօգնի մեզ հասկանալու այն պահանջները, որ Աստծու կարծիքով անհրաժեշտ են Օրենքը պահելու համար:

Նախորդ գլխում ես պնդեցի, որ սերը զգացմունք չէ, այլ ապացուցվում ու արդարացվում է ցուցադրմամբ: Սերը պետք է արտահայտվի որևէ կերպ: Խնդիրն այն է, որ մենք կարող ենք անել այն ամենը, ինչ սերը կանի, սակայն սեր չտաձել մեր սրտում: Օրինակ, այն մարդը, որ ցանկանում է հրապուրելով տիրանալ մի աղջկա, արտաքուստ կկատարի սիրահարված մարդու բոլոր գործողություններն ու կասի բոլոր ճիշտ և համապատասխան սիրո խոսքերը: Նա կարող է

գումար ու ժամանակ ծախսել աղջկա վրա, սակայն գործողությունների ետևում կարող է թաքնված լինել ցանկասեր, այլ ոչ սիրող սիրտ. սա ցանկացած աղջկա համար մեծ խնդիր է: Միևնույն կերպ էլ մոլորությունը մեծ խնդիր է ցանկացած եկեղեցու կամ ցանկացած անհատ քրիստոնյայի համար, քանզի հեշտ է կատարել «ճիշտ գործողությունները», սակայն սրտում սխալ դրդապատճառ ունենալ:

Համատեքստը Սուրբ հոգու պարզևներն են

Այս գլուխը հասկանալու համար կարևոր է նկատել կոնտեքստը: Պողոս առաքյալը ոչ թե խոսում է սիրո առարկայի մասին, այլ Սուրբ Հոգու գերբնական պարզևների մասին: Գլուխ 12-ն սկսում է այսպես. *«Հոգևոր պարզևներուն մասին չեմ ուզեր որ անգետ ըլլաք, եղբայրներ՛ր»*, իսկ 8-10 տողերում նա թվարկում է ինը պարզևները, որ գալիս են Սուրբ Հոգուց, այն է Աստծու արտահայտված զորությունը, իմաստությունն ու գիտելիքը:

Գլուխ 14-ում Պողոս առաքյալը շարունակում է խոսել Սուրբ Հոգու պարզևների մասին, և թե ինչպես պետք է դրանք գործնականում կիրառել Քրիստոսի մարմնում՝ եկեղեցում. նա ասում է, որ *ամեն բան թող լինի վայելչությամբ*, կամ *մեկը թող խոսի, իսկ մյուսները վճռեն*:

Սիրո մասին այս 13-րդ գլուխը Աստծու զորության մասին երկու գլուխների միջև է, և առանցքային է Հոգու շնորհների վերաբերյալ Պողոսի հետագա գրածը հասկանալու համար: Աստծու զորությունն առանց Աստծու բնավորության շատ վտանգավոր է և Քրիստոսի մարմնին շատ վնաս կպատճառի: Փոքրիկ տղային հզոր ավտոմեքենայի ղեկին նստացնելը վնաս կպատճառի ոչ միայն տղային, այլ նաև շատ այլ մարդկանց:

Խնդիրն ավտոմեքենայի զորությունը չէ, այլ կայուն բնավորության պակասը, այն է՝ երեխայի հասուն չլինելը: Նա չի կարող զորությունը կառավարել, սա՛ է խնդիրը: Նույնը ճիշտ է նաև Աստծու

գորության դեպքում. Սուրբ Յոզու պարզևներն առանց Յոզու պտղի շատ վտանգավոր են ու այսօրվա եկեղեցուն շատ վնաս են հասցնում:

Չգացմունքները նկարագրելը

Շատ քրիստոնյաներ կասեն, թե գլուխ 13-ի հետևյալ տողերը սիրո նկարագրությունն են: Կարդացե՛ք դրանք զգուշությամբ.

«Կարեկցանքը համբերատար է, քաղցր է. կարեկցանքը չի նախանձիր. կարեկցանքը չի գոռոզանար, չի հպարտանար. անվայել վարձունք չ'ունենար, իրենը չի փնտռեր, չի գրգռուիր, չարութիւն չի մտածեր. անիրաւութեան համար չ'ուրախանար, հապա ճշմարտութեան ուրախակից կ'ըլլայ. ամէն բանի կը հանդուրժէ, ամէն բանի կը հավատայ, ամէն բանի կը յուսայ, ամէն բանի կը տոկայ: Կարեկցանքը բնա՛ւ չ'իյնար»: (Ա Կկորնթացիս 13:4-8): Ավելի ուշ այս գլխում ես կբացատրեմ, թե ինչու եմ գերադասում օգտագործել «կարեկցանք» բառը՝ «սիրո» փոխարեն):

Ես աղաչում եմ տարբերակել սա հետևյալ պատճառով: Սերը հոգևոր հատկությունն է. այլ կերպ ասած այն նյութի հետ կապ չունի: Այն ենթակա չէ նյութի օրենքներին և նման է ցանկացած այլ հույզի ու զգացմունքի մեր հոգևոր բաղադրության մի մասը: Աստվածաշունչն ասում է, որ հոգևոր բաներն անհրաժեշտ է հոգեպես նկատել: Դրանք հնարավոր չէ նկարագրել ֆիզիկական տերմիններով, ոչ էլ՝ հասկանալ նկարագրությամբ:

Օրինակ ատելությունը մեր զգացմունքներից մեկն է, հետևաբար, այն հնարավոր չէ նկարագրել: Այն պետք է զգալ: Այն մարդը, որը երբեք չի բարկացել, չի հասկանա, թե ինչի մասին եք խոսում, եթե ասեք, թե ատում էք մեկին, իսկ եթե փորձեք բացատրել, որ ցանկանում էիք այդ մարդուն հարվածել կամ նրա վատն էիք ցանկանում, ապա ձեր դիմացինը չի կարող հասկանալ այս զգացողությունը, եթե նա ինքը դա չի զգացել:

Եթե մենք, այնուամենայնիվ, փորձենք նկարագրել, թե «դուռը շրխկոցով փակեցինք» կամ էլ «ալ կարմիր դարձանք», ապա մենք նկարագրում ենք ոչ թե բարկությունը, այլ այն ունենալու հետևանքները, ինչը կատարելապես տարբեր է: Խանդի, վախի կամ վիրավորանքի զգացողությունները ճիշտ և ճիշտ միևնույնը կլինեին, եթե մենք փորձեինք նկարագրել զգացմունքը: Մենք միայն կկարողանանք նկարագրել **այդ զգացողություններն ունենալու արդյունքները:**

Միևնույնը ճիշտ է նաև սիրո դեպքում, և եթե կրկին կարդաք 4-8 տողերը, ապա պետք է համաձայնեք, որ Պողոս առաքյալն ասում է մեզ, թե ինչպես պետք է վարվենք, երբ սիրում ենք: Մենք քաղցր ենք, բարի, հոժար ենք երկար ժամանակ տառապելու, համբերատար ենք, չարը չենք մտածում և այլն: Այս ամենը սիրո ներքին ու հոգևոր հատկության ֆիզիկական արտահայտումներն են: Ուրեմն, 4-8 տողերն, ըստ էության, ոչ թե սիրո մասին են, այլ սիրո հետևանքների:

Սեր, կարեկցանք, թե ողորմածքություն

Չետաքրքի է նկատել, որ Աստվածաշնչի բնօրինակում այս 13-րդ գլխում օգտագործվող բառը ոչ թե սերն է, այլ կարեկցանքը: Չունարեն «ագապե» բառը երբեմն թարգմանվում է «սեր», իսկ երբեմն էլ՝ «կարեկցանք»: Ակնհայտ է, որ թարգմանիչները հասկացել են, որ տարբերություն գոյություն ունի, որովհետև կորնթացիներին ուղղված նամակների այլ հատվածներում «ագապե» բառը թարգմանված է «սեր», այլ ոչ «կարեկցանք», և մենք նույնպես պետք է սա հաշվի առնենք:

Ես գերադասում եմ գործածել կարեկցանք բառը սիրո փոխարեն, հետևյալ պատճառներով: «Սեր» բառն անգլերենում կորցրել է իր ճշմարիտ իմաստը: Շատ երիտասարդներ կարծում են, թե սեքսն ու սերը հոմանիշներ են, ուրեմն այս դեպքում սա լավագույն բառը չէ, որ կարող ենք կիրառել: Խնդիրն այն է, որ «կարեկցանք» (բարեգործություն) բառը

նույնպես կորցրել է իր բուն իմաստն ու այսօր հաճախ հասկացվում է՝ որպես հարկերից խուսափելու, կառավարությունից զիջումներ ստանալու կամ էլ երևի մեր անցանկալի հագուստից ազատվելու միջոց:

Կարեկցանքի բուն իմաստն էր «հանուն դրա սիրո», ուրեմն բարեգործական խանութում աշխատելն ու դրա դիմաց աշխատավարձ ստանալը չի նշանակում, որ դա արվում է հանուն կարեկցանքի, սիրո: Բարեգործական կազմակերպության համար աշխատելը նշանակում է դա անել հանուն սիրո, այլ ոչ թե հանուն փողի: Բարեգործական ընկերությունների մեծամասնությունն այսօր իրենցից բիզնես են ներկայացնում՝ փոխարեն բարի գործեր անելը: Ես չեմ քննադատում բարեգործական ընկերությունները, դա չէ իմ նպատակը, այլ փորձում եմ ցույց տալ, որ մենք կորցրել ենք բառի սկզբնական իմաստը: Այս գլխում այսուհետ ես պատրաստվում եմ օգտագործել կարեկցանք բառը, քանզի զգում եմ, որ այն կրում է ճիշտ դրդապատճառը:

Գթասրտությունը սերն է գործողություններում: Հիսուսը *գթաց նրանց, երբ տեսավ մեծ բազմությունն՝ հովիվ չունեցող ոչխարների պես* (Մարկոս 6:34) և նա գործեց՝ ի պատասխան դրան. նա բժշկեց նրանց ու կերակրեց աղքատներին: Հեռուստացույցով Աֆրիկայում կամ Հնդկաստանում դժբախտ իրավիճակներ դիտելը կարող է ստիպել մեզ խղճահարություն զգալ, և մենք կարող ենք անգամ արցունք թափել, սակայն մեզ գթասրտությունը կստիպի հրաժարվել մեր արևոտ արձակուրդից, որպեսզի կարողանանք գնալ այդ երկիրն ու պրակտիկորեն օգնենք այդ իրավիճակում: Սիրո զգացմունքները դեռ բավական չեն, մենք պետք է հուզվենք, ցանկանանք մի բան անել, եթե ուզում ենք պնդել, թե գթասիրտ ենք: Մենք կտեսնենք, որ սա է այն դրդապատճառը, որ Աստված փնտրում է, երբ մենք կիրառում ենք մեր պարզևները (թե՛ բնական և թե՛ հոգևոր) և երբ մենք անում ենք մեր բարի գործերը:

Ճիշտ արարք՝ սխալ դրդապատճառ

Այժմ ես դիտարկելու եմ 1-3 տողերն ու ցույց եմ տալու, որ դրանք գործ ունեն սիրո դրդապատճառների հետ: Ճիշտ գործողություններն անելն ու սխալ դրդապատճառներն ունենալն Աստծու համար խիստ վիրավորանք է: Սուրբ Յոզու շնորհներն ու քրիստոնյայի բարի գործերը հիասքանչ են ու պիտի իրագործեն Աստծու գործը, սակայն միայն սիրո դրդապատճառը պիտի իրագործի Աստծու կամքը:

1. *«Եթէ խօսիմ մարդոց եւ հրեշտակներուն լեզուները՝ բայց սէր չունենամ, եւ հնչող պղինձի պէս կ'ըլլամ, կամ դողանջող ծնծղայի պէս»:*

Այս առաջին տողը ցույց է տալիս մեզ, թե ինչպես է Աստված տեսնում այն մարդուն, ով ունի լեզուներով խոսելու շնորհը՝ առանց ճիշտ դրդապատճառի, և դա նյարդայնացնում է Աստծուն. հնչող պղինձ է և դողանջող ծնծղա: Պողոս առաքյալն ասում է, որ մարդը կարող է ունենալ մարդկանց և հրեշտակների լեզուները՝ հիասքանչ շնորհներ, որ կարող են շահել աշխարհի և եկեղեցու գովեստը, բայց եթե մարդու դրդապատճառները հաճո չեն Աստծուն, ապա նա այդ ամենը դիտարկում է՝ որպես հնչող պղինձ կամ դողանջող ծնծղա: Ինչպիսի պախարակություն է սա, երբ մենք օգտագործում ենք մեր հիանալի շնորհները, բայց հիմքում թաքնված է գոռոզությունը, անձնական շահը հետապնդելը կամ էլ մարդկանց գովեստի նկատմամբ սերը: Աստծուն հաճոյանալու փոխարեն՝ սա կունենա ճիշտ հակառակ ազդեցությունն ու կլինի աղմուկ՝ առանց իմաստի ու կգրգռի Աստծու ականջը:

2. *«Ու եթէ ունենամ մարգարէութեան պարգեւը, հասկնամ բոլոր խորհուրդները եւ ամբողջ գիտութիւնը, ու եթէ ունենամ ամբողջ հաւատքը՝ որ կարենամ լեռներ տեղափոխել, բայց սէր չունենամ, եւ ոչինչ եմ»:*

Այս երկրորդ տողն ասում է մեզ, թե ինչպես է Աստված դիտարկում այն մարդուն, որ հավատք ունի և գորության շնորհները՝ առանց սիրո դրդապատճառի: Պողոս առաքյալն ասում է. *եթե մենք ունենք բոլոր*

առեղծվածներն ու բոլոր գիտությունն իմանալու գերբնական շնորհը: Սրանք զորավոր շնորհներ են, երբ մեր կարգադրության ներքո ունենք Աստծու ողջ գիտելիքը: Սա նշանակում է մենք հասկանում ենք «անօրենության, չարի առեղծվածը», և ամբողջ այլ գիտելիքը, գերբնական ու բնական, ներառված է այս շնորհների մեջ: Պողոս առաքյալն այնուհետև խոսում է լեռներ տեղափոխելու **ամբողջ հավատքի** մասին: Նկատեք, որ նա չի ասում «մանանեխի հատիկ՝ լեռ տեղափոխելու համար», այլ ասում է «հավատք՝ լեռներ տեղափոխելու համար», այն է՝ հոգևակի: Քրիստոնյաները չափազանց տպավորված են այս շնորհներով, և այն մարդիկ, որ ցուցադրում են դրանք, լցնում են ահռելի մարգարահիճներ: Աստված, սակայն, միայն դիտարկում է դրդապատճառները, և եթե որևէ կարեկցանք չկա, ապա նա ասում է, որ **մենք ոչինչ ենք**: Արդյոք ինչպես կարող են այս զորավոր շնորհները հանգեցնել Աստծու կողմից նման մի պնդման:

Կարծում եմ Լեռան քարոզից մեկ այլ սուրբ գրությունն այստեղ կօգնի մեզ: Այն կքննարկվի հաջորդ գրքերից մեկում, սակայն համոզված եմ, որ մեզ համար օգտակար կլինի, եթե հակիրճ հայացք նետենք դրա վրա:

«Ո՛չ թէ ո՛վ որ ինձի՝ "Տէ՛ր, Տէ՛ր" կ'ըսէ, պիտի մտնէ երկինքի թագաւորութիւնը, հապա ան՝ որ կը գործադրէ իմ երկնաւոր Հօրս կամբքը: Ծատեր այն օրը պիտի ըսեն ինձի. "Տէ՛ր, Տէ՛ր, մի՛թէ չմարգարէացա՞նք քու անունովդ, դեւեր չհանեցի՞նք քու անունովդ, եւ շատ հրաշքներ չգործեցի՞նք քու անունովդ": Այն ատեն պիտի յայտարարեմ անոնց. "Ես բնա՛ւ չէի ճանչնար ձեզ. հեռացէ՛ք քովէս դո՛ւք՝ որ անօրէնութիւն կը գործէիք" » (Մատթեոս 7:21-23):

Ոչ բոլորը

Չիսուը խոսում է սուտ մարգարեների մասին ու ասում, որ ոչ թե նրանք, որ կատարում են «Աստծու գործերը» պիտի ճանաչվեն, այլ նրանք, որ կատարում են «Աստծու կամքը»: Միշտ էլ օգուտ կլինի, երբ

մենք դևեր հանենք ու հիասքանչ գործեն կատարենք՝ Հիսուսի անունով, բայց առանց Հիսուսի բնավորության բարի գործը, որ մենք կատարում ենք, իրականում Աստծու աչքին կդառնա անօրենություն, և նա ասում է. «ես բնավ չեմ ճանաչում քեզ», այն է՝ «դու երբեք մտերիմ հարաբերություն չես ունեցել ինձ հետ: Դու իմացել ես «իմ մասին» և կիրառել իմ զորությունը, բայց դու **չգիտես** ինձ»: Գիտեմ, չափազանց զարհուրելի է, բայց այն չափազանց հստակ է:

Լավ օրինակ կլինի իմ հարաբերությունը Անգլիայի թագուհու հետ: Ես նրա մասին ամեն բան գիտեմ: Կարող եմ ձեզ ասել նրա ամուսնու մասին, թե որ կերակուրներն է նա սիրում և որը ոչ: Կարող եմ անգամ ասել ձեզ նրա կորգի ցեղատեսակի շների անունները: Ես կարող եմ ժամերով խոսել նրա մասին, քանի որ չափազանց շատ բան գիտեմ նրա մասին: Խնդիրն այն է, որ նա անգամ չգիտի էլ, որ ես գոյություն ունեմ: Եթե նա ինձ հանդիպի, ապա ես անմիջապես կճանաչեմ նրան, բայց, ցավոք սրտի, նա չի ճանաչի ինձ և կասի իր ամուսնուն. «ես այս մարդուն չեմ ճանաչում»: Միևնույն կերպ էլ շատ քրիստոնյաներ ամեն բան գիտեն Աստծու և նրա զորության ու շնոհքի մասին, բայց հարցն այն է, արդյոք Աստված գիտի նրանց:

3. «Եւ եթէ սնուցանեմ աղքատներին՝ իմ ամբողջ ինչքովս, ու մարմինս այրուելու ընծայեմ, բայց սէր չունենամ, ես օգուտ մը չեմ ունենար»:

Այս տողը մեզ ասում է, թե ինչպես է Աստված դիտարկում այն մարդուն, որ կատարում է վերջնական բարի արարքներն՝ առանց ճիշտ դրդապատճառի. դա նրանց օգուտ չի տալիս: Պողոս առաքյալը գնում է վերջնական կետին իր օրինակում և ասում, թե եթե ես **իմ ամբողջ ունեցվածքը** տամ աղքատներին սնուցանելու համար, ոչ թե ունեցվածքի մի մասը, այլ՝ ամբողջը: Սա, վստահաբար, մեծ ու արժեքավոր արարք է, որ օգուտ կտա աղքատներին, բայց հարցն այն է, թե արդյոք այն ինձ օգուտ կտա: Պատասխանը շշմեցուցիչ է. «Ոչ», եթե այս մեծ արարքի դրդապատճառը կարեկցանքը չէ: Ողորմություն տալը քրիստոնյային հատուկ արարք չէ, քանզի բոլոր կրոններին էլ բնորոշ է այս արարքը՝ ներառյալ հինդու, մուսուլման և անգամ

մասունականներին: Մյուս ոչ-կրոնական կազմակերպությունները, ներառյալ արեհիստ, նույնպես տալիս են աղքատներին և արժեքավոր արարքներ են իրականացնում, ուրեմն այս բարի գործերի համար Աստված որևէ պարգև չի տալիս: Այն որևէ ազդեցություն չի ունենա մեր արքայական պարգևների վրա, երբ մենք Քրիստոսին դեմ առ դեմ կանգնենք իր դատաստանի ժամանակ:

Շատերը կասեն, թե այս արարքները կատարել են Հիսուսի անունով, և դա որևէ նշանակություն չի ունենա, քանզի պարգևի չափանիշը մեր կողմից **Աստծու կամքը** կատարելն է, այլ ոչ միայն նրա գործը: Հիսուսը կնայի, թե ինչու ենք մենք կատարել արարքը, այլ ոչ նրան, որ մենք կատարել ենք այն: Խիստ ուշքի բերող միտք է, բայց նաև մեկը, որ մենք լավ կանենք, եթե հաշվի առնենք, քանզի այդ օրը շատ ուշ կլինի արդեն:

Երկրորդ բնագավառը նահատակությունն է: Վստահաբար, սա մարդու կողմից իրագործվող վերջնական գոհաբերությունն է: Համաձայն եմ, որ սա վերջնագիծն է, բայց Աստծու հետ միակ բանը, որ կարևոր է, դրդապատճառն է, և միայն եթե դա կարեկցանքն է, այն մեզ օգուտ կբերի: Օգուտ ասելով ի նկատի ունեմ Հիսուսից «կեցցե՛ս» բառը լսելը և դրան հաջորդող պարգևը: Շատ մարդիկ իրենց կյանքը տվել են՝ հանուն նպատակի, բայց եթե պատճառը կեղծ է, սուտ, կամ ել դրդապատճառը ծնված է ատելությունից, ապա նրանց համար որևէ օգուտ չկա: Անհատը կարող է լավ պատճառ ունենալ ու քրիստոնյա լինել և ունենալ հավիտենական կյանքի հստակ գիտակցում, սակայն մենք չենք խոսում հավիտենական կյանքի մասին, այլ Քրիստոսի դատաստանի մասին՝ պարգևների ու պատիժների: Մահանալ, որովհետև ես Քրիստոսին չեմ ուրանա, գովեստի արժանի է թվում, սակայն եթե դրդապատճառը հպարտությունն ու համառությունն է, այն է՝ «ոչ ոք ինձ չի ստիպի հանձնվել», ապա մենք կորցնում ենք թագավորության պարգևը:



ԳԼՈՒԽ 7

Գթասրտությունը զարգացնելը

Տէրը ողորմած ու գթած,

Համբերատար եւ մեծապէս կարեկից է:

Սաղմոս 145:8

Եւ տեսնելով բազմութիւններ՝ գթաց անոնց վրայ, որովհետեւ պարտասած ու ցրուած էին՝ հովիւ չունեցող ոչխարներու պէս:

Մատթեոս 9:36

Բայց եթէ մէկը՝ որ ունի այս աշխարհի ապրուստը, տեսնելով իր կարօտեալ եղբայրը՝ իր գութը գոցէ անկէ, ի՞նչպէս անոր մէջ Աստուծոյ սէրը բնակած կ'ըլլայ:

Ա Հովհաննես 3:17

Եթէ գթասրտությունը մեր հոգևոր ծառայության ու կենսակերպի հիմնավոր դրդապատճառն է, ապա ինչպէս կարող ենք արդյոք մենք զարգացնել և ավելացնել մեր գթասրտությունը: Հավատացած եմ, որ մենք, նախ և առաջ, պետք է հասկանանք այս դրդապատճառի կշիռը և գիներ, քանզի այն թուլասիրտների համար չի: Այն Հիսուսին Գեթսեմանեի միջով դեպի խաչը տարավ, և մեզ համար գինս ավելի ցածր չպիտի լինի՝ այն բնագավառում, ուր Աստված կանչել է մեզ:

Ես երկու նկարագրություն ունեմ, որ կարող է օգնել մեզ: Առաջինը մի պատմություն է, որ լսել եմ շատ տարիներ առաջ, և չնայած որոշ

մանրամասներ կարող են մթազևած լինել ժամանակի ընթացքում, փաստերը մեզ լավ օրինակ կծառայեն:

Չարմանահրաշ կին

Սա տեղի է ունեցել տրանսատլանտիկ օդային ճանապարհորդության գալստից շատ տարիներ առաջ: Մի այրի, որ երեք որդի ուներ, իր ավագ որդուն ոգևորում է գնալ Աֆրիկա՝ որպես միսսիոներ: Նա պատասխանում է իր մոր կոչին և նավով մեկնում երկար ճանապարհորդության ու քարոզում բարի լուրը տեղաբնակներին: Մի քանի տարի անց լուրը հասնում է, որ նրան մարդակերները սպանել ու կերել են: Նրա մայրը, առանց որևէ ափսոսանքի անգամ, որ քաջալերել էր նրան իր կյանքը վտանգելու, խոսում է երկրորդ որդու հետ և ասում նրան, որ պետք է հետևի իր եղբոր քայլերին Աֆրիկայում ու «լրացնի նրա կոչիկները, որ այժմ դատարկ էին»: Նա նույնպես դրական է արձագանքում կոչին և միևնույն ճանապարհորդությանը մեկնում՝ դեպի «սև» մայրցամաք: Միայն մի քանի տարի անց լուրը հասնում է, որ նա նույնպես նահատակվել է Աֆրիկայի ջունգլիներում:

Այնուհետև կրտսեր որդին է «լրացնում այն կոչիկները», որոնցով իր եղբայրները քայլել էին ու կատարում միևնույն ճանապարհորդությունը՝ իր մոր ոգևորությամբ ու օրինությամբ: Սա անհավատալի է թվում, բայց նա միևնույն ճակատագրին է արժանանում՝ քարոզելով Աստծու խոսքը նրանց, որոնք ընկղմված էին կախարդության (վոլդու) ու անիմիզմի¹ մեջ:

Շատ տարիներ են անցնում, և այս պատմությունը ինչ-որ կերպ գրավում է լրատվության ուշադրությունն, ու այդ կնոջ հետ հարցազրույց է անցկացվում ռադիոյով: Նրան հարցնում են, թե արդյոք ճշմարիտ է այն, որ նա՝ այրին խրախուսել է իր երեք որդիներին գնալու Աֆրիկա որպես միսսիոներներ, և որ նրանք բոլորն էլ տարբեր ժամանակներում նահատակվել են: Նա հավաստում է, որ սրանք

ճշմարիտ փաստեր են: Հարցազրույց վարողն այնուհետև հարցնում է նրան, թե արդյոք այսքան տարիներ հետո անցյալի վրա հայացք նետելով, այրին որևէ ավստասանք ունեի, որ քաջալերել էր իր որդիներին անելու դա:

Նա պատասխանում է, որ նա միայն մի բանի համար է ավստում, և կիսում է սա ռադիոլստողների հետ: Նա ասում է. «Իմ միակ ավստասանքն այն է, որ ես մեկ այլ որդի չունեի Աֆրիկա ուղարկելու, որպեսզի լրացներ այն դատարկ կոշիկները»:

Որևէ անցողիկ զգացողություն չկա այս պնդման մեջ: Կամ այս կինը կարծի էր, բիրտ ու առանց որևէ մայրական զգացմունքի, կամ էլ նա լի էր իր Տիրոջ և Աֆրիկայի բնիկների նկատմամբ գթասրտությամբ:

Մեր դրդապատճառները բացահայտելը

Երկրորդ նկարագրությունը մի տեսիլք է, որ իմ կինը՝ Ջոաննան տեսել էր մի քանի տարի առաջ, երբ մենք միասին աղոթում էինք, և դա այնպիսի ժամանակ էր, երբ Աստծու համար մեր դրդապատճառները կասկածելի էին: Ես սա կներկայացնեմ առաջին դեմքով: «Ես նստած էի մի փոքր նավակում, որ նեղ նեղուցով շարժվում էր փակ պարսպաճաղերի ուղղությամբ: Դարպասը ոչ թե մուտք էր դեպի ամրոց, այլ դեպի մի մեծ, բաց լիճ: Իմ նավակը կանգ առավ դարպասի մոտ, և ես մի կողմում մի հրեշտակի նկատեցի, որը, ակնհայտորեն, դարպասապահն էր: Ես հարցրեցի, թե արդյոք կարող էի անցնել դարպասի միջով, և հրեշտակը հարցրեց, թե ինչ պատճառով էի ես ցանկանում լիճը մտնել: Ես ասացի նրան, որ ուզում էի ձուկ բռնել, քանզի դա իմ պարտականությունն էր: Նա ինձ անակնկալի բերեց, քանի որ ասաց, որ իմ դրդապատառը բավարար չէր, և որ ինքը չէր կարող ինձ ներս թողնել: Ես մտածեցի որոշ ժամանակ ու կրկին հարցրեցի, թե արդյոք կարող էի դարպասով անցնել դեպի լիճը: Հրեշտակը կրկին ինձ հարցրեց պատճառը, և ես ասացի, որ պետք է ձուկ որսայի, քանզի շատ մարդիկ քաղցած էին և սնունդի կարիք ունեին: Ես

զգացի, թե իմ պատճառը բարի էր և ակնկալում էի, որ հրեշտակն ինձ թույլ կտար անցնել, սակայն պատասխանը միևնույնն էր: Նա ասաց, որ իմ դրդապատճառը բավարար չէր, և որ ինքն ինձ թույլ չէր տա անցնել: Ես երկար ու լարված մտածում էի, թե ինչը կարող էր բավարար պատճառ լինել, որպեսզի թույլտվություն ստանայի լիճը մտնելու՝ ձուկ որսալու համար, ես նկատեցի նավթի կեղտոտ մի շերտ, որ շարժվում էր լճի մակերևույթով: Ես հասկացա, որ բոլոր ձկները կաղտոտվեին ու բղավեցի հրեշտակին, որ ինձ թույլ տար անցնել դարպասով: Նա կրկին հարցրեց իմ դրդապատճառն, ու ես բղավեցի, որ եթե նա ինձ թույլ չտար անցնել դարպասով՝ ձկներին փրկելու, ապա նրանք բոլորը կաղտոտվեին ու կմահանային: Հրեշտակը հապշտապ ցատկեց նավակի մեջ ինձ հետ, ճաղերը բացվեցին, և հրեշտակն ասաց, որ ինքն ինձ կօգնի ձկներին փրկել»:

Ես այս տեսիլքը չափազանց մեծ մարտահրավեր եմ համարում, քանզի որպես Աստծու խոսքի ուսուցիչ՝ ես հասկացել եմ, որ դեռ բավական չէ իմ պարտքը կատարել ու իրագործել իմ կոչումն ու հոգևոր ծառայությունը: Հասկացել եմ, որ դեռ բավարար չէ ուսուցանել, որովհետև Աստծու ժողովուրդը սննդի կարիք ունեն, իսկ Աստված ինձ օրհնել է լավորակ սնունդով, որ սնուցեմ մարդկանց: Իմ միակ դրդապատճառը պետք է լինի, որ ես գթասիրտ լինեմ այն մարդկանց նկատմամբ, որոնց հոգևոր ծառայությունն եմ մատուցում: Ես պետք է հոժար լինեմ իմ կյանքը տալու ոչխարների համար, այլ ոչ միայն նրանց կերակրելու:

Աստծու գործը, թե՞ Աստծու կամքը

Իմ հոգևոր ծառայությունն ու կոչումն իրագործելը Աստծու գործն է, սակայն գթասրտություն ունենալը Աստծու կամքն իրագործելն է, և ես զգոն եմ այն հարցի նկատմամբ, որ Հիսուսը պիտի ինձ հարցնի. «Արդյոք կատարել ես քո երկնային Հոր կամքը, թե գործը»: Իմ դիրքը երկնքի

թագավորությունում, այն է՝ Քրիստոսի հազարամյա արքայությունում, պետք է կախված լինի իմ պատասխանից:

Արդյոք ինչպես պետք է այս դրդապատճառը զարգացնենք մեր ամենօրյա կյանքում: Սա է ամենակարևոր հարցը, և պատասխանը մի պարզ բանաձև չէ, սակայն այնուամենայնիվ, մենք պետք է հասկանանք այն բաները, որոնք կօգնեն այս գործընթացին: Պարզ պատասխանն է դառնալ Չիսուսի պես, քանզի եթե մենք նրա նման ենք մեր բնավորությամբ, այն է՝ եթե մենք ունենք Սուրբ Հոգու պտուղներն ու ապրում ենք երանությունների համաձայն, ապա մենք բնականաբար կունենանք Քրիստոսի գթասրտությունը: Հաճախ ոչ թե այն, ինչ մենք կատարում ենք, այլ այն, ինչ մտածում ենք, ամենաշատն է օգնում մեզ, և ես կթվարկեմ այն բնագավառները, ուր մեր մտածելակերպը պետք է ճիշտ լինի, որպեսզի մենք առաջընթաց ունենանք գթասրտության այս առաջնային կարևորության բնագավառում:

1. Սովորեն սիրել մեր փորձությունները

Չիսուսն ասում է մեզ, որ պետք է ուրախանանք ու ցնծանք, երբ մեր փորձությունները սկսվում են, իսկ Հակոբոսն ասում է մեզ, որ բոլորովին ուրախություն համարենք դրանք: Սա այն պատճառով է, որ նրանք գիտեն, որ գթասրտությունն ու անգամ ողջ բնավորությունը կազմավորվում է մեր փորձությունների հալոցում: Փորձությունները մեզ դարձնում են հեզ՝ ուսուցանելի, և խոնարհեցնում են մեզ. հպարտ մարդը երբեք գթասրտություն չի ունենա: Եթե մենք սատանային կամ էլ այլ մարդկանց մեղադրենք մեր փորձությունների համար, ապա երբեք առաջխաղացում չենք ունենա մեր փորձություններում, և գթասրտությունը երբեք չի կազմավորվի: Արդյոք ինչպես կարող ենք մենք գթասիրտ լինել մեր թշնամիների նկատմամբ ու սիրել նրանց, եթե մենք նրանցում մեղք ենք տեսնում: Չիսուսն Աստծուն խնդրեց ներել իր թշնամիներին, երբ միևնույն ժամանակ նրանք խաչում էին նրան: Ես դա եմ գթասրտություն անվանում:

2. Մենք պետք է տեսնենք ինքներս մեզ

Քանի դեռ մենք չենք բացահայտվել ինքներս մեզ համար, մենք երբեք գթասրտություն չենք ունենա: Մենք քննադատական կլինենք ու ինքնագոհ, քանզի միայն երբ տեսնենք ինքներս մեզ և մեր թուլություններն այնպես, ինչպես Աստված է տեսնում, մենք կկարողանանք գթասրտություն ունենալ այլ թույլ մարդկանց նկատմամբ:

Աստված չի կարող իմ կյանքում որևէ բան փոխել, քանի դեռ ես չեմ ընդունել, որ այն գոյություն ունի և որ այն խնդիր է: Օրինակ՝ արդյոք ինչպես կարող է Աստված իմ հպարտության ու գոռոզության հետ հաշիվ տեսնել, եթե ես հավատացած եմ, որ խոնարհ եմ: Պատասխանն ակնհայտ է. նա չի կարող: Ես պետք է բացահայտվեմ՝ որպես գոռոզ ուսուցիչ, պետք է խոստովանեմ այդ փաստը, և այնուհետև կարող եմ փոխվել: Միշտ էլ այսպիսին է հերթականությունը՝ բացահայտում, խոստովանություն և ապա՝ փոփոխություն: Մենք պետք է Աստծուն խնդրենք, որ փնտրի մեր սիրտն ու ցույց տա մեզ այն, ինչ կգտնի: Մեր մասին ճշմարտությունն ամենացավոտ ու ամենանվաստացուցիչ փորձությունն է, որի միջով երբևէ կարող ենք անցնել, բայց այն մեր կյանքում փոփոխության նախապայմանն է, և ուրիշ ոչինչ դրան չի կարող հասնել: Մենք կշարունակենք խոնարհ ձևանալ, որպեսզի ծածկենք մեր գոռոզությունը՝ ոչ միայն ուրիշներից, այլև հենց մեզանից: Սա ճշմարիտ է մեր բոլոր թուլությունների դեպքում, և մեր սրտի կարծրությունը երբեք չի փոխարինվի գթասրտությամբ առանց այս գործընթացի:

3. Մենք պետք է սկսենք նկատել կարիքները

Այս վերջին օգնության միջոցը ոչ թե մտածելակերպի մասին է, այլ գործողության, և եթե մենք մեր դիրքորոշումը չհամատեղենք պրակտիկ արտաքին գործողության հետ, ապա մենք չենք ունենա այն

հավասարակշռությունը, որն անհրաժեշտ է հասնելու նրան, ինչ մենք փնտրում ենք, այն է՝ կարեկցանք:

Մեզ համար առաջնային պետք է լինի ուրիշների կարիքները տեսնելն ու նկատելը: Ճատ լավ է, երբ տեսնում ենք սովամահ եղող երեխաներին ու նրանց օգնության կանչը հեռուստացույցով, բայց եթե նրանց կարիքի նկատմամբ ողորմածությունն ունենալուց հետո մենք մտնում ենք մեր տաքուկ անկողինն ու վերադառնում դեպի մեր հասարակության ապահովությունը, ուրեմն մենք իրականում որևէ բան անելու ցանկություն չենք ունեցել: Նրանց ճիչերը դեռ պիտի շարունակվեն մինչև ուշ գիշեր: Մենք պիտի **հուզված լինենք որևէ բան անելու**, եթե մենք ընդհանրապես հուզված ենք: Միևնույնը կլինի, եթե մեկն ինձ ասի, որ իմ ուսուցումը նրանց մարտահրավեր է նետել: Ես երբեմն ուզում եմ նրանց հարցնել. **«Արդյոք ինչ անելու մարտահրավեր է նետել»:**

Մենք կարիք չունենք գնալու աշխարհի ծայրը և մեր կյանքը վտանգի ենթարկելու, որպեսզի կարիքները բացահայտենք, քանզի դրանք մեր կողքին են, եթե հոժար լինենք նայելու: Իսկ ինչ կլինի, եթե այցելենք հոգեբուժարան ու խելացևոր մարդկանց տեսնենք: Դա ձեզ աղոթելու ու լաց լինելու ևս մեկ առիթ կտա: Կամ էլ բանտերը, «կարմիր լապտերների թաղամասերը»․ չէ՞ որ ամեն մի մեծ քաղաքում գոնե մեկը կա: Հայացք գցեք դեռատի աղջիկներին, որ կանգնած են փողոցի անկյունում, գուցե թմրանյութի ազդեցության տակ, ու վաճառում են իրենց ամեն մի կեղտոտ ծերուկի, որ կտա ասած գինը: Նա ինչ-որ մեկի գեղեցիկ երեխան էր: Չորս տարեկան ոչ մի երեխա չի երագում նման կարիերայի մասին: Նա հույսեր է փայփայում դառնալու օդանավի ուղեկցորդ, բուժքույր կամ ուսուցչուհի: Այս տեսարաններն ավելի մեծ ազդեցություն կունենան ձեզ վրա, քան պարզապես զգացողություններ տալը: Դրանք ձեզ կոչ կանեն մի բան անելու՝ ձեր հարմարավետ եկեղեցական կյանքի գնով: Ասածս այն չէ, թե մենք պետք է այցելենք այնպիսի վայրեր, որոնք մեզ փորձության կենթարկեն, այլ այն, որ միշտ էլ գոյություն ունեն միջոցներ, որպեսզի ուրիշների կարիքները նկատելի

դառնան մեզ համար, և եթե մենք սա չանենք, ապա երբեք գթասրտություն չենք ունենա:

Շարժվել գթասրտությամբ

Երբ Հիսուսը **տեսավ** բազմությունները, նա գթասրտությամբ **շարժվեց** (տես՝ Մատթեոս 9:36): Ես այնքան ուրախ եմ, որ գնում եմ զարգացող, երրորդ աշխարհի երկրներ և տեսնում եմ չքավորությունն ու կարիքները: Ես այնքան ուրախ եմ, որ հոգևոր ծառայություն եմ մատուցում բանտերում՝ ողջ Մեծ Բրիտանիայով մեկ, քանզի սա փոխեց իմ մտահորիզոնն ու, ի վերջո, գործողությունները՝ բոլոր այն պատկերացումներիցս վեր, որ կարող էի մտածել իմ հպարտ, գոռոզ, եսասեր երիտասարդության ընթացքում: Եթե դուք մեղսավորների ընկերը չեք, ուրեմն դուք չեք հետևում Հիսուսին: Ինքնաբավ այլ քրիստոնյաները երբեք չեն կարող ձեզ ոգեշնչել գթասրտություն ունենալու: Հնարավոր է, որ նրանք ոգեշնչեն ձեզ արարքներ կատարելու, սակայն նրանք երբեք չեն կարող խթանել ձեզ կատարելու Աստծու կամքը: Գթասրտությունը միակ ընդունելի դրդապատճառն է այն ամենի համար, ինչ մենք անում ենք՝ որպես քրիստոնյաներ: Աստված մեզ օգնական լինի:


Նշումներ

- 1. Անիմիզմը բառը փիլիսոփայական, կրոնական և հոգևոր գաղափար է այն ոգիների վերաբերյալ, որ գոյություն ունեն ոչ միայն մարդկանց, այլև կենդանիների, բույսերի, լեռների, բնական երևույթների, աշխարհագրական առանձնահատկությունների և այլնի մեջ:*



ԽԱ 2

ՕՐԵՆԷՆ ՈՒ ՍԵՐԸ



Ներածություն

Լսեր էք թէ ըսուեցաւ նախնիքներուն...

...Քայց ես կը յայտարարեմ ձեզի...:

Մատթեոս 5:21-48

*Ես այն մարդը չեմ, որ կարծում եմ: Ես այն
մարդը չեմ, որ ուրիշներն են կարծում: Ես այն
մարդն եմ, որին Աստված է տեսնում:*

Անանուն

Մաս 1-ում ես ցույց տվեցի, որ դժվար չէ Օրենքն իրագործել, երբ սիրում եսք. իրականում, անհնար է **չանել** այն ամենը, ինչ Օրենքը պահանջում է մեզանից: Դառը ճշմարտությունն այն է, որ մենք չենք սիրում մեր մերձավորին, ինչպես ինքներս մեզ, և այդ պատճառով էլ արդարացումներ ենք փնտրում սիրո այս պակասի համար ու թաքնվում շնորհի ետևում:

Քանզի մեր սրտերը պետք է բացահայտվեն նախքան մենք կխոստովանենք ու կփոխվենք, Հիսուսը վեց օրինակ է բերում, թե ինչպես ենք մենք սիրով իրագործում Օրենքը: Ես այս հատվածը շատ ցավոտ եմ համարում, որովհետև այն գործ է ունենում մեր գաղտնի, թաքնված կյանքի հետ:

Յեշտ է ապրել մի արտաքին կյանք մարդկանց առջև, սակայն մեկ այլ գաղտնի կյանք, որը մեր հոգևոր հովիվը, ամուսինը կամ կինը, մեր երեխաները և հաճախ անգամ մենք ինքներս չենք ճանաչում: Սա այն կյանքն է, որ Հիսուսը ցանկանում է բացահայտել այլ օրինակներում: Քրիստոնյաների մեծամասնությունը կվիրավորվի, եթե ես նրանց մեղադրեմ երկակի կյանք վարելու մեջ: Վստահաբար, հեշտ չէ խոստովանել այն ամենը, ինչ նա բացահայտում է մեր սրտերում, բայց

եթե մենք ընդունենք ճշմարտությունը, ապա ճշմարտությունը մեզ ազատ կարձակի:

Ես կարող եմ խոստովանել, որ այսքան տարի Աստծուն ծառայելուց ու անձա ուրանալուց հետո էլ ես դեռ ամեն անգամ այս քարոզներն ուսուցանելիս ինքս եմ բացահայտվում: Եթե ես դեռ մեռած չեմ անձիս նկատմամբ, ուրեմն Ադամը, որոշ չափով, դեռ կենդանի պիտի լինի ինձանում՝ մարմնական իր բոլոր գործերով, որ նկարագրված է Պողոս առաքյալի Գաղատացիս 5:19-21-ում: Այն փաստը, որ դրանք արտաքուստ չեն արտահայտվում դեռ չի ապացուցում այն, որ դրանք կենդանի չեն ու չեն բարգավաճում իմ սրտի գաղտնի անկյուններում:

Տարօրինակ արտահայտություններ

Չաջորդ գլուխներում ես պատրաստվում եմ կիրառել միևնույն սկզբունքներն ու դիտարկումները բոլոր վեցը օրինակների նկատմամբ: Սա մեզ կօգնի դրանք կոնտեքստում դիտարկել և թույլ չտալ, որ որևէ այլ կողմնակալ մեկնաբանություն ձևավորվի:

Յուրաքանչյուրը սկսում է հետևյալ արտահայտությամբ. *«Լսել եք, որ ձեզ ասվել է նախնիների կողմից...»*: Այնուհետև Չիսուսը մեջբերում է անում Օրենքից, ինչպես ասենք *«Մի՛ սպանիր»*: Ես նախ պիտի նայեմ Չին կտակարանում, որպեսզի տեսնեմ, թե արդյոք այդ պնդումները Մովսեսի Օրենքում են, թե պարզապես նախնիների սովորույթներն են: *«Լսել եք, որ ձեզ է ասվել նախնիների կողմից»* մի տարօրինակ արտահայտություն է, որ Չիսուսն օգտագործում է Օրենքի վերաբերյալ: Արդյոք նա չպետք է ասեր *«Մովսեսն ասում է Օրենքում»*, կամ էլ *«Գրված է»*: Չիսուսն այնպիսի տպավորություն է թողնում, որ այն, ինչ նա պատրաստվում է մեջբերելու մի առասպել է, որ դարերով է փոխանցվել ինչպես մի ծեր կնոջ հեքիաթ: Ովքեր են արդյոք *«նախնիները»*:

Իհարկե, Չիսուսը գիտեր, որ Օրենքը Մովսեսն էլ տվել է, և Աստված ինքն էր խոսում Մովսեսի միջոցով, բայց որովհետև փարիսեցիները

չգիտեին Օրենքի և մարդկանց սովորույթների միջև եղած տարբերությունը, նա չէր կարծում, որ նրանք իրապես գիտեին Օրենքը հոգով ու ճշմարտությամբ: Նա հասկանում էր, որ նրանք որևէ գաղափար չունեին այն մասին, թե Աստված իրականում ինչ ի նկատի ուներ պատվիրանները տալով: Նրանք գաղափար անգամ չունեին այն մասին, որ սիրով գործող հավատքը միակ ուղին էր, որով դրանք կարող էին իրագործվել, այդ պատճառով էլ նա մեջբերումը կատարում է այնպես, ինչպես նրանք այն հասկանում են, այն է՝ մարդկանց մեռած ավանդույթները, Օրենքի տառը՝ զուրկ հոգուց:

Չամենատուրություններ

Չհսուսն այնուհետև ասում է. «*Բայց ես հայտարարում եմ ձեզ...*»: Այլ կերպ ասած «**Օրենքն իրագործելը** նշանակում է...», կամ էլ «**Սերն ասում է...**». այնուհետև նա սկսում է այնտեղից, որտեղից սերն է բխում, այսինքն՝ սրտից: Նախ և առաջ, նա բացահայտում է մեր սիրտը, որպեսզի մենք կարողանանք ընդունել այն փաստը, որ հաճախ մեր դրդապատճառներն ու ցանկությունները սխալ են, այնուհետև նա ցույց է տալիս մեզ, թե ինչպես պետք է ապրել ներքին կյանքից ելնելով ի հակադրություն արտաքին գործողության: Ես հենց սրտի այդ վերաբերմունքն եմ փնտրելու այս վեցը օրինակներում:

Չավատացած եմ, որ Աստված չի կարող մեր կյանքում որևէ բանի հետ հաշիվները մաքրել, քանի դեռ մենք չենք ընդունել, որ դրանք գոյություն ունեն ու կարիք ունեն լուծման: Ինչպես կարող է արդյոք Աստված հաշիվները մաքրել իմ գոռոզության հետ, եթե ես հավատացած եմ, որ խոնարհ մարդ եմ: Դա երբեք տեղի չի ունենա: Ես կմնամ այդպես գոռոզ ու կսովորեմ իմ գոռոզությունն արդարացնել: Արտաքին խոնարհությունը հաճախ քրիստոնյայի սրտում ու կյանքում եղած գոռոզության ամենամեծ քողարկումն է: Ակնհայտ է, որ արտաքին գործողությունը ճիշտ կլինի, եթե մեր դրդապատճառների հետ հաշիվները պարզված լինեն, բայց քանի դեռ մենք չենք փոխել մեր սիրտը, մենք

Կեղծավորի կյանք ապրելու վտանգի տակ ենք ու իրականում երբեք էլ չենք սիրի մեր մերձավորին, ինչպես ինքներս մեզ:



ԳԼՈՒԽ 8

Սպանությունն Օրենքում

Լսեր էք, թե ըսուեցաւ նախնիքներուն. "Մի՛ սպաններ": Ո՛վ որ սպաննէ, արժանի պիտի ըլլայ դատաստանի:

Մատթեոս 5:21

Ո՛վ որ մարդու արին թափէ, իր արիւնն ալ մարդէ պիտի թափուի, քանի որ Աստուած իր պատկերով ստեղծեց մարդը:

Ծննդոց 9:6

Ձեր բնակած երկիրը մի՛ պղծէք, քանի որ արիւնը կը պղծէ երկիրը. իր մէջ թափուած արիւնին համար՝ երկրի մը ուրիշ բանով քաւութիւն չ'ըլլար, բայց միայն զայն թափողին արիւնով:

Թվոց 35:33

Հիսուսի առաջին օրինակը սպանության մասին է: Մենք, նախ և առաջ, պետք է տեսնենք Մովսեսի Օրենքից, թե արդյոք այն, ինչ Հիսուսն ասում էր, եկել էր հին ժամանակներից ու ճիշտ մեջբերում էր: Համոզված եմ, որ անգամ ոչ-քրիստոնյաները պիտի ակնկալեն այս պնդումն Աստվածաշնչում գտնելու, և, իհակե, սա Տաք պատվիրաններից մեկն է բերված Ելից 20:13-ից. Մի սպանիր: Մարդասպանությունը բռնության ծայրահեղագույն գործողությունն է:

Առաջին հիշատակում

Սակայն Տասը պատվիրաններում չի, որ Աստված սահմանել է այս Օրենքը: Մենք պետք է հետ գնանք Ճննդոց, որպեսզի գտնենք, թե որտեղ է Աստված սպանությունը մահվան դատապարտման արժանի հանցանք համարել: Կայենը Ադամի և Եվայի առաջնեկը, Աստծու կողմից անհծված էր, սակայն հետաքրքիր է, որ նա իր հանցանքի համար ստիպված չեղավ վճարելու իր իսկ արյունով:

Նոյի օրերում, երբ Աստված ջրհեղեղն ուղարկեց ողջ երկիրը կործանելու համար, դա ամեն բանի համար պատիժ էր: Բռնությունը ծածկել էր երկիրը, և դրա պատճառով թափված արյունը *գետնից դեպի Աստված էր գոռում*: Երկրի կործանումից հետո Աստծու սահմանած առաջին բառերը սպանության ու դրա դիմաց պահանջվող պատժի վերաբերյալ էին: Աստված Նոյին ասաց. *«Ո՛վ որ մարդու արին թափէ, իր արինն ալ մարդէ պիտի թափուի, քանի որ Աստուած իր պատկերով ստեղծեց մարդը»* (Ծննդոց 9:6): Ուրեմն այս օրենքը սահմանվեց Նոյի ժամանակ: Նոյն ապրել է Մովսեսի ծննդից հարյուրավոր տարիներ առաջ, ուրեմն Մովսեսը միայն հաստատում էր այս օրինադրությունը:

Եզակի պնդումը չի կարող ճիշտ լինել

Այս շարքի առաջին գրքում ես ցույց տվեցի, որ եզակի պնդումը երբեք չի կարող հոգևոր ճշմարտություն փոխանցել: Եզակի պնդումը որպես սրբատեքստ գործածելը միշտ էլ սխալ է, քանզի բոլոր պնդումներն էլ կարիք ունեն համապատասխան հայտնության, այլ սուրբ գրությունների հետ համեմատության, և պետք է հաշվի առնվի համատեքստը¹: Օրենքի մնացյալ գրքերը շատ լույս են սփռում Տասը պատվիրանների եզակի պնդումների վրա: «Մի սպանիր» պնդումը որևէ իմաստ չունի առանց Օրենքի մնացյալ ուսմունքի: Աստված շարունակում է՝ ասելով, որ նրանք շատ բաներ կարող են սպանել: Նրանք կարող էին սննդի և հագուստի համար կենդանիներ սպանել:

Նրանց ցուցումներ տրվեց սպանելու Քանանում եղած տղամարդկանց, կանանց և երեխաներին՝ Աստծու արդարադատությունն իրագործելու համար. Աստված նաև մահվան դատավճիռ է սահմանում ոչ միայն սպանության, մարդկանց արյուն թափելու համար, այլ շնանալու, անհնազանդության, անասունների հետ սեռական հարաբերություններ ունենալու և Աստծու աչքին այլ գարշանքների համար²:

Տառը կամ ոգին

Հավատացած եմ, որ Աստծու ժողովուրդը թերըմբռնեց Օրենքի ոգին, և Լեռան քարոզում Հիսուսը ոչ թե փոխում կամ վերացնում էր այն, այլ ցույց էր տալիս Օրենքի իրական ոգին, որն իր օրերում կատարելապես բացակայում էր: Նրանց ողջ ունեցածը մեռած պատյան էր, փտող դիակ՝ որևէ կարեկցանքից կամ հավատքից զուրկ: Օրենքը երբեք չէր ներկայացված՝ որպես վերջնական լիազորություն, այն է՝ որպեսզի մեզ ցույց տար, թե որքան հեռուն կարող ենք գնալ՝ նախքան հանցանք գործելը: Պողոս առաքյալն ասում է, որ այն ներկայացվեց՝ մեր մեղսավորությունը ցույց տալու նպատակով: Օրենքի պատիժն Աստծու արդարադատությունը ցուցադրելն է, բայց այն նաև ապագա օրինազանցների համար հետ պահող միջոց է հանդիսանում³:

Կեղծավորություն

Աստված չի կամենում, որ մենք արդար զգանք, քանի որ սպանություն չենք գործել: Համոզված եմ, որ Քրիստոնյաների ինստունսինը տոկոսը կարող են ասել, որ սպանություն չեն գործել, և որ մաքուր խիղճ ունեն: Բայց եթե այս կարճ պնդումն այն բանի համար է, որպեսզի ինձ հուշի, թե որքան հեռուն կարող եմ գնալ՝ նախքան դատապարտված զգալը, ապա սխալ չի լինի, որ ես եղբորս ասեմ: Ես կարող եմ նրան դանակով շատ անգամ հարվածել ու թողնել, որ մեռնի,

բայց եթե նա ապրի, ապա ես պահպանել եմ միևնույն Օրենքը, ինչպես այդ իննսուները տոկոսը: Ես սպանություն չեմ գործել: Սա կարող է հիմար օրինակ թվալ, բայց զարմանալի է, թե որքան հեռուն կգնան քրիստոնյաները դեպի սպանություն տանող գործընթացում՝ թաքնվելով Օրենքի պնդման հետևում ու իրենց արդարացված զգալով:

Կեղծավորություն սրտում

Լեռան քարոզի երկու մեծ թեմաներն են կեղծավորությունն ու ընչաքաղցությունը: Այժմ, երբ Հիսուսը մեզ երանություններում ցույց է տվել սրտի կատարյալ դիրքորոշումներն ու դրդապատճառները, նա պետք է մեզ բացահայտի այն փաստը, որ մենք դեռևս Ադամի ետությունն ունենք: Այն դեռ շատ լավ կենդանի է մեր գաղտնի դրդապատճառներում ու ցանկություններում, և մենք հաճախ դրանք իրագործում ենք:

Ամեն անգամ, երբ ես քարոզում եմ այս դասերը և այն վեցը օրինակները, որոնք Հիսուսը բերում է, հասկանում եմ, որ սրտումս մեղավոր եմ բոլոր վեցի համաձայն: Անգամ եթե Աստուծու շնորհով դրանք արտաքնապես չեն արտահայտվում, ես շարունակաբար բացահայտում եմ սրտումս եղած զայրույթը, ցանկասիրությունն ու գոռոզությունը, որոնք շատ կուզենայի որ թաքնված մնան իմ սրտում, և կմնան հավետ թաքնված ու ծածկոցի տակ կշարունակեն իրենց գաղտագողի գործունեությունը, եթե պարբերաբար չբացահայտվեն: Սրանց հետ հաշիվները երբեք էլ չեն պարզվի, քանի դեռ լույսի ներքո չեն եկել:

Փոփոխությունը գալիս է խոստովանությամբ

Փոփոխությունը միայն գալիս է խոստովանությամբ, իսկ խոստովանությունը գալիս է միայն հայտնությունից հետո: Քրիստոնյաները երկու ետություն ունեն, ուրեմն մենք ոչ միայն Քրիստոսի

և իր մաքրության հայտնության կարիքն ունենք, այլև մեր իրական անձանց մասին հայտնության ⁴:

Այն հայտնությունը, որ քրիստոնյան Նույնպես կարող է Աստծու աչքին լինել կատարյալ կեղծավոր, շատ ցավոտ է, և հենց սա է պատճառը, որ այդքան քիչ քրիստոնյաներ են հասնում հասունության ու Քրիստոսի եությանը: Նրանց ուսմունքն ու Աստծու և գրավոր խոսքի մասին ունեցած գիտելիքը մարդկանց առջև թաքցնում են նրանց վճռականության պակասը: Ուսմունքներն ու գիտելիքը մեր սրտերը երբեք չեն ծածկի Աստծու կամ մի խորաթափանց քրիստոնյա եղբոր առաջ:

Նշումներ

1. *Գիրք 1 «Կարող են արդյոք իրական քրիստոնյաները ոտքի կանգնել», գլուխ 13:*

2. *Տես Ծննդոց գիրք 22:18-19 և 21:14-18:*

3. *Ամբողջ Իսրայելը լսելով թող վախճայ, որ անգամ այսպիսի չարիք մը չգործե՛ ձեր մէջ (Բ Օրինաց 13:11):*

...որպէսզի ամբողջ ժողովուրդը լսելով վախճայ եւ անգամ՝ մըն ալ յանդուզն չըլլայ (Բ Օրինաց 17:13):

...որպէսզի ուրիշները լսելով վախճան, եւ ասկէ ետք՝ անգամ՝ մըն ալ ձեր մէջ այսպիսի չար արարք մը չգործեն (Բ Օրինաց 19:20):

Չետեւաբար անոր քաղաքին բոլոր մարդիկը թող քարկոծեն զայն, որպէսզի մեռնի. այսպէս՝ չարութիւնը քու մէջէդ պիտի բնաջնջես, եւ ամբողջ Իսրայելը լսելով պիտի վախճայ (Բ Օրինաց 21:21):

4. *Պետրոս առաքյալը՝ Չիսուսի հրաշագործ հոգևոր ծառայությունում լինելուց հետո էլ այն հայտնության կարիքն ուներ, որ ինքը մեղսագործ էր՝ նախքան Չիսուսը նրան կպատգամեր առաքյալ լինել՝ հետևողի փոխորեն (տես Ղուկաս 5:4-9 և այս շարքից՝ Գիրք 1 գլուխ 3):*



ԳԼՈՒԽ 9

Սպանությունը սրտում

...Բայց ես կը յայտարարեմ ձեզի. "Ո՛վ, որ զուր տեղը բարկանայ իր եղբոր դէմ՝ արժանի պիտի ըլլայ դատաստանի: Ո՛վ որ "ապուշ" ըսէ իր եղբոր՝ արժանի պիտի ըլլայ ատեանի դատապարտութեան: Ո՛վ որ "յիմար" ըսէ իր եղբոր՝ արժանի պիտի ըլլայ գեհե՛նի կրակին:

Մատթեոս 5:22

...ու եսաւ իր սիրտին մէջ ըսաւ. «Իմ հօրս սուգին օրերը մօտ են, յետոյ եղբայրս՝ Յակոբը պիտի սպաննեմ:

Ծննդոց 27:41

Մի՛ հաւատար անոր շնորհալի խօսքերուն, Որովհետեւ անոր սիրտին մէջ եօթը զարչելի բան կայ:

Առակաց 26:25

Յիսուսն այժմ սկսում է աշակերտի սիրտն ու դրդապատճառները բացահայտելու գործընթացն այս առաջին օրինակով, և նա գնում է ճիշտ դեպի սպանության արմատը՝ մեր սիրտը: Յենց այստեղ են թաքնվում մեր գաղտնի ցանկությունները, տենչանքները, կրքերն ու բարկությունը: Ամեն մեղք սրտում է սկսվում, և շատ ժամանակ առաջ, նախքան այն ֆիզիկապես իրեն կցուցաբերի: Ոչ մի ֆիզիկական դրսևորում ի հայտ չի գա, եթե այն չի բխում սրտից:

Փուլ առաջին. բարկություն

Բարկությունը սպանության սկիզբն է, արմատը, քանզի ոչ ոք չի սպանի մեկին, ում սիրում է: Բարկությունը սկսում է սրտում, և հենց այստեղ էլ այն պետք է մնա, ու հաշիվները պիտի մաքրվեն դրա հետ: Աստված տեսնում է, որ մենք սպանության նախանշաններն ունենք մեր սրտում ամեն անգամ, երբ մենք առանց որևէ խելամիտ պատճառի բարկանում ենք: Եթե անկեղծ լինենք, ապա հիմնականում հենց այսպես էլ լինում է: Մարդիկ կամ իրավիճակները մեզ չեն բարկացնում, այլ միշտ էլ խնդիրը տվյալ իրավիճակի նկատմամբ մեր պատասխան ռեակցիան է: Իրավիճակը մեզ չի կարող զայրացնել: Մենք ենք ընտրում զայրանալը: Մեկ այլ անձ հնարավոր է, որ միևնույն իրավիճակից չզայրանա՝ ապացուցելով, որ դա միշտ էլ մեր պատասխանատվությունն ու որոշումն է: Մենք ինքներս մեզ թույլ ենք տալիս բարկանալ: Արդյոք հիանալի չէր լինի, եթե մենք կարողանայինք այս արմատի հետ մեր հաշիվները պարզեինք, նախքան երկրորդ փուլը կդրսևորվի:

Հիսուսը չի ասում, որ մենք այս փուլում պիտի դատապարտվենք որպես մարդասպաններ: Նրա ասածն այն է, որ մենք դատաստանի **վտանգի տակ** ենք: Մենք սկսել ենք սայթաքուն ճանապարհը, որի վերջը սպանությունն է:

Փուլ երկրորդ. «ապուշ»

Եթե դուք «ապուշ» ասեք ձեր եղբորը, որ նշանակում է անարժեք, ունայն, դատարկ կամ այլ նման արտահայտություններ, ապա մենք մի փուլ առաջադիմած կլինենք՝ դեպի սպանությունը: Բանտերում կատարած աշխատանքի փորձից ելնելով կարող եմ ասել, որ սպանության համար դատապարտված մարդկանց մեծամասնությունն այդ գործողությունը չի կանխամտածել: Նրանք կրել են այն գործընթացների հետևանքը, որ մենք այժմ քննարկում ենք, այն է՝

չգապված բարկություն: Սխալ մի կատարեք սրա վերաբերյալ. եթե մենք հաշիվները չմաքրենք մեր սրտում եղած բարկության հետ, ապա մենք արդեն շարժման մեջ ենք դրել սպանության գործընթացը: Բարկությունը, եթե այն թողնվի առանց տարբերակման, միշտ էլ կհանգեցնի հետագա բռնության և, ի վերջո, սպանության: Արդյոք ինչու ենք մենք մի փուլ առաջխաղացել, երբ ասում ենք «ապուշ»: Դե, սրտում եղած բարկությունը կարող է այնտեղ մնալ՝ առանց այդ մասին մեզանից բացի մեկ ուրիշի գիտենալու: Բայց հենց այն խոսքերի է վերածվում, այն արդեմ մի փուլ առաջ է շարժվել:

Ամուսնական հարաբերություններում չափազանց հեշտ է բարկանալ ու ամեն ինչ «ներսը գցել» ընտանիքը չքայքայելու, երեխաների, կամ էլ (ավելի վատ) հյուրերի առջև ամոթով չմնալու համար: Նույնն է նաև աշխատավայրում, և, իհարկե, արդյոք ով կցանկանա իրենց բարկությունը եկեղեցում ցույց տալ (չնայած նրան, որ ամեն ինչ «ջրի երես է դուրս գալիս» գործնական հանդիպման կամ ծխական եկեղեցական խորհրդի ժամանակ): Մենք զգում ենք, որ պետք է մեր բարի համբավը պաշտպանենք եկեղեցում՝ քրիստոնյաների մոտ ավելին, քան որևէ այլ վայրում: Ահա թե ինչու է, որ քրիստոնյաները հաճախ ավելի շատ կեղծավորություն են ցուցաբերում եկեղեցում, քան դրանից դուրս:

Կատուն պարկից դուրս

Որևէ մեկին ցավոտ մի բան ասելու միակ նպատակը նրան հուզական կամ մտավոր չարիք պատճառելն է: Բռնությունն այժմ դուրս է եկել մեր սրտից դեպի արտաքին աշխարհ մեր բերանի միջոցով: Սա դեռ \$իզիկական բռնություն չէ, բայց այնուամենայնիվ, բռնություն է. սա բանավոր բռնություն է: Մենք այդ արտահայտությունները կիրառում ենք մեր առօրյա խոսակցական լեզվում. «Ես նրան մի լավ չափեցի», «Մեջտեղից պատռեցի նրան», և այլն: Եթե սրանք բռնի արտահայտություններ չեն, որ բացահայտում են, թե ինչ է մեր սրտում,

ապա ես չգիտեմ, թե ինչ են դրանք: Դրանք երբեք չպետք է բերանից դուրս գային: Մենք պետք է սրտի հետ հաշիվները մաքրած լինեինք՝ ինչպես սերը կաներ, բայց մենք արդարացնում ենք մեր բանավոր բռնությունն ու թաքնվում Օրենքի հետևում, որովհետև մենք դեռ ֆիզիկական բռնություն չենք գործադրել:

Այս փուլում բարկությունը ոչ միայն մեր սրտում է, այլ նաև օդի ալիքներում: Մենք «կատուն պարկից դուրս ենք թողել», և արդեն անհնար է այն տեղը դնել. վնասն արդեն հասցվել է: Մենք չենք կարող բառերը հետ դնել բեր բերանը. սա միակողմանի գործընթաց է մեր սրտից: Որևէ հնարավոր ուղի չկա, որով ասված խոսքերը վերադառնան մեր բերանը: Դրանք այժմ կլինեն մարդկանց ականջներում, մտքում ու սրտում:

Արդյոք կարող եմ փոքր-ինչ համարձակ լինել ու ասել, որ եթե մենք բռունցքով մյուս ձեռքին ենք խփում, շրխկացնում դուռը կամ էլ դոփում ոտքերով, ապա դիմում ենք ֆիզիկական բռնության: Սրանք ֆիզիկական գործողություններ են և բռնի գործողություններ, անգամ եթե մենք վնաս չենք պատճառում այն անձին, որի վրա բարկացած ենք: Մենք մեր բարկությունը հանում ենք կահույքի կամ էլ մեր սեփական մարմնի վրա՝ որպես անձնական բռնության ռումբը վնասազերծելու մի ուղի, այն է՝ այն պոտենցիալ սպանությունը, որ սպասվում է, եթե մենք կգսպենք այն այս փուլում:

Փուլ երրորդ. «հիմար»

Առաջին հայացքից այս երրորդ փուլը, որ Հիսուսը մեջբերում է, այն է «հիմար», թվում է, թե այդքան էլ լուրջ չէ՝ որպես առաջին երկու պնդումների պրոգրեսիա, սակայն մենք պետք է սա վերլուծենք այն լույսի ներքո, թե Աստված ինչ կարծիքի է հիմարության մասին: Դավիթ թագավորը Սաղմոսների գրքի 14-ը սկսում է հետևյալ բառերով. *«Անզգամը (հիմարը) ասաց իր սրտի մեջ. Աստված չկա»*: Աստծու աչքին հիմարը, անզգամը նզովված է և հավիտենական պատժի մատնված:

Ամենավատ անեծքը, որ մարդուն կարող ես տալ, նրան կրակի լիճը նզովելն է: Սա անհնազանդ ու անաստված մարդկանց պատիժն է:

Աստծո տեսակետն իմաստության ու հիմարության վերաբերյալ ամեն բան շատ պարզ կդարձնի: Իմաստուն մարդը, Աստծո աչքին, մեկն է, որ ունի գիտելիք և հնազանդ է դրան: Հիմարը մեկն է, որ ունի գիտելիք, սակայն անհնազանդ է դրան: Լեռան քարոզի վերջին այլաբանությունը կատարյալ օրինակ է: Հիսունն ասում է, որ իմաստուն մարդն այն մարդն է, որ լսում է Լեռան քարոզն ու ապրում այն: Հիմարը, ընդհակառակը, այն մարդն է, որ լսում է նույն քարոզը, բայց չի ապրում այն: Այլ կերպ ասած, չհնազանդվելն այն գիտելիքին, որ ունես, անհնազանդություն է, և Աստծո աչքին սա մեզ հիմար է դարձնում:

Պարզ, ոչ հիմար

Այն մարդը, որ պարզ է կամ էլ ցածր մտածողություն ունի, երբեք Աստծու կողմից որպես հիմար չի դասվում: Անտեղյակ մարդն Աստծու աչքին երբեք չի կարող հիմար լինել. միայն այն մարդը, որ գիտելիք ունի, կարող է անհնազանդ լինել այդ գիտելիքին: Ահա թե ինչու մենք պետք է մարդկանց ասենք բարի լուրն ու նրանց գիտելիք տանք ճշմարտության մասին, որպեսզի նրանք արդարացում չունենան, երբ Աստծու առջև կանգնեն:

Այսպիսով, երբ մենք ասում ենք «հիմար», կամ էլ ներկայիս լեզվով ասած՝ «գրողը քեզ տանի», «դժոխքում փոես», այն է «ցանկանում եմ քեզ հավիտենական պատիժ սատանայի ու իր դևերի հետ». սա ամենաուժեղ բանն է, որ կարող ենք պատկերացնել մեր սրտում առանց արտաքին գործողությունների: Հետևաբար, սա սրտում եղած սպանությունն է, այսինքն այն ծայրահեղ հուզումնական ու մտավոր դրությունը, որ նախորդում է ֆիզիկական բռնության գործողությանը:

Այս պահին անգամ սա դեռ սպանությունն չէ, բայց վտանգն ավելի մեծ է, որովհետև մենք ավելի մոտ ենք սահմանային գործողությանն, ու

ավելի դժվար է սրա հետ հաշիվները մաքրելը, որովհետև նախորդ փուլերից յուրաքանչյուրում մեր բարկության ու դառնության համար արդարացում գոյություն ուներ. հակառակ դեպքում մենք այս երրորդ փուլ հասած չեինք լինի: Մեր ինքնարդարացումը պետք է բացահայտվի և մերկացվի: Անհրաժեշտ է, որ մեր վերաբերմունքի մեծ փոփոխություն տեղի ունենա: Միշտ էլ ավելի լավ է հաշիվներ պարզել սկզբի հետ:

Ինքներս մեզ դատելը

Երբ մենք կանգնենք Քրիստոսի դատաստանի առջև, այն է՝ մեծ սպիտակ գահի առջև դատաստանից հազար տարի առաջ, մեր սրտի գաղտնիքները հայտնի կդառնան: Հիսուսը պիտի դատի մեզ ոչ թե մեր գործողությունների համաձայն, այլ մեր վերաբերմունքի, ոչ թե արտաքինի, այլ ըստ ներքինի: Նա մեզ պիտի դատի ոչ թե մեր քայլերի, այլ մեր դրդապատճառների հիման վրա: Ուրեմն, եկեք գիտակից որոշում կայացնենք ու նպատակադրված ջանք գործադրենք հաշիվներ մաքրելու անիմաստ ու անտեղի բարկության հետ՝ քանի դեռ այն կակուղ է և հեշտությամբ կքաղվի մեր սրտից:

*Ուշագի՛ր եղէք՝ որ ո՛չ մէկը չգրկուի Աստուծոյ
չնորհքէն. դառնութեան արմատ մը բուսնելով՝
թող չվրդովէ ձեզ, եւ չատեր չպղծուին անով:*

Եբրայեցիս 12:15



ԳԼՈՒԽ 10

Արատավոր ընծաներ

Ուրեմն, եթէ քու ընծադ զոհասեղանին վրայ բերես, ու հոն յիջես թէ եղբայրդ բա՛ն մը ունի քեզի դէմ, հո՛ն ձգէ ընծադ՝ զոհասեղանին առջեւ. նա՛խ գնա՝ հաշտուէ՛ եղբորդ հետ, եւ ա՛յն ատեն եկուր՝ որ մատուցանես ընծադ: Շուտո՛վ համաձայնէ քու ոտխիդ հետ, մինչ ճամբան եւ անոր հետ, որպէսզի հակառակորդդ չյանձնէ քեզ դատաւորին, իսկ դատաւորը՝ ոստիկանին, եւ բանտը չնետուիս: Ճշմա՛րտապէս կը յայտարարեմ քեզի. "Բնա՛ւ դուրս պիտի չելլես անկէ, մինչեւ որ վճարես վերջին նաքարակիտը":

Մատթեոս 5:23-26

Մի փոքր անհանգստությունը հիմա փրկում է մեզ մեծ անհանգստությունից ապագայում:

Անանուն

Երբեք չպետք է քննադատեք մեկին, եթե ձեր կաշվի վրա չեք զգացել նույնը երկու տարի:

Ռիչարդ Վլրմբրանդ

Սերը միշտ կիրագործի Օրենքը: Սերը հաշիվները կմաքրի մեր սրտի դրդապատճառների հետ, արմատների կամ պատճառների հետ, մինչդեռ Օրենքը միայն կարող է գործ ունենալ հետևանքների հետ: Երբ

սերն ու Օրենքն ամուսնացած են ու մեկ դարձած, այդժամ կատարելություն կտիրի: Բայց երբ այս երկուսն ամուսնալուծված են, մենք հող ունենք կեղծավորություն և մի իրավիճակ բուծելու համար, որը երբեք Աստուծու մտադրությունը չէր, երբ նա իր խոսքերը Մովսեսին տվեց: Հիսուսն ասաց, որ նա եկել էր Օրենքն իրագործելու, բայց արդյոք ինչ է սա նշանակում: Եթե սերն իրագործում է Օրենքը, ապա ի՞նչ կանի սերը: Դե՛, սերն առաջին հերթին միշտ մտածում է ուրիշների մասին: Փոխարենը մտածելու, թե ինչպես են ուրիշները հիասթափեցրել մեզ, սերը կմտածի, թե արդյոք մենք հիասթափեցրել ենք ուրիշներին, և սա ճիշտ այն է, ինչ Հիսուսն ասում է:

Սելեկտիվ տեսողություն

Քսանհինգ տարի շարունակ ես այս հատվածը ճիշտ չէի կարդում և վախենամ, որ շատ ընթերցողներ միևնույն իրավիճակում են: Ես պատկերացնում էի, թե այն ասում էր. «Եթե դու եղբորդ դեմ որևէ բան ունես, գնա ու շտկիր այն»: Բայց այն ասում է ճիշտ հակառակը: այն ասում է. «Եթե եղբայրդ քո դեմ որևէ բան ունի»: Այլ կերպ ասած, եթե դու հիասթափեցրել ես եղբորդ, եթե դու մի բան ես արել, որ նրան վիրավորել է կամ բարկացրել, օգնիր եղբորդ, գնա նրա մոտ ու ամեն բան շտկիր:

Հիսուսը մեզ ասում է սա անել մեր եղբոր հետ նախքան մենք կբերենք մեր ընծան զոհասեղանի մոտ. այլ կերպ ասած, նախքան ինքնարդարացմամբ գործելն ու ինքներս մեզ կեղծավոր դարձնելը:

Այսօր մենք մեր արյան զոհաբերությունները չենք բերում Աստուծու մոտ, այլ բերում ենք նրան մեր պաշտամունքը, մեր գումարն ու մեր շնորհները: Կառաջարկեի, որ եթե մենք մեր եղբորը ստիպել ենք սայթակել ու բարկացած լինել, ապա դա մեր զոհաբերությունը արատավոր է դարձնում, ինչն անընդունելի է Աստուծու համար:

Սաղմոս 51-ում Դավիթ թագավորը ցույց է տալիս, որ նա սա շատ լավ է հասկանում, քանզի տող 16-ում նա ասում է, որ Աստված չի

ախորժում զոհաբերություններ ու չի հավանում ողջակեզներ: Անշուշտ, սա բացատրության կարիք ունի, քանզի մենք գիտենք, որ հակառակն է ճշմարիտ: Դավիթ թագավորը բացատրում է սա ասելով, ճիշտ ինչպես Հիսուսը, որ ողջ իրողության արմատը սիրտն է: Դավիթն ասում է, որ զոհաբերությունները պետք է սրտից ելնեն. «Կոտրած հոգին ու ճնշված սիրտը»: 19-ում նա ասում է, որ Աստված **այդժամ** պիտի ախորժի արտաքուստ զոհաբերությունները:

Արդարեւ զոհէ չես ախորժիր՝ որ զայն մատուցանեն.

Ողջակէզի ալ չես հաւանիր:

Աստուծոյ հաճելի զոհը՝ կոտրած հոգին է.

Կոտրած ու ճնշուած սիրտը, ո՛վ Աստուած, դուն չես արհամարհեր:

Բարի՛ք ըրէ Սիոնի՝ քու բարեհաճութեամբդ,

Կարուցանէ՛ Երուսաղէմի պարիսպները:

Այն ատեն պիտի ախորժիս արդարութեան զոհերէն,

Ողջակէզներէն եւ ամբողջովին այրուած զոհերէն.

Այն ատեն քու զոհասեղանիդ վրայ զուարակներ պիտի մատուցանեն:

Արդյոք ինչքան հաճախ ենք մենք մատուցում Աստծուն մեր արտաքին բառերն ու գործողությունները, երբ մեր սիրտը գոռոզ է ու կարծր, և մենք անգամ չենք ել գիտակցում, որ վիրավորել ենք մեր եղբորն ու չենք սիրել նրան, ինչպես ինքներս մեզ:

Մեղքեր՝ առանց խոսքի

Այնքան հեշտ է վիրավորանք պատճառել մեր եղբորն ու անտեղյակ լինել դրանից: Թույլ տվեք մի պարզ օրինակ բերել: Մեզանից քանիսն են ուրիշներից գիրք վերցրել ու խոստացել վերադարձնել այն կարդալուց անմիջապես հետո: Կարող եմ պատկերացնել, թե ինչպես է մեկն իր կնոջն ասում. «Ես հենց նոր Մորիսի տանն էի, ու նա դեռ իր գրապահապանում է պահում այն գիրքը, որ նրան տվել էի կարդալու

երկու տարի առաջ: Չեմ ցանկանում նրան ամաչեցնել ու խնդրել վերադարձնել այն, բայց շատ կուզենայի, որ նա այն ինձ վերադարձներ»: Եթե ես խոստացել եմ վերադարձնել գիրքն ընկերոջս որոշակի ժամանակ ու չեմ անում դա, ապա արդյոք դա ինձ գող է դարձնում: Դուք դա ինքներդ պիտի որոշեք, բայց դա վստահաբար ձեզ ստախոս կդարձնի:

Սպանել բարի համբավը

Եթե ես քննադատում եմ իմ եղբորն, ուրեմն ես վստահաբար սպանում եմ նրա բարի համբավը, և եթե դա հասնի նրա ականջներին, ուրեմն ես նրան ցավ եմ պատճառում ու ստիպում սայթաքել: Պողոս առաքյալն ասում է, որ անգամ իմ հավատքը, եթե այն սիրով չի ղեկավարվում, կարող է մեկի համար սայթաքման քար լինի¹: Մենք չպետք է ապրենք մի կյանք, որ հաճո է եսին: Ինքնասիրահարվածությունն Աստծու համար ամենամեծ գարշանքն է ու ամեն մեղքի արմատը, և հենց այս փաստի պատճառով է, որ Հիսուսն ասաց, որ մենք պետք է ուրանանք անձն ու սկսենք ապրել ուրիշների համար²:

Սա աշակերտ դառնալու առաջին քայլն է: Այս առաջին օրինակի վերջին երկու տողերը (25 և 26) մեզ ցույց են տալիս, որ եթե մենք խնդրի հետ հաշիվները չպարզենք առաջին փուլում, ապա ավելի դժվար կլինի դրա հետ գործ ունենալ, երբ մենք հասնենք երկրորդ փուլին, և գինը, կամ էլ այն վնասը, որ այն կհասցնի մեր հոգիներին, ավելի մեծ կլինի: Սա պրոգրեսիա է. ոսոխ–դատավոր–ոստիկան–բանտ, և Հիսուսը հասկացնում է, որ վերջին փուլում մենք ոչինչ չենք կարող անել քանի դեռ ամեն ինչի համար չենք վճարել:

Քարտ սիրտ

Ամուսնալուծությունը չի սկսվում դատարանում, այն սովորաբար սկսվում է փոքր դժգոհություններից, որոնք մենք մտքում պահում ենք, օրինակ՝ վառված կերակուրի, չպահված խոստման կամ էլ ատամի խոզանակը միշտ սխալ տեղը դնելու պատճառով: Սրանք փոքրիկ հիմարություններ են, բայց վերջնական արդյունքը, եթե խնդիրը չլուծվի, կարող է կործանարար լինել:

Ես մի ընկեր ունեի, որն ամուսնացած էր Յորքշիրից մի երիտասարդ կնոջ՝ Փոլինայի հետ: Նա մի օր ինձ հետ կիսեց, որ իր կնոջ ծնողները չէին շփվում իրար հետ: Ինձ համար շատ դժվար էր հավատալ դրան, բայց նա ինձ հավաստիացրեց, որ դա ճիշտ էր, քանզի ինքը տեսել էր դա իր իսկ տանը: Ծնողները միմյանց նոթեր էին փոխանցում Փոլինայի միջոցով, որը նրանց միակ դուստրն էր, և նա ասում էր, որ տասնինը տարիների ընթացքում նա երբեք չէր լսել, որ իր ծնողները խոսեին իրար հետ:

Ես ապշահար հարցրեցի, թե ինչպես էր այդ ամենը սկսվել, սակայն նա չգիտեր: Կասկածում եմ, որ անգամ նրա ծնողները գիտե՞նան, թե ինչն էր պատճառը: Իրենց սրտերը մի ժամանակ լի էին միմյանց նկատմամբ սիրով, իսկ այժմ դրանք գրանհիտե էին: Սա ոչ թե ամուսնություն էր, այլ բանտարկություն. նրանք փակվել էին իրենց սեփական եսասեր աշխարհում՝ անզիջում ու անբավ: Ինչ տարբեր կլիներ ամեն ինչ, եթե նրանք հենց սկզբում ներողություն խնդրեին, սիրեին միմյանց ու ամեն ինչ սկսեին սկզբից:

Ինչպես Հիսուսն ասաց իր օրինակի վերջում՝ *նրանք վճարում էին վերջին նաքարակիտը*³: Եկեք նպատակադրվենք սիրել ու ներել մեր սրտում, նախքան բարկությունը իրեն արտաքուստ կցուցադրի, և այդպես անելով մենք կիրագործենք Օրենքը՝ առանց անգամ գիտակցելու: Մենք կսկսենք բավականություն ստանալ Աստծու կատարյալ Օրենքից՝ ինքներս մեզ արդարացնելու ու շնորհի ետևում թաքնվելու փոխարեն:

Նշումներ

1. «Ուրեմն մեզմէ իւրաքանչիւրը հաշիւ պիտի տայ Աստուծոյ՝ ինքնիրեն համար: Ուստի ա՛լ չդատենք զիրար. այլ մանաւանդ սա՛ վճռեցէք, որ ո՛չ մէկը սայթաքում կամ գայթակղութիւն դնէ իր եղբօր առջեւ... ...Սակայն եթէ եղբայրդ տրտմի կերակուրի համար, ա՛լ սիրով չես ընթանար. քու կերակուրովդ մի՛ կորսնցներ ա՛ն՝ որուն համար Քրիստոս մեռաւ: Ուրեմն հայիոյութիւն թող չըլլայ ձեր բարիին համար, քանի որ Աստուծոյ թագաւորութիւնը կերակուր ու խմելիք չէ, հապա արդարութիւն, խաղաղութիւն եւ ուրախութիւն՝ Սուրբ Յոգիով:

...Ուրեմն հետամո՛տ ըլլանք այն բաներուն՝ որոնք խաղաղութիւն կը հայթայթեն, եւ այն բաներուն՝ որոնցմով շինութիւն կ'ըլլայ իրարու: Մի՛ քանդէք Աստուծոյ գործը կերակուրի համար: Արդարեւ բոլոր բաները մաքուր են. սակայն գէշ են այն մարդուն համար՝ որ կ'ուտէ գայթակղեցնելով: Լաւ է ո՛չ միս ուտել, ո՛չ գինի խմել, ո՛չ ալ որեւէ բան ընել՝ որով եղբայրդ կը սայթաքի, կը գայթակղի կամ կը տկարանայ: Դուն հաւա՞տք ունիս. քեզի՛ վերապահէ զայն՝ Աստուծոյ առջեւ. երանի՛ անոր, որ չի դատապարտեր ինքզինք անով՝ որ ինք կը գնահատէ: Բայց ա՛ն, որ կը տատամսի, եթէ ուտէ՝ կը դատապարտուի, քանի որ հաւատքով չէ որ կ'ուտէ. արդարեւ ամէն ինչ որ հաւատքով չէ՝ մեղք է» (Յովմեացիս 14:12-23):

2. «Այն ատեն Յիսուս ըսաւ իր աշակերտներուն. «Եթէ մեկը ուզէ զալ իմ ետեւէս, թող ուրանայ ինքզինք, վերցնէ իր խաչը, ու հետեւի ինձի» (Մատթեոս 16: 24):

3. Բազմաթիվ օրինակներ կան, երբ Աստծո ժողովուրդն ստիպված էր վճարել վերջին նաքարակիտը: Աստծո ժողովուրդը՝ Իսրայելը, ուղարկվեց Բաբելոն, որովհետև նրանք այս ամենի հետ հաշիվները չէին պարզել ճիշտ ուղղուց սայթաքելու սկզբնական փուլերում՝ չնայած մարգարեների բազմաթիվ հորդորանքների, և որոշված էր, որ

*յոթանասուն տարին կլինի Աստծու պատիժը: Նրանք վճարեցին Աստծու
առաջարկած ողջ գինը (տես Երեմիա 29:10, Դանիել 9:2).*

*Նաև դիտարկեք Հիսուսի այլաբանությունը Մատթեոս 18:23-ում: Նա
ասում է ճիշտ նույնը գինը վճարելու մասին, մինչ պատիժը կատարյալ
է: 34-35-րդ տողերը պարզորեն ցույց են տալիս, որ այս
այլաբանությունը որ թե օտարականների համար է, այլ աշակերտների:*



ԳԼՈՒԽ 11

Շնանալն Օրենքում

*Լսեր էք թէ ըսուեցաւ. "Շնութիւն մի՛ ըներ":
Բայց ես կը յայտարարեմ ձեզի. "Ո՛վ որ կը
նայի կնոջ մը՝ անոր ցանկալու համար, արդէն
անիկա իր սիրտին մէջ շնութիւն ըրած է անոր
հետ":*

Մատթեոս 5:27-28

*Որովհետեւ եթէ Մովսէսի հաւատայիք, ինծի՛ ալ
պիտի հաւատայիք, քանի որ ան գրեց իմ
մասիս: Բայց եթէ չէք հաւատար անոր
գրածներուն, ի՞նչպէս պիտի հաւատաք իմ
խօսքերուս:*

Հովհաննես 5:46-47

Յիսուսի երկրորդ օրինակը հատկապէս տեղին է քանմեկերորդ դարում ապրողների համար: Շնանալն այսօր գրեթէ ընդունելի է արևմտյան հասարակութիւնում: Խառնասեռութիւնն ու անբարոյականութիւնը, որ տիրում է թագավորական ընտանիքներում ու քաղաքական գործիչների շրջանակներում, այլ ոչ միայն փոփի և շուրթիկների ներկայացուցիչների մեջ, դառնում է ստանդարտ: Ցավոք սրտի, սա ներթափանցել է եկեղեցի, և փոխարենը եկեղեցին դառնա աշխարհի լույսը, աշխարհի խմորիչն է տարածվել եկեղեցում: Արդյոք ինչպէս է դա տեղի ունեցել:

Արդյոք ինչպէս է, որ հոգևոր սպասավորները բացահայտվել են տարբեր շնացող կապեր ունենալու մեջ: Արդյոք ինչպէս է, որ

ամուսնալուծության մակարդակը եկեղեցում միևնույնն է, ինչ եկեղեցուց դուրս:

Ես կուզենայի նշել, որ շատ հաճախ եկեղեցին քարոզել է արտաքին պահվածքի վերաբերյալ, փոխարենը՝ սրտի փոփոխության: Երբ մենք չենք կամենում գործ ունենալ սրտում եղած մեղքի արմատների հետ, փտախտը դանդաղ ներս է սողոսկում, ինչպես քաղցկեղ, և գաղտնի ուտում է ներսից այնքան ժամանակ, մինչև արդեն շատ ուշ է լինում այն կառավարել, և հետևանքները դառնում են ճակատագրական:

Անբարոյականության այս պոտենցիալ բացահայտումը եկեղեցում թաքնված է մնացել, բայց դրա արտաքին արտահայտումը անխուսափելի է, և այժմ այն արագորեն մակերես է դուրս գալիս, քանի որ արմատների հետ շատ տարիներ առաջ հաշիվները չեն պարզվել:

Ավանդույթ, թե Աստուծու Օրենք

Եկեք կիրառենք մեր առաջին փորձությունը Հիսուսի այս պնդմանը. «Մի՛ շնանա», և տեսնենք, թե արդյոք այն, ինչ դարերով փոխանցվել էր, մարդկանց ավանդույթն էր, թե՞ Աստուծու խոսքը: Ես կարծում եմ, որ ամեն մի քրիստոնյա գիտի, որ սա Տասը պատվիրաններից մեկն է (Ելից 20:14):

«Ճնանալ» բառը շատ հաճախ չէ, որ հանդիպում է Աստվածաշնչում, և այն մեծամասամբ կիրառվում է ոչ-ֆիզիկական իմաստով՝ հոգևոր դավաճանության մասին խոսելիս: Հին կտակարանում հոգևոր դավաճանությունը Իսրայելի և Նրա սիրելեկանների մեջ էր, իսկ Նոր կտակարանում այն եկեղեցու և աշխարհի մեջ է:

Ի՞նչ է շնանալը

Այն սուրբ գրությունները, որոնք ֆիզիկական դավաճանության մասին են խոսում ու բացատրում, թե դա ինչ է, իրոք, շատ քիչ են: Ահա դրանք.

«Ո՛վ որ ուրիշ մարդու մը կնոջ հետ շնութիւն ընէ, այսինքն իր ընկերին կնոջ հետ շնութիւն ընողը՝ անչո՛ւշտ պիտի մեռցուի. շնացո՛ղն ալ, շնացեա՛լն ալ պիտի մեռցուին» (Ղեւտացոց 20:10):

«Արդարեւ, անոնք Իսրայէլի մէջ անղգամութիւն գործեցին. իրենց ընկերներուն կիներուն հետ շնութիւն ըրին...» (Երեմիա 29:23):

«Շնութիւն ընող կնոջ մը պէս եղար, որ իր ամուսինին տեղը օտարներ կ'առնէ» (Եղեկիել 16:32):

«Եթէ մէկը ամուսնացած կնոջ մը հետ պառկած գտնուի, երկուքն ալ պիտի մեռնին» (Բ Օրինաց 22:22):

Մովսեսի Օրենքի այս մի քանի մեջբերումներից, որ բացատրում են, թե Աստված ինչ ի նկատի ունի շնանալ ասելով, ես եկել եմ հետևյալ եզրակացությանը: Շնանալը սեռական կապ է ամուսնացած կնոջ հետ (ոչ ամուրի կնոջ), կամ ամուսնացած կնոջ կապը տղամարդու հետ (թե ամուսնացած և թե ամուրի):

Սա կարող է խիստ մեկնաբանություն թվալ և խտրականացված կանանց նկատմամբ, բայց մենք պետք է հաշվի առնենք այն, որ Մովսեսի Օրենքի ներքո մարդը կարող էր ավելին քան մեկ կին ունենալ, և դա շնանալ չէր համարվի: Աստված օրենքներ ստեղծեց երկրորդ կնոջը պաշտպանելու համար, օրինակ՝ Ելից 21:10-ում. *«Եթէ իրեն ուրիշ կին առնէ, անոր ուտելիքը, հանգերձն ու մերձաւորութիւնը պիտի չպակսեցնէ»*: Սակայն կինը երբեք չէր կարող ունենալ ավելին, քան մեկ ամուսին. դա նրան պոռնիկ կդարձներ: Ինչպես մենք կտեսնենք Հիսուսի ամուսնալուծության վերաբերյալ հաջորդ օրինակում, Մովսեսի Օրենքում որևէ պայման չկար, որ կնոջը հնարավորություն տար իր ամուսնուն հեռացնելու ու նրան ամուսնալուծության վկայական տար:

Մեկ տղամարդ՝ չորս կին

Իսրայելի տասներկու տոհմերը հիմնադրվեցին մեկ տղամարդու՝ Յակոբի, և նրա երկու կանանց ու նրանց անձնական աղախիսների հետ ունեցած հարաբերության հիման վրա: Դավիթ թագավորը, Աստծու սրտի համաձայն մի մարդ, շատ կանայք ուներ, և Աստված որևէ բան դրա դեմ չասաց: Միայն այն ժամանակ, երբ Դավիթը **մեկ այլ մարդու կնոջ** վերցրեց կնության, Աստված դժգոհ եղավ: Նկատեք այն, ինչ Աստված ասաց նրան Նաթան մարգարտի միջոցով: *«Տիրոջդ տունը քեզի տուի, տիրոջդ կիները քու ծոցդ դրի...» (Բ Թագավորաց 12:8):*

Խնդրում եմ, մի կարծեք, թե ես բազմակնություն եմ քարոզում. բոլորովին ոչ: Աստված շատ բան թույլ տվեց **մարդու սրտի կարծրության պատճառով**, որոնք ի սկզբանե չպետք է լինեին: Ես փորձում եմ ցույց տալ, որ մենք պետք է անկեղծորեն նայենք Աստվածաշնչին ու չփորձենք այն մեր սեփական մշակույթին հարմարեցնել:

Օրինակ, որևէ պատիժ չկար այն բանի համար, երբ տղամարդը պռնիկի հետ էր մերձենում: Կույսին գայթակղելու և շատ այլ սեռական մեղքերի համար պատիժ գոյություն ուներ և հատուցման կարիք կար, բայց միայն շնանալն էր մահվան դատավճռի արժանանում՝ մի պատիժ, որն իր դաժանությամբ հավասար էր կանխամտածված սպանությանը: Ես փորձում եմ ցույց տալ, որ ոչ թե սեռական անբարոյականությունը մեղսավոր չէ և Աստծուն տհաճ, այլ որ շնանալն իր սեփական դասակարգումն ունի, որն Աստծու աչքին շատ ավելի դաժան է և ծանրագույն պատժին է արժանանում:



ԳԼՈՒԽ 12

Շնանալը՝ սրտում

Բայց ես կը յայտարարեմ ձեզի. "Ո՛վ որ կը նայի կնոջ մը՝ անոր ցանկալու համար, արդէն անիկա իր սիրտին մէջ շնութիւն ըրած է անոր հետ": Ուստի եթէ աջ աչքդ կը զայթակղեցնէ քեզ, հանէ՛ զայն ու նետէ՛ քեզմէ. որովհետեւ աւելի օգտակար է քեզի՝ որ անդամներէդ մէկը կորսուի, բայց ամբողջ մարմինդ չնետուի գեհեներ:

Մատթեոս 5:28-29

Շնացողներ, չէ՞ք գիտեր թէ այս աշխարհի բարեկամութիւնը՝ Աստուծոյ դէմ թշնամութիւն է. ուրեմն ո՛վ որ կը փափաքի բարեկամ ըլլալ աշխարհի, ինքզինք թշնամի կ'ընէ Աստուծոյ:

Հակոբոս 4:4

...Որովհետեւ ան իր անձին մէջ ինչպէս որ կը մտածէ՝ այնպէս է...:

Առակաց 23:7

Մենք Աստծու խոսքից գիտենք, որ Օրենքի համաձայն, շնանալը մահվան արժանի մեղք է: Այժմ մենք պետք է տեսնենք, թե ինչպէս ենք մենք այս Օրենքն իրագործում սիրո միջոցով:

Ամեն մի մեղք սրտում է սկսվում: Եվայի մեղքը Դրախտի այգում սկսել էր սրտում: Նա տեսավ, որ *ծառը ցանկալի էր*: Նրա սիրտը, նրա անձը տեսչում էր նրան, ինչ արգելված էր: Նրա ցանկությունները նրան

մեղքի ուղղեցին: Սա նրա անհնազանդության սկիզբն էր: Եթե նա այդ միտքը կանգնեցներ, երբ այն դեռ իր սրտում էր, ապա դա կլիներ ամեն ինչի ավարտը, բայց նա թույլ տվեց, որ միտքը զարգանար իր սրտից դեպի ձեռքերն, ու հասավ մրգին և կերավ այն:

Ցանկացած ֆիզիկական մեղք արտայատումն է այն բանի, որն արդեն սրտում է մեղք, բայց որովհետև ոչ ոք չի կարող մեր սրտերը տեսնել, մենք այն զվարճացնում ենք ցանկասիրությամբ, հաճույք ստանում դրանից և ինքներս մեզ գրգռում: Բայց կամքի ուժով՝ համատեղված այն բանի նկատմամբ վախով, որ կարող է բացահայտվել, թե մենք ինչ ենք իրականում, մենք թույլ չենք տալիս, որ այն երևան գա, այդպիսով արտաքուստ պահելով օրենքը:

Սա կեղծավորություն է, որ Հիսուսն ասում էր, որովհետև Օրենքը միշտ էլ սեր է պահանջել: Եթե Եվան Աստծուն սիրեր՝ ինքնիրեն սիրելու փոխարեն, ապա նա ցանկասեր մտքի հետ հաշիվները պարզած կլիներ: Ամեն մեղք Աստծու նկատմամբ սիրո պակաս է, քանի որ սերը գործ ունի սրտի, այլ ոչ գործողության հետ: Դա հենց այն է, ինչ Հիսուսն է ասում: *Եթե նայեք կնոջ՝ նրան ցանկանալու նպատակով, ապա ձեր սրտում արդեն նրա հետ շնացել եք:*

Մենք բացահայտման կարիք ունենք

Համոզված եմ, որ շատ ընթերցողներ՝ ներառյալ ես ինքս, կարող ենք ասել, որ ամուսնանալուց հետո նրանք չեն շնացել: Փարիսեցիներն այս կարգում էին և թաքնվում էին Օրենքի սահմանումների հետևում՝ ասելով, թե նրանք Օրենքի մեռած տառը չէին կոտրել: Բայց արդյոք քանի ընթերցող կարող է ասել, որ ամուսնությունից ի վեր նրանք երբեք չեն նայել որևէ այլ կնոջ՝ առանց նրա նկատմամբ ցանկություն կամ առանց սեռական ֆանտազիա ունենալու: Արդյոք քանի տղամարդ իր կնոջ հետ սիրով զբաղվելիս երբեք չի մտածել գրասենյակից կամ գովազդային վահանակից, կամ ամսագրի էջերից կամ էլ որևէ ֆիլմից մեկ այլ կնոջ մասին: Կարծում եմ, որ շատ քչերը: Արդյոք քանի հոգևոր

հովիվներ ու առաջնորդներ են շատ արագ պոռնոգրաֆիա դիտել ինտերնետում: Հաշվի առնելով այն փաստը, որ ինտերնետային հիթերի 80 տոկոսը պոռնոգրաֆիկ կայքեր են, կարծում եմ, որ տոկոսային հարաբերությունը հայտնի պիտի լինի:

Մեղքը սրտում

Արդյոք ինչպես են մեղքերը սկիզբ առնում սրտում: Ենթադրում եմ, որ դրանք այնտեղ ներխուժում են մեր մարմնի երկու փոքրիկ անդամների միջոցով՝ մեր աչքերի ու ականջների: Եվան **տեսավ ծառը**. ահա այստեղ էլ ամեն ինչ սկսվեց, և հենց այստեղ է, որ Հիսուսն ասում է, մենք պետք է շնանալու հետ հաշիվները պարզենք: Նա ասում է, *եթե աչքդ գայթակղեցնում է քեզ*, ապա արմատների հետ հաշիվները պարզիր: Եթե մենք այս առաջին փուլի հետ գործ չունենանք, ապա մենք առաջ կընթանանք դեպի երկրորդ փուլ, իսկ դա կզարգանա՝ ունենալով ֆիզիկական արտահայտում:

Այս երկրորդ փուլն էլ դեռ շնանալ չի, բայց այն մեր սրտերից ձեռքերն է անցնում: Մենք սկսում ենք **դիպչել** մարդուն, հավելի նրանց կամ էլ ձեռքը սեղմել, կամ նրանց ավելի երկար գրկել, քան անհրաժեշտ է: Մեր կուրացած մտքի ու կարծրացող խղճի համաձայն՝ մենք որևէ մեղք չենք գործել, բայց եթե մենք այս փուլում կանգ չառնենք, ապա շատ ավելի դժվար կլինի բուժվելը: Հիսուսն ասում է, *եթե ձեռքդ գայթակղեցնում է քեզ*, ապա դրա հետ հաշիվները պարզիր:

Կտրի՛ր այն

Եթե մենք շարունակենք զվարճացնել մեր ցանկասեր մտքերն ու հայացքները, եթե մենք ինքներս մեզ գրգռենք հպումով, ապա հաջորդ փուլն ի հայտ կգա, և մենք կհայտնաբերենք, որ այժմ առանձին ենք հանդիպում, և որ **մեր ոտքերը** մեզ տանում են հաջորդ փուլ: Ուրեմն,

Յիսուսն ասում է, որ *եթե ոտքդ է քեզ գայթակղում*, ապա հաշիվները պարզիր դրա հետ:

Մենք այժմ վտանգավոր հողի վրա ենք, բայց մենք դեռ չենք հասել մահվան դատավճռի արժանի գործողությանը: Այնուամենայնիվ, մենք միայն մի մազ ենք հեռու վերջնական գործողությունից. միգուցե տրվում ենք համբուրվելուն ու փաղաքշելուն, միգուցե մերկությանն ու գրգռման: Վերջնական գործողությունը լիովին պատրաստ է իրականացվելու: Շատ քիչ մարդիկ են կարող այս փուլում կանգ առնել, և տեղի է ունենում անկանխելի: Կրակն արդեն այրվում է, իսկ վառողը պատրաստ է պայթել: Յիսուսն այս բոլոր երեք փուլերում էլ ասում է, որ կտրական լինենք ու *հանենք աչքը, եթե այն մեզ գայթակղեցնում է, կտրենք ձեռքը կամ ոտքը, եթե դրանք են մեզ գայթակղեցնում*:

Իրոք, կտրուկ միջոցներ, ուրեմն Աստծուն փառք, որ դրանք պարզապես օրինակներ են. բայց արդյոք օրինակներ են դրանք: Եկեք ուշադիր դիտարկենք, թե Յիսուսն ինչ է ասում: Նա ասում է, որ ավելի *շահավետ է* (շատ ավելի լավ) հավիտենական կյանք մտնել մեկ աչքով, մեկ ձեռքով կամ մեկ ոտքով, քան կրակի լիճը գնալ՝ ամբողջական մարմնով: Ես ձեզ կթողնեմ դատելը, բայց ես վստահաբար օգտակար կհամարեի ոչ միայն կորցնել մարմնիս արտաքին անդամները, այլև անգամ կորցնելու մի թոք, մի երիկամ կամ ցանկացած այլ անդամ, որ հնարավոր է կորցնել ու դեռ կենդանի մնալ, քան թե Աստծու հետ հավիտենական կյանքից զրկվել:

Մենք պետք է կտրուկ լինենք

Եթե հերթը հասնի վերջնական որոշմանը, հույս ունեմ, որ կկարողանամ այն կայացնել, սակայն ինչու՞ սպասել այնքան, որ կարիք ունենամ այս կտրուկ միջոցների: Արդյոք ինչու պետք է ես դանդաղ իմ մարմնի անդամները կորցնեմ, քանզի եթե անգամ ես հանեմ իմ աչ աչքը, ապա ձախ աչքս կմնա ցանկանալու համար, և եթե անգամ կտրեմ աչ ձեռքս, ապա ձախ ձեռքով կկարողանամ ձեռք տալ արգելված

պտղին: Թույլ տվեք առաջարկելու, որ եթե ցանկանում եք պահել ձեր մարմնի անդամները, ինչպես ես եմ ցանկանում, ապա մենք կարող ենք կտրուկ լինել այլ կերպ: Եթե հեռուստատեսությունն է մեզ գայթակղում, ապա մենք կարող ենք դեն նետել հեռուստատեսությունն ու պահել մեր աչքերը: Եթե թերթն է մեզ գայթակղում, ապա ինչու արդյոք չհրաժարվել դրանից ու պահել մեր աչքերը: Եթե աշխատանքն է մեզ գայթակղեցնում, ապա կարող ենք դուրս գալ:

Ես այս սկզբունքը շատ արդյունավետ եմ համարում: Երբ ես թերթ էի կարդում, ես միշտ ձգտում էի դեպի այն, ինչ հաճելի, մաքուր ու բարի համբավ ունեցող չէր: Չարմանալի է, թե ինչպես մենք կարող ենք ձգտել դեպի բամբասանքը, խայտառակությունը և անբարոյականությունը, երբ մենք հանդիպում ենք դրանց: Այսպիսով, ես պահեցի աչքերս ու հրաժարվեցի իմ թերթերից: Յեռուստատեսությունն ինձ համար խնդիր էր ներկայացնում իրենից: Անգամ գովազդային հոլովակներն իրենց բացահայտ սեռական կամ էլ հաճախ բռնի հաղորդագրություններով ինձ գայթակղեցնում էին, այսպիսով, ես պահեցի իմ աչքերն ու հրաժարվեցի հեռուստատեսությունից: Սրանք կտրուկ մեթոդներ են, բայց որովհետև դրանք ինձ ստիպում էին սրտումս ցանկություն ունենալու, այն է՝ գաղտնի շնանալու, ապա քանի դեռ դրանք ինձ վրա որևէ ուժ ունեն, ես գերադասում եմ իմ սեփական հոգին պաշտպանել:

Յոգ տարեք արմատների մասին

Եթե դուք երբևէ եղել եք երրորդ աշխարհի երկրներ ու տեսել, թե ինչպես են հեռուստատեսությունն ու կինոինդուստրիան ազդում մշակույթների վրա ու դրանք դարձնում անկումային, ապա դուք ավելի շատ տեղեկություն կունենաք, թե ինչպես են լրատվության միջոցները պայմանավորում արևմուտքում գտնվող քրիստոնյաների բարոյական նորմերը:

Ես չեմ խոսում հեռուստատեսության կամ թերթերի դեմ, քանզի դրանք չեզոք են: Դրանց դեմ խոսելը հենց այն է, ինչ ես քննադատում

եմ, այն է՝ արտաքին կյանքի հետ գործ ունենալն ու այն կամքի ուժով կառավարելը: Ես խոսում եմ կեղծավորության մասին, որ սրտում է, և մեղքի արմատների հետ հաշիվ տեսնելու կարիքի մասին: Երբ մեր մեղքերի արմատների հետ հաշիվները պարզվեն, այդժամ մեր արտաքին կյանքն ինքն իր մասին հոգ կտանի, ուրեմն եկեք մեր սրտերի հետ կտրուկ լինենք, արմատական: Առակաց 4:23-ը պնդում է. *«Պահէ՛ սիրտդ ամբողջ զգուշութեամբ, քանի որ կեանքի աղբիւրները անկէ են»*: Մենք չենք կարող լույս լինել աշխարհում, երբ մեր սրտում մթություն կա, իսկ ցանկասիրությունը քրիստոնյաների համար հիմնական խնդիր է:

Ես այս գլուխը չեմ կարող ավարտել առանց հասցեագրելու այն, ինչ Յակոբոսն ասում է իր ընհանրական նամակում (Յակոբոս 4:4): Նա ասում է, որ աշխարհի նկատմամբ սերը հոգևոր շնանալ է: Ֆիզիկական շնանալն այնքան դաժան մեղք է Աստծու համար, որ նա մահապատիժ է պահանջում, ուրեմն որքան լուրջ է արդյոք նա դիտարկում հոգևոր շնանալը, այն է՝ աշխարհի սերը: Ես միայն կարող եմ հավատալ, որ դատավճիռը միևնույնն է, և որ այն արդյունքում բերում է հոգևոր մահվան: Ես հավատացած եմ, որ այս իրավիճակում եկեղեցու կամ անհատի վրա գրված է «Իքսբող»: Մոմակալը հեռացվել է, և չնայած եկեղեցու կամ անհատի արտաքին կյանքը շարունակվում է նույն հունով, հոգին կուրացել է, և այն լույսը, որ նրանց մեջ էր, դառել է մթություն: Ինչպիսի ողորմելի վիճակ է սա:

Կարող եմ արդյոք աղերսել այն մարդկանց, որ այս գիրքն են ընթերցում, այլևս աշխարհի հետ չշնանալ, և խնդրում եմ, մի բերեք աշխարհը դեպի Յիսուսի մարմին, քանզի սա վստահաբար Աստծու ժողովրդի մեղսավոր ու շնացող սերնդի նշան է:



ԳԼՈՒԽ 13

Օրենքն ու ամուսնալուծությունը

Նաեւ ըսուեցաւ. «Ո՛վ որ արձակէ իր կինը, թող տայ անոր ամուսնալուծումի վկայագիր մը»:

Մատթեոս 5:31-32

Երբ ուխտադրուծ Իսրայէլի շնութիւն ընելուն պատճառով դայն արձակեցի եւ անոր տուի ամուսնալուծութեան վկայագիրը:

Երեմիա 3:8

Սա երրորդ օրինակն է, թե՛ ինչպէս է սերն իրագործում Օրենքը: Եկեք հետևենք մեր ընդունած սկզբունքին և տեսնենք, թե արդյոք այս պնդումը մարդկանց ավանդույթ է, թե Աստծու պատգամ: Հետաքրքիր է գտնել, որ առաջին երկու պնդումները Տասը պատվիրաններից էին, բայց այս երրորդը տասից մեկը չէ: Հիսուսի մեջբերումը չի ասում՝ «մի ամուսնալուծվիր», այլ այն պարզապէս ասում է, որ եթե կնոջդ արձակես պետք է նրան ամուսնալուծության վկայական տաս:

Այնուամենայնիվ, սա մարդկանց ավանդույթ չէ, ոչ էլ նախնիներից մնացած լեգենդ, քանզի Հիսուսը մեջբերում է Բ Օրինաց 24:1-ից. «Եթէ մէկը կին մը առնէ եւ անոր հետ ամուսնանայ, յետոյ անոր վրայ անվայելուչ բան մը գտնելով՝ ան իր աչքերուն առջեւ չնորհօք չգտնէ, անոր ամուսնալուծումի վկայագիր մը թող գրէ, անոր ձեռքը տայ ու իր տունէն ուղարկէ»:

Այս և այլ սուրբ գրությունների հիման վրա ես եկել եմ Մովսեսի Օրենքում ամուսնալուծության վերաբերյալ հետևյալ երեք եզրակացություններին:

- 1. Կնոջ համար որևէ պայման չկա իր ամուսնուց հեռանալու:**
- 2. Ամուսնալուծության վկայագիրը ոչ թե ամուսնու, այլ կնոջ համար է՝ նրան պաշտպանելու նպատակով, և այն մարդու, որն ապագայում նրա հետ կցանկանա ամուսնանալ:**
- 3. Կինն ազատ է օրինական ամուսնանալ, եթե նրան արձակել են, ու նա ունի ամուսնալուծության վկայագիրը:**

Թույլ տվեք այս երեք պնդումներին անդրադառնալ մեկ առ մեկ:

1. Կնոջ համար որևէ պայման չկա իր ամուսնուց հեռանալու:

Աստծու տեսակետն ամուսնության վերաբերյալ այն է, որ տղամարդը թողնում է իր հորն ու մորը, կին է վերցնում իրեն, ու *նրանք դառնում են մեկ մարմին* (Ճննդոց գիրքը 2:24): Սա շատ պարզ է: (Խոստումներն ու ամուսնական արարողությունները շատ ավելի ուշ ի հայտ եկան: Եկեղեցական ամուսնությունները միայն երևան եկան Ջիսուսի մահից հարյուրավոր տարիներ անց)¹:

Աստված այլևս ամուսնացած զույգին չի դիտարկում, որպես երկու անհատ, այլ որպես մեկ լիարժեք մարդ: Աստված Ադամից հեռացրեց Եվային, երբ նա քնած էր, այնուհետև նրանց միացրեց, քանզի Ադամը կարող էր կրկին կատարյալ լինել միայն ամուսնության մեջ: Սա այն ժամանակվա մարգարեությունն էր, երբ մենք, վերջապես, Քրիստոսի հետ միասին կլինենք: Աստված *մեկ նոր մարդ* կստեղծի բոլոր այն դասակարգերի ու դավանանքների հետևորդներից, որ պիտի Քրիստոսին միանան ամուսնության ժամանակ (Եփեսացիս 2:15):

Ակնհայտ է, որ եթե կինը ամուսին չի վերցնում, այլ ինքն է տղամարդու կողմից վերցվում կնության, ապա նա չի էլ կարող արձակել տղամարդուն:

2. Ամուսնալուծության վկայագիրը ոչ թե ամուսնու, այլ կնոջ համար է՝ նրան պաշտպանելու նպատակով, և այն մարդու, որն ապագայում նրա հետ կցանկանա ամուսնանալ:

Ամուսնալուծության այս վկայագիրը մի ապացույց էր, որ տրվում էր կնոջն առ այն, որ իր ամուսինը իրեն ազատ էր արձակել, և որ նա ինքը չէր թողել ամուսնուն իր իսկ նախաձեռնությամբ: Սա մի պաշտպանություն էր ու մի վկայագիր, որն ապագայում կինը կարող էր ցույց տալ իր նոր ամուսնուն՝ ասելու, որ նա համապատասխանում էր կրկին ամուսնանալու, որ որևէ այլ տղամարդ նրա նկատմամբ իրավունքներ չուներ: Ամուսնալուծության վկայագիրը նրան ազատում էր ցանկացած օրինական և բարոյական կապից: Այն նաև պաշտպանում էր ապագա ամուսնուն մեկ այլ տղամարդու կնոջ հետ շնանալուց: Նա այլևս չպետք է անհանգստանար, թե արդյոք կինն իրեն խաբում էր թե ոչ, եթե կինը ցույց տար նրան ամուսնալուծության վկայագրի ապացույցը:

3. Կինն ազատ է օրինական ամուսնանալ, եթե նրան արձակել են, ու նա ունի ամուսնալուծության վկայագիրը:

Բ Օրինաց 24:2-ը հստակորեն ցույց է տալիս, որ կինն օրինապես ազատ է ամուսնանալու այլ տղամարդու հետ: *«Երբ ան իր տունէն ելլելով երթայ եւ ուրիշ մարդու մը կինը ըլլայ...»:*

Պայմաններ կան

Այն պնդումը, որ տղամարդը կարող է իր կնոջն արձակել, եթե նրան ամուսնալուծության վկայագիր տա, բավականին ուղղակի է

թվում, սակայն պայման գոյություն ունի. *Եթե նրա վրա անվայելուչ բան գտնի: «Անվայելուչ» բառը նշանակում է ցանկացած սեռական գործողություն՝ ամուսնությունից դուրս, ինչպիսիք են անասնականությունը, միասեռականությունը կամ անգամ հասարակական անպարկեշտություն ու մերկությունը:*

Ասուերոս թագավորը Վաշթի թագուհուն արձակեց անհնազանդության պատճառով (հավատացած եմ, որ Վաշթին Իսրայելի Նախատիպն է, իսկ Եսթերը՝ Քրիստոսի հարսնացուհի): Հավատացած եմ, որ այն պատճառներից մեկը, որի համաձայն Աստված իր կնոջը՝ Իսրայելին արձակեց, անհնազանդությունն էր: Մաղաքիան ասում է, որ Աստված ասում է ամուսնալուծությունը, և Աստծու յուրաքանչյուր զավակ բնականաբար դա կզգա, սակայն այս հավասարությունում մեղքը որոշիչ է, և Երեմիա մարգարեն մեզ ցույց է տալիս, որ անգամ Աստված Իսրայելին արձակեց ու նրան ամուսնալուծության վկայագիր տվեց: *«Երբ ուխտադրուժ Իսրայելի չնութիւն ընելուն պատճառով զայն արձակեցի եւ անոր տուի ամուսնալուծութեանմի վկայագիրը»:* (Երեմիա 3:8):²

Բ Օրինաց 24:4-րդ տողը մի պարբերություն է, որտեղից Հիսուսն է մեջբերում՝ ասելով մեզ, որ ամուսնալուծված կինը, որ կրկին ամուսնանում է ու ամուսնալուծվում իր երկրորդ ամուսնուց, չպետք է ամուսնանա իր Նախկին ամուսնու հետ, քանզի դա գարշելի է՝ ամենաուժեղ բառը, որ Աստված օգտագործում է իր Նողկանքը ցույց տալու նպատակով: *«Անոր առաջին ամուսինը – որ զայն ուզարկեր էր – պիտի չկարենայ զայն դարձեալ իրեն կին առնել՝ անոր պղծուելէն ետք. արդարեւ ատիկա Տէրոջ առջեւ գարշութիւն է...»:*

Նշումներ

1. Առաջին դարի հրեաներն ու քրիստոնյաներն ամուսնական արարողություններ չէին անցկացնում ժողովարաններում կամ եկեղեցիներում: Քրիստոնյաները եկեղեցիներում ամուսնություններ չէին իրականացնում մինչև 4-

րդ դարը: Եկեղեցու օրհնությունն անհրաժեշտ չէր ամուսնությունը վավերականացնելու համար Քրիստոսի ժամանակից մոտ հարյուր տարի հետո: (Stu Kenneth Scott Latourette, *A History of Christianity, Volume I, Revised Edition* (New York: Harper & Row, 1975, թջ 204-205)

2. Սա նշանակում է, որ Խորայելն ազատ է ամուսնանալու մեկ ուրիշի հետ, բայց եթե նա դա անի, ապա նա երբեք կրկին չի վերականգնվի դեպի Աստված: Ես հավատացած եմ, որ Խորայելը չի ամուսնանա մեկ ուրիշի հետ, այլ կվերականգնվի առ Աստված, սակայն այս մտքերն այս գրքի թեմայից դուրս են: Պողոս առաքյալն այս թեմայի վերաբերյալ խոսում է իր՝ հռոմեացիներին ուղղված նամակի 11-րդ գլխում:



ԳԼՈՒԽ 14

Ամուսնացած, սակայն բաժանված

Բայց ես կը յայտարարեմ ձեզի. "Ո՛վ որ կ'արձակէ իր կինը՝ առանց պոռնկութեան պատճառի, ինք չնութիւն ընել կու տայ անոր, եւ ո՛վ որ կ'ամուսնանայ արձակուածին հետ՝ չնութիւն կ'ընէ":

Մատթեոս 5:32

Որովհետեւ ներսէ՛ն, մարդոց սիրտէ՛ն, կ'ելլեն չար մտածումներ, չնութիւններ, պոռնկութիւններ, սպանութիւններ, գողութիւններ, ազահութիւններ, չարութիւններ, նենգութիւն, ցոփութիւն, չար աչք, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անմտութիւն: Այս բոլոր չար բաները ներսէ՛ն կ'ելլեն ու կը պղծեն մարդը:

Մարկոս 7:21-23

Այժմ մենք կդիտարկենք, թե Զիսուսն ինչ է ասում Օրենքի այս պնդման վերաբերյալ՝ հիշելով այն, որ նա չի փոխում կամ էլ վերացնում դրա անգամ ամենափոքր մասը: Նա ցույց է տալիս, թե ինչպէս սերը կիրագործի այն: Միայն այս լույսի ներքո մենք կհասկանանք, թե ինչպէս պետք է վերաբերենք մեր ներկայիս օրվան ու խուսափենք կարծր, սառը, լեգալիստական և ցանկացած կարեկցանքից զուրկ լինելուց:

Զիսուսն ասում է, որ եթե մարդն իր կնոջն արձակում է ցանկացած այլ պատճառով, բացի նրանցից, որ նախորդ գլխում էին նշված, նա պատճառ է հանդիսանում, որ կինը շնանա: Զիսուսը նաև ասում է, որ

Նա այդ ամուսնալուծված կնոջ հետ ամուսնացող մարդուն ստիպում է շնանալ: Արդյոք Յիսուսը հակասում է Օրենքին: Ո՛չ, ես չեմ հավատում, որ նա հակասում է:

Կարող ենք արդյոք ամուսնալուծվել ցանկացած պատճառով

Մատթեոս 19:3-ում մի հատված կա, որը շատ հետաքրքիր է և այս թեման ավելի շատ է լուսավորում: Փարիսեցիները Յիսուսին այդ պահին մարտահրավեր են նետում: *«Փարիսեցիները մօտեցան անոր և փորձեցին դայն՝ ըսելով. «Արտօնուած է, որ մարդ մը արձակէ իր կինը՝ որեւէ պատճառի համար»:* Յիսուսն այս սուրբ գրությունը ճննդոցից է մեջբերում՝ երկուսը մեկ մարմին դառնալու մասին, բայց ավելացնում է ևս մի արտահայտություն. *«...ուրեմն մարդը թող չզատէ ինչ որ Աստուած իրարու միացուցած է»:* Քանի որ սա Օրենքից մեջբերում չէր, սա փարիսեցիներին դուրս քաշեց, և ցանկանալով արդարացնել «ցանկացած պատճառ»՝ նրանք հարցրեցին Յիսուսին. *«Հապա ինչո՞ւ Մովսէս պատուիրեց ամուսնալուծումի վկայագիր տալ և արձակել»:*

Յիսուսն այժմ հասնում է խնդրի արմատին, և, ինչպես միշտ, այն ոչ թե ֆիզիկական գործողությունն է, այլ սիրտը: Նա ասում է, որ *Մովսէսը ձեր սրտի կարծրության համար արտոնեց ձեզ դա:* Նա թույլ տվեց դա սիրո պակասի պատճառով: Աշակերտները զարմացած էին սրա վրա և կարծեցին, որ եթե սա չափանիշն էր, ապա ավելի լավ կլիներ չամուսնանալ: Յիսուսը, զարմանալի է, որ չհակաճառեց, այլ ասաց. որ ոչ բոլորը կարող են ամուսնալուծությունը հաղթահարել. *«Բոլորը չեն ընդունիր ասիկա, հապա անոնք՝ որոնց տրուած է»* (տող 11):

Ի՞նչ է ասում Պողոս առաքյալը

Ա Կորնթացիս 7-րդ գլխում Պողոս առաքյալն շատ հետաքրքիր և տեղին բաներ է ասում ամուսնության և սեռական վարքի մասին, որոնք արժե ուսումնասիրել: *«Իսկ ամուսնացածներուն կը հրամայեմ, ո՛չ թէ ես, հապա՝ Տէրը. «Կինը թող չզատուի իր ամուսինէն, (իսկ եթէ զատուի ալ՝ թող մնայ անամուսին, կամ հաշտուի իր ամուսինին հետ,) եւ ամուսինը թող չձգէ իր կինը» (Ա Կորնթացիս 7:10-11):*

Սա հաստատում է այն, ինչ մենք սովորեցինք Հին կտակարանից նախորդ գլխում, այն է՝ կինը կարող է հեռանալ՝ «զատվել իր ամուսնուց», բայց ոչ նրան ձգել (ամուսնալուծվել նրանից): Միայն ամուսինը կարող «ձգել իր կնոջը»:

Այնուհետև տող 12-13-ում Պողոս առաքյալն ասում է, որ սա իր անձնական խորհուրդն է: *«Բայց միաներուն ե՛ս կ'ընեմ, ո՛չ թէ Տէրը. «եթէ եղբայր մը ունենայ անհաւատ կին մը եւ անոր հաճելի ըլլայ բնակիլ իրեն հետ, թող չձգէ զայն: Եւ կին մը որ ունի անհաւատ ամուսին մը, եթէ անոր հաճելի ըլլայ բնակիլ իրեն հետ, թող չձգէ զայն»:* Սա կրկին անգամ ցույց է տալիս ամուսնալուծության վերաբերյալ տղամարդու և կնոջ ունեցած դիրքերի միջև եղած տարբերությունը:

Ի՞նչ կաներ սերը

Սերը ոչ մի պատճառի համար չէր ձգի, անգամ շնանալու: Գոյություն ունի թույլտվություն, անգամ Հիսուսի ուսմունքներում, որի համաձայն տղամարդը կարող է ամուսնալուծվել սեռական անհավատարմության համար, սակայն անշուշտ կատարյալ սերը կների և կմոռանա *յոթանասուն անգամ յոթը անգամ*: Ամուսնալուծությունը միշտ էլ գալիս է սիրո պակասից և սրտի կարծրությունից:

Պողոս առաքյալը նաև ասում է, որ եթե տղամարդը կամ կինը թողնում է իր ամուսնական գույգին՝ իր իսկ սեփական ցանկությամբ,

ապա մնացող անձը պարտավորվածությունն չունի, որը նշանակում է, որ օրենքով կապված չէ: Սա այն պատճառով է, որ սա իրականում ամուսնալուծություն է՝ առանց օրինական պահանջների, այսինքն ամուսնալուծության գրավոր ծանուցման: *«...իսկ եթե անհավատը դատուի՝ թող դատուի: Եղբայր մը կամ քոյր մը ստրուկ չէ այդպիսի պարագաներու մէջ. սակայն Աստուած կանչեց մեզ խաղաղութեան» (տող 15):*

Թույլ տվեք հետ դառնալ դեպի ամուսնության վերաբերյալ Աստուծու տեսակետին և գնալ փոքր-ինչ ավելի խորը: Աստուծու աչքերում սեռական գործողությունն է, որ ամուսնությունն է դառնում, այլ ոչ թե օրինական համաձայնագիրը: Օրինական համաձայնագրերը գոյությունն չունենին, երբ Ադամը Եվայի հետ մեկ դարձավ, և ես չեմ կարողանում Աստվածաշնչում գտնել որևէ պահանջ՝ խոստումների կատարման կամ օրինական համաձայնագրերի ստորգրման վերաբերյալ:

Բարոյական, այլ ոչ օրինական

Եկեղեցին է ստեղծել ծիսակատարություններն ու խոստումները՝ «ամուսնության սրբությունը պաշտպանելու նպատակով», և ես դա հասկանում եմ: Ասածս այն է, որ ոչ օրինական ծեսը և ոչ էլ ամուսնական երդումներն Աստուծու համար պահանջներ չեն: Յեշտ է սա ապացուցել, քանզի մեր իսկ օրինական համակարգը և բոլոր քրիստոնյա դավանանքները կհամաձայնվեն հետևյալ սցենարի հետ: Ենթադրենք, մի տղամարդ և մի կին անցնում են ամուսնական ծիսակատարությունն ու իրենց խոստումն են տալիս իրար և Աստուծուն վկաների ներկայությամբ. հոգևոր ծառայողը նրանց հայտարարում է «այր և կին», այն է՝ ամուսնացած, և նրանք ստորագրում են օրինական փաստաթղթերը Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության ներկայացուցչի առջև: Եթե օրինական արարողությունից հետո զույգը մարմնով մեկ չդառնա, ապա օրենքն ու

եկեղեցին «ամուսնությունը» կհամարեն օրինական ուժը կորցրած: Այլ կերպ ասած՝ ամուսնությունը գոյություն չունի:

Այսպիսով, օրենքն ու եկեղեցին համաձայնվեցին, որ այն, ինչ ամուսնությունը հաստատում է, ոչ թե խոստումները կամ էլ ծիսակատարությունն են, այլ երկուսի՝ մեկ մարմին դառնալը: Ինչու՞ եմ այս ամենը մեջբերում: Դե, եթե ամուսնական փաստաթղթերը զույգին ամուսնացած չեն դարձնում, ապա ամուսնալուծման փաստաթղթերը նրանց չեն կարող ամուսնալուծել: Պետք է որ կիրառվի միևնույն օրենքը:

Աստված միշտ էլ տեսնում է, թե մենք մեր սրտում ինչ ենք անում, այլ ոչ թե այն, ինչ օրենքն է ասում: **Ամուսնալուծությունը, Աստծու աչքերում, ձգելն է՝ թե՛ օրինական փաստաթղթերով և թե՛ առանց դրանց:**

Այսպիսով, մենք ևս մեկ անգամ մեր սրտերում մարտահրավեր ենք զգում, և շատ քրիստոնյաներ պետք է «մերկացվեն» հետևյալ պնդումներով: Եթե անձը ամուսնացած է փաստաթղթերով, բայց մերժում է իր ամուսնական զույգին «ամուսնական անկողինը»՝ ինչպես ասում է Պողոս առաքյալը, ապա ամուսնալուծությունն արդեն սկսվել է: Եթե ես իմ սրտում մեկ այլ անձի նկատմամբ ցանկություն ունեցա, ապա ես շնացել եմ սրտումս և դրանով բավարարել ամուսնալուծության համար օրինական պահանջները: Սա միայն սրտում է, բայց Աստված ցանկանում է մեր սրտի հետ գործ ունենալ՝ նախքան գործն անգամ կհասնի ամուսնալուծական դատարանին:

Կեղծ ամուսնություն

Մի հոգևոր ծառայող մի անգամ ինձ իր գաղտնիքը վստահեց, որ ինքն ու իր կինը քնում էին առանձին անկողիններում, և որ նրանք սեռական հարաբերություն չէին ունեցել արդեն մի քանի տարի: Վստահաբար, Աստծու աչքին և իր սրտում այդ մարդն արդեն ձգել էր իր կնոջը: Բնականաբար, նա հոգևոր ծառայող է և անգամ չէր էլ երագի իր

կնոջ հետ ամուսնալուծվելու մասին: Արդյոք ի՞նչ կեղծավորություն է դա: Ահա թե ինչու Պողոս առաքյալն իր՝ Ա Կորնթացիս 7:5-ում ասում է, որ մենք չպետք է մեր զույգին մերժենք սիրո անկողինը, *բայց միայն համաձայնությամբ՝ ձեզ ծոմապահության և աղոթքի հատկացնելու համար* (Աստվածաշնչի անգլերեն KJV տարբերակում այս տողում աղոթքից առաջ նշված է ծոմապահությունը)¹: Սրան նախորդող տողը հստակորեն ցույց է տալիս, որ մեր զույգին մերժելը սխալ է, և որ մենք չպետք է մեր մարմիններին վերաբերվենք, թե դրանք մեր սեփականն են: Եթե մենք այդպես վերաբերվենք, ապա մենք կասկածի տակ ենք դնում Աստծու աչքին ամուսնության հենց արմատը, բուն իմաստը՝ մեկ մարմին դառնալը:

Այս փաստերի լույսի ներքո, արդյոք ամեն մի ամուսնացած զույգ այս կամ այն ժամանակ իր սրտում մեղավոր չէ ամուսնալուծության մեջ: Բավականին հեշտ է մեր զույգի հետ վիճաբանել, մտնել անկողին, մեջք մեջքի պառկել և մերժել սեռական հարաբերություն ունենալ: Եկեք լինենք ջանասեր և հասկանանք, որ այս փոքր գործողությունով է սկսվում ամուսնալուծությունը: Աստվածաշունչն ասում է՝ *արևը թող մայր չմտնի ձեր բարկացած վիճակի վրա*: Վաղը կարող է շատ ուշ լինել: Միգուցե ձեր սրտում փոքր-ինչ կարծրություն զարգանա մինչ դուք քնած եք, և հաջորդ օրը դրա հետ գործ ունենալն ավելի դժվար կլինի:

Ես մտովի գիտակցված որոշում եմ ընդունել՝ երբեք քնելու չգնալ սրտումս կնոջս նկատմամբ բարկությամբ: Ես երբեմն տանուլ եմ տալիս, բայց հասկանում եմ, որ երբեք չեմ կարող այդ վարմունքն արդարացնել: Շատ գիշերներ եմ ես լուսացրել՝ փորձելով կնոջս հետ վիճաբանությունը տարրալուծել՝ վիրավորանքով ու դառնությամբ քնելու փոխարեն:

«Բայց ես եմ ասում...»

Կրկին Յիսուսը հասել է սրտին՝ մեռած տառի փոխարեն, և ցույց է տալիս մեզ, որ սերն իրագործում է Օրենքը: Եթե մենք սեր ունենք, ապա մենք մեր կնոջն անգամ մի գիշերով չենք ձգի, Էլ չասած հավետ և

աշխարհի աչքերի առջև: Անգամ եթե իմ կիևը շնանար և Օրենքն ինձ թույլ տար նրան ձգելու, եթե ես նրան սիրեի, ապա նրան հետ կընդունեի, կներեի, ու մենք կկարողանայինք նորից սկսել: Եթե նա դա աներ յոթանասուն անգամ յոթը անգամ, ապա սերը կաներ այն ինչ սերն է անում, այն է՝ հավատալ, հուսալ ու ներել ամեն բան:

Արդյոք սա շատ բարձր ստանդարտ է, որը ես նպատակ եմ դրել հասնելու: Ոչ, այս ստանդարտը մեզ համար անհնար է պահելը, սակայն Աստծու համար այն բնական է: Նա դա միշտ էլ անում է մեր պատկերացմամբ ամենավատ մեղքերի համար անգամ, և եթե մենք իր մեջ մնանք, **նրա կյանքն** ու բնավորությունը մեր միջով կարտահայտվեն:

Նշումներ

1. *Defraud ye not one the other, except it be with consent for a time, that ye may give yourselves to **fasting and prayer**; and come together again, that Satan tempt you not for your incontinency.*

1 Corinthians 7:5



ԳԼՈՒԽ 15

Երդվելը

*Լսեր էք դարձեալ թէ ըսուեցաւ նախնիքներուն.
"Սուտ երդում մի՛ ըներ, հապա հատուցանէ՛
Տէրոջ ըրած երդումներդ":*

Մատթեոս 5:33

Երբ Աստուծոյ ուխտ ընես՝

Մի ուշացներ զայն կատարելը,

Քանի որ Աստուած անմիտներուն չի հաճիր.

Կատարէ՛ ըրածդ ուխտդ:

Աւելի լավ է, որ ուխտ չընես,

Քան թէ ուխտ ընես ու չկատարես:

Ժողովող 5:4-5

Եկեք դիտարկելք Հիսուսի չորրորդ օրինակից այս մեջբերումը. սուտ երդում մի՛ արա, այլ հատուցիր Տիրոջն արած երդումներդ, որպեսզի տեսնենք, թե արդյոք կա այն Մովսեսի Օրենքում: Ակնհայտ է, որ այն Տասը պատվիրաններից չէ: Բայց Հիսուսն իրոք **մեջբերում էր** Մովսեսի Օրենքից, քանզի Ղեւտացոց 19:12-ում մենք կարդում ենք. *«Իմ անունովս սուտ երդում մի՛ ընէք...»*: Մեկ այլ ծանոթություն կա Բ Օրինաց 23:21-ից: *«Երբ Տէրոջ՝ քու Աստուծոյդ ուխտ մը ընես, առանց ուշացնելու կատարէ՛, որովհետեւ Տէրը՝ քու Աստուածդ՝ անպատճառ զայն քեզմէ պիտի պահանջէ, ու մեղաւոր պիտի ըլլաս»*:

Գոյություն ունի երեք բան, որ հարկն է հաշվի առնել երդում անելու վերաբերյալ:

- Երդումը պետք է լինի մեծ արժեք ունեցող մի բանի վրա: Մի կտոր տաք հացի վրա երդում անելը վստահելի չէ, բայց տան կամ մարդու կյանքի վրա արված երդումը քաշ ունի՝ տան կամ մարդու կյանքի ունեցած մեծ արժեքի պատճառով:
- Երդումն օրինական է միայն այն դեպքում, երբ այն արվում է վկաների ներկայությամբ:
- Խոստումը կամ երդումը հետևյալ երկուսից մեկն է. ա) այն կամ սեփական անձի նկատմամբ անեծք է (երբ մեկն ասում է՝ «Ես ավելի լավ է դժոխք գնամ, քան այդ մարդուն ներեմ») կամ էլ բ) անմեղության աղերսանք (երբ ես ասում եմ՝ «Երդվում եմ մորս կյանքով, որ ճշմարտությունն եմ ասում»):

Ապագան մեր ձեռքերում չէ

Առաջին հայացքից թվում է, թե երդվելու մեջ որևէ սխալ բան չկա, եթե մենք պահենք երդումը, բայց հենց այստեղ է խնդիրը: Մենք երբեք էլ չենք կարող իմանալ, կլինենք արդյոք այնպիսի իրավիճակում, որպեսզի կարողանանք պահել մեր երդումը թե ոչ, որովհետև ապագան մեր ձեռքերում չէ: Մենք անգամ չգիտենք, թե արդյոք ողջամտություն կամ հիշողություն կունենանք մեր հաջորդ օրվա պարտականություններից որևէ մեկն իրականացնելու: Ուրեմն մենք շատ վտանգավոր և հանդուգն ուղու վրա ենք, երբ խոստում ենք տալիս:

Թվոց 30-րդ գլխից մի տող մեզ կօգնի: 2-ն ասում է. *«...եթէ մարդ մը Տէրոջ ուխտ ընէ, կամ երդում ընելով պարտաւորութիւն մը ստանձնէ, իր խօսքը թող չդրժէ. իր բերանէն ելած ամէն խոստում թող գործադրէ»*: Սա ավելի շատ լույս է սփռում այն բանի վրա, թե իրականում ինչ է տեղի ունենում, երբ մենք երդվում ենք. **մենք պարտավորություն ենք ստանձնում**, այն է՝ մենք «ինքներս մեզ կապանքի տակ ենք դնում»:

Հին կտակարանում մենք շատ օրինակներ ունենք այնպիսի մարդկանց, որոնք ուխտ են անում և պարտավորություն ստանձնում: Ես միայն երեքին կվերցնեմ ու կդիտարկեմ նրանց. Աբրահամ, Դավիթ և Յեփթայե:

Ճնևոց 21:23-ում Աբիմելեքն Աբրահամից խնդրեց երդվել, որ *նա իր հետ կեղծիքով չի վարվի, որովհետև նա Աբրահամին կարեկցություն էր ցույց տվել*, և Աբրահամը նրան երդվեց՝ **Աստծով**: Սա վտանգավոր բան էր, քանզի Աստված կարող էր բուլորովին այլ ծրագրեր ունենալ Աբրահամի համար, և նա այդ դեպքում իր իսկ երդմամբ ինքնիրեն ծուղակը գցած կլիներ: Հենց այս նույնը տեղի ունեցավ Յեսուի հետ. Գաբավոնի բնակիչները եկան Յեսուի մոտ և ձևացան, թե հեռու երկրից էին: Նրանք խնդրեցին Յեսուին, որ երդվի, որ իրենց հետ բարությանմբ կվարվի՝ ճիշտ այնպես, ինչպես Աբիմելեքը խնդրեց Աբրահամից: Յեսուն երդվեց նրանց, և միայն ավելի ուշ, երբ նա իմացավ, որ այդ մարդիկ մոտակայքից էին և հենց այն մարդիկ էին, ում Աստված իրեն պատվիրել էր ոչնչացնել, նա հասկացավ, որ ծուղակն էր ընկել: (Պատմությունը կարդացեք Յեսու 9-րդ գլխում):

Խեղճ Յեսուն երկընտրանքի առաջ կանգնեց: Ինչպես մենք կասենք՝ նա հայտնվել էր «երկու քարի արանքում»: Արդյոք նա պետք է Աստծուն հնազանդվի և կոտրի իր երդումը, թե պետք է պահի իր երդումն ու չհնազանդվի Աստծուն: Նա կոմպրոմիս արեց. նա պահեց իր երդումն ու հաշտություն կնքեց Գաբավոնի բնակիչների հետ: Սակայն կոմպրոմիսը երբեք Աստծու ուղին չէ:

Դավթի երդումը

Երկրորդ օրինակը Դավիթն է՝ Աստծու սրտի համաձայն մարդը: Դավիթը ինքնանեծքի երդում արեց Բ Թագավորաց 3-րդ գլխում: Դավթի աջ ձեռքերից մեկը, Աբենները, սպանվեց ենթադրյալ ընկերության մի նենգ արարքով: Դավիթն Աբեններին ասաց, որ նա հիմարի պես մահացավ, և սգում էր նրա համար: Դավթի ծառաները նրան խնդրեցին

ուտել, բայց Դավիթն **պարտավորությունն ստանձնեց՝** այս խոսքերով. *«Աստուած ինձի այսպէս եւ ասկէ աւելին ընէ, եթէ արեւին մայր մտնելէն առաջ հաց կամ ուրիշ բան մը համտեսեմ»:*

Համոզված եմ, որ Դավիթը զգում էր, թէ այս երդումն ապահով էր, բայց միշտ էլ երդվելիս նա բարակ սառույցի վրա էր սահում: Համոզված եմ, որ եթէ Քետացի Ուրիան նրա մոտ գար ու նրանից խնդրել երդվել, որ իր կնոջը չէր գայթակղի իր՝ պատերազմելու համար բացակայության ընթացքում, Դավիթն ուրախությամբ կաներ դա: Դավիթն անգամ իր ամենավայրի երազներում էլ չէր մտածի, որ երբևէ նման երդում կկոտրեր: Նա սեռական անբավարարվածությունն ունեցող մարդ չէր, քանզի շատ կանայք ուներ: Սակայն թուլության պահին շատ տարիներ անց նա հենց այդ նույն բանն արեց ու ոչ միայն Ուրիայի միակ կնոջ հետ շնացավ, այլև սպանեց Ուրիային՝ փաստերը ծածկելու համար:

Յեփթայեի երդումը

Դատավորաց 11-րդ գլխում գոյությունն ունի մի հուզիչ պատմություն Յեփթայե անունով մի մարդու մասին: Երբ նա մարտի էր գնում, նա Աստծուն ուխտ արեց: Նա երդվեց, որ եթէ ինքը պատերազմում հաղթեր, ապա խաղաղությամբ վերառադնալուց հետո, ինչ որ առաջինը իր շեմով կանցներ՝ պիտի զոհաբերեր Աստծուն: Այդ ժամանակ սա պետք է որ շատ լավ երդում թվացած լինի և մեկը, որի համաձայն **պարտավորությունն ստանձնելը** ապահով կլիներ, բայց պատմությունը մեզ պատմում է, որ առաջինը շեմով անցավ նրա դուստրը: Այժմ նա ծուղակն էր ընկել՝ իր իսկ երդմամբ: Արդյոք ինչ կարող էր նա անել:

Կարդացեք ու որոշեք, թէ արդյոք նրա որոշումը ճիշտ էր, սակայն զգուշացեք, քանզի ցանկացած տարբերակ էլ սխալ էր լինելու: Գոյությունն չունեի որևէ կատարյալ պատասխան: Նա հավատում էր, որ չարիքի փոքրագույնն ընտրեց: Նա հնարավոր է, որ կարողանար տարբեր բան անել, բայց եթէ դուք այդ դիրքում լինեիք, ապա ստիպված

կլինեիք Աստծուն տհաճություն պատճառել՝ ցանկացած ընտրության դեպքում, ուրեմն զգուշ եղեք, թե ինչպես եք Յեփթայեին դատում:

Այս երեք օրինակները հարց են առաջացնում. եթե այդքան վտանգավոր է երդումն անելն, ուրեմն ինչու արդյոք մարդը կցանկանա ինքն իրեն ուխտով կապել: Հավատացած եմ, որ դա հետևյալ երեք պատճառներից մեկով է, սակայն երեքից յուրաքանչյուրն էլ մարդու թուլությունից է:

1. Իրենց թույլ վճիռն ուժեղացնելու համար

2. Ուրիշներին իրենց անկեղծության մասին համոզելու համար

3. Նենգաբար մոլորեցնելու համար

1. Թույլ վճիռն ուժեղացնելու համար

Հեշտ է խոստումը պահել, երբ մենք երդվում ենք: Ամուսնական երդումները դրա մի օրինակն են: Եկեղեցին դրանք սահմանեց՝ «ամուսնության սրբությունը պաշտպանելու» նպատակով, բայց դրանք թույլ մարդկանց ուժեղացնելու նպատակով են: Որպես քրիստոնյա՝ իմ սերը կնոջս նկատմամբ պետք է ինձ նրա հետ պահի, այլ ոչ որևէ իրավական փաստաթուղթ, որ ապացուցում է, թե ես Աստծու առաջ երդում եմ արել: Ես չեմ քննադատում ամուսնական երդումները, այլ ասածս այն է, որ եկեղեցին սահմանել է դրան ոչ թե այն պատճառով, որ Աստվածաշունչն է ասում, թե մենք դրանք պետք է անենք, այլ մարդու թուլությունից ելնելով:

2. Անկեղծության մասին համոզելու համար

Հաճախ ավելի հեշտ է մեկին համոզել, որ ճշմարտությունն ենք ասում, եթե երդվենք: Երբ մեր երեխաները ցանկանում են համոզվել, որ

իրենց խմբից մեկը իրոք ճշմարտությունն է ասում, ապա նրանք ասում են, որ «իրենց սիրտը խաչեն ու հույս ունենան մահանալու» (ինքնանեծք): Կրկին, սա վստահության պակասից է, որ երդում կամ խոստում է պահանջվում, այն է՝ թուլություն:

3. Նենգաբար մոլորեցնելու համար

Ես տասնչորս տարի աշխատել եմ գանգստերների հետ և շատ խաբեբաների եմ հանդիպել: Նրանք անգամ վերջում հավատում էին իրենց սեփական ստերին ու դառնում «Ուլթեր Միթի» կարգի հերոսներ (մեկը, ով մեծ ցանկություն ունի մեծ գործիչ դառնալու, բայց չունի դրա համար անհրաժեշտ անհատական որակական հատկանիշներից և ոչ մեկը): Ես ավելի շատ երդումներ ու ինքնանեծքներ եմ լսել, քան կցանկանայի հիշել, և բոլորն էլ ասվել են անմեղ կողմերին մոլորեցնելու մի պարզ մտադրությամբ: Նրանք երդվում էին՝ ապացուցելու, որ իրենք «ոսկու պես մաքուր էին» և որ իրենց կարելի է անվերապահորեն վստահել: «Մորս կյանքով», «այնքան վստահ, որքան այն, որ Աստված է ստեղծել փոքր կանաչ խնձորները», «Աստված ինձ տեղնուտեղը սպանի»: սրանք նրանց երդումներից միայն մի քանիսն են: Համոզված եմ, որ այս մեկի թուլության մասին ձեզ համոզելու կարիք չունեմ:

Կոտրած խոստումներ

Կարող է արդյոք մեկը պնդել, թե երբեք խոստում չի կոտրել՝ թե նենգաբար և թե անփութորեն: Մենք ամեն օր էլ խոստումներ ենք կոտրում: «Սիրելի՛ս, ես ժամը վեցին հետ կգամ»: Ինչ-որ բան է պատահում, և ես վերադառնում եմ ժամը յոթին՝ սառը ընթրիք ու էլ ավելի սառը կնոջս գտնելով: Ես արդարացնում եմ իմ կոտրած խոսքերն ու բացատրում պարագաները, որ «իմ ուժերից վեր էին», բայց փաստը մնում է փաստ. ես խոսքս չեմ պահել:

Ուրեմն, ինչպես կարող եմք մենք՝ որպես քրիստոնայների ապրել մեր կյանքը՝ առանց մեր խոսքը կոտրելու: Դե, շատ հեշտությամբ: Հիսուսը մեզ ցույց է տալիս, և հաջորդ գլխում կտեսնենք, թե նա ինչ է ասում:



ԳԼՈՒԽ 16

Մի՛ երդվեք ընդհանրապես

...Բայց ես կը յայտարարեմ ձեզի. "Երբեք երդում մի՛ ընէք, ո՛չ երկինքի վրայ՝ որ Աստուծոյ գահն է, ո՛չ երկրի վրայ՝ որ անոր ոտքերուն պատուանդանն է, ո՛չ Երուսաղէմի վրայ՝ որ Մեծ Թագաւորին քաղաքն է, ո՛չ ալ գլուխիդ վրայ երդում ըրէ, որովհետեւ չէս կրնար մէկ մագ ձերմակցնել կամ սեւցնել: Հապա ձեր խօսքը ըլլայ՝ այո՞ն՝ այո՛, եւ ո՛չը՝ ո՛չ. ասկէ աւելին յառաջ կու գայ Չարէն":

Մատթեոս 5:33-37

Բայց ամէն բանէ առաջ, եղբայրներս, երդում մի՛ ընէք, ո՛չ երկինքի վրայ, ո՛չ երկրի վրայ. ո՛չ ալ ուրիշ որեւէ երդում: Հապա ձեր «այո՞ն»՝ այո՛ ըլլայ, ու «ո՛չ»ը՝ ո՛չ, որպէսզի չիյնաք դատապարտութեան տակ:

Հակոբոս 5:12

Օրենքի տառն ասում է, որ մենք չպետք է մեր երդումը կոտրենք, բայց արդյոք ինչ կկամենայինք մենք անել: Ինչպե՞ս իրագործենք այս պատվիրանն ու անենք այն, ինչ Ոգին է ասում: Դե, Զիսուսի վերոնշյալ տեքստը դա մեզ պարզորոշ կերպով ասում է, և բուն իմաստը հետևյալն է. եթե չես ցանկանում քո երդումներից և որևէ մեկը կոտրել, ապա ընդհանրապես մի երդվիր:

Սա առաջին հայացքից շատ պարզունակ է թվում, բայց Զիսուսը բացատրում է չորսը նկարագրությամբ ու օգնում մեզ տեսնելու, որ մենք

իրականում որևէ իրավունք չունենք ավելի մեծ բաներն օգտագործել՝ մեր երդումներին օժանդակելու համար, որովհետև դրանք մեր սեփական իշխանության ներքո չեն: Երդումն անիմաստ է, եթե այն չի արվել ավելի մեծ արժեք ունեցող մի բանի վրա: *Մարդիկ միշտ երդում են անում իրենցից մեծի վրա* (Եբրայեցիս 6:16):

1. **Հիսուսն ասում է. *Երբեք մի երդվեք երկնքով, որովհետև այն Աստծո գահն է:*** Երկինքը Աստծո բնակության վայրն է, և մենք որևէ իրավունք չունենք այն օգտագործելու՝ մեր երդմանն օժանդակելու համար: Ինչո՞ւ ոչ: Որովհետև չնայած նրան, որ երկինքն ավելի մեծ է, քան դուք, այն ձեր իշխանության ներքո չէ: Ինչո՞ւ է սխալ երդվել մի բանով, որը ձեր իշխանության ներքո չէ: Որովհետև երբ մի բանով ուխտ եք անում, դուք դա որպես ապահովություն եք առաջարկում՝ ձեր խոսքի ճշմարտության դիմաց: Սա ամեն ինչ էլ ավելի լուրջ է դարձնում, երբ մենք ինքներս մեզ ենք անիծում: Այն անձը, որ ասում է «Թող ինձ գրողը տանի, եթե ճշմարտությունը չեմ ասում», իրականում ասում է, թե պատրաստ է դժոխք գնալ, եթե իր խոսքը ճշմարիտ դուրս չգա:

Ի՞նչ է երդվելը նշանակում

Եթե ես երդվեմ իմ ամբողջ ունեցվածքով, որ ճշմարտությունն եմ ասում, ուրեմն եթե հերթը հասնի նրան, որ ես ճշմարտությունը չեմ ասում, ապա ես զրկվում եմ իմ ողջ ունեցվածքից: «Իմ ողջ կարողությամբ» երդվելու ողջ իմաստն այն է, որ դուք մտածեք, թե «Նա երբեք չի ցանկանա զրկվել իր ողջ ունեցվածքից, ուրեմն պետք է որ ճշմարտությունն ասի»: Բայց քանի որ մենք երկնքին չենք տիրում, մենք չենք կարող երկնքից զրկվել, եթե ապացուցվի, որ մեր խոսքը ճշմարիտ չէ: Մենք չենք կարող երկինքն օգտագործել՝ որպես մեր թույլ վճռին օժանդակելու կամ էլ մեր անմեղությունը վիճարկելու միջոց:

2. *Մի՛ երդվեք երկրի վրա, որովհետև այն Աստծու ոտքերի պատվանդանն է:* Մինևույնը կիրառելի է նաև երկրի դեպքում: Այդ ամբողջը Աստծու արարչությունն է, այլ ոչ մերը, և մեր իշխանության ներքո չի գտնվում: Այս առաջին երկու կետերը ծածկում են արարված ամեն ինչը: Մենք Աստծու արարչության վրա որևէ իշխանություն չունենք, որպեսզի այն առաջարկենք որպես մեր երդումների ապահովագրություն:

3. *Մի երդվեք երուսաղեմի վրա, որովհետև այն Մեծ Թագավորի քաղաքն է:* Երուսաղեմը **Սուրբ** քաղաքն է, և սա է Հիսուսի ասածի բանալին: «Սուրբ» նշանակում է առանձնացված՝ Աստծու առանձնահատուկ օգտագործման համար: Մի՛ երդվեք որևէ բանով, որը Աստծու ծառայության համար է առանձնացվել: Սա կարող է ներառել նաև եկեղեցու շինությունը կամ մի հատուկ հուշահամալիր, տաղանդ կամ բիզնես, այսինքն, ցանկացած բան, որ Աստծուն է նվիրվել, որովհետև այն պատկանում է Աստծուն, այլ ոչ ձեզ: Եթե որևէ բան զատված է Աստծու գործածության համար, այն է՝ սրբացված է, ապա *մենք չպետք է այն շնորհն տանք¹:*

4. *Մի երդվեք ձեր գլխի վրա, որովհետև չեք կարող մեկ մազ ճերմակեցնել կամ սևացնել:* Միգուցե կմտածեք, թե ավելի ապահով կլինի ձեր իսկ գլխով երդվելը, քանզի դա չի ներառում այլ մարդկանց կամ էլ արարված մի բան, որն Աստծուն է պատկանում, բայց դա այդպես չէ: Մենք որևէ երաշխիք չունենք, որ վաղը կենդանի կլինենք մեր խոստումները կատարելու համար:

Պողոս առաքյալն ասում է մեզ, որ *մենք մեզ չենք պատկանում:* Քրիստոնյաները *գնվել են գնով* և ուրիշին են պատկանում, ուրեմն լավ բան չէ պարտավորություն ստանձնելը՝ անգամ մեր սեփական մարմնի երաշխիքով: Նրանք այժմ Սուրբ Հոգու տաճարներն են:

Նախնիների ավանդույթները

Մատթեոս 23:16-22-ում Հիսուսը բացահայտում է դպիրներին ու փարիսեցիներին՝ նախնիների ավանդույթներն Աստծու պատվիրանների հետ խառնելու մեջ՝ կապված ուխտի հետ:

«Վա՛յ ձեզի, կո՛յր առաջնորդներ, որ կ'ըսէք. "Ո՛վ որ երդում կ'ընէ տաճարին վրայ՝ բան մը չէ, բայց ո՛վ որ երդում կ'ընէ տաճարի ոսկիին՝ վրայ՝ պարտավոր կ'ըլլայ": Յիմարներ ու կոյրեր, ո՞րը մեծ է, ոսկի՞ն՝ թէ տաճա՛րը, որ կը սրբացնէ ոսկին: Նաեւ կ'ըսէք. "Ո՛վ որ երդում կ'ընէ զոհասեղանին վրայ՝ պարտավոր կ'ըլլայ, բայց ո՛վ որ երդում կ'ընէ զոհասեղանին վրայի ընծային՝ վրայ՝ պարտավոր կ'ըլլայ": Յիմարներ ու կոյրեր, ո՞րը մեծ է, ընծա՞ն՝ թէ զոհասեղանը, որ կը սրբացնէ ընծան: Ուրեմն, ո՛վ որ երդում կ'ընէ զոհասեղանին վրայ, երդում կ'ընէ անոր վրայ ու անոր վրայ եղած բոլոր բաներուն վրայ: Եւ ո՛վ որ երդում կ'ընէ տաճարին վրայ, երդում կ'ընէ անոր վրայ ու անոր մէջ բնակողին վրայ: Եւ ո՛վ որ երդում կ'ընէ երկինքի վրայ, երդում կ'ընէ Աստուծոյ գահին վրայ ու անոր վրայ բազմողին վրայ»:

Ես ցույց տվեցի, որ մենք իրոք իրավունք չունենք երդվելու ոչնչով, բայց սկզբունքը հետևյալն է՝ մի պարտավորվեք կամ ձեզ ծուղակը մի գցեք: Ազա՛տ եղեք, եղեք ձեր խոսքի տերն ու ազնվությունս ունեցեք: Հիսուսն ասաց, որ սրանից ավելին ոչ միայն ավելի վստահեցնող չէ, այլ գալիս է չարից, այլ կերպ ասած՝ մեղք է:

Դատարանները

Արդյոք ինչպես է Հիսուսի այս ուսմունքը գործում մեր ամենօրյա կյանքում: Որպես օրինակ կարող են լինել մեր դատարանները: Նրանք մեզ ասում են, որ ուխտ անենք ու երդվենք Ամենակարող Աստծով՝ մեր ձեռքերը դնելով Աստվածաշնչի վրա, ու ասենք, որ մենք կասենք ճշմարտությունը, ողջ ճշմարտությունն ու ոչինչ բացի ճշմարտությունից: Սա իրոք զարհուրելի ու պարտավորեցնող մի ուխտ է, որն անհնար է

պահել, քանզի մենք չգիտենք **ողջ ճշմարտությունը**: Միայն Աստված գիտի այն: Մենք միայն գիտենք ճշմարտություն՝ ինչպես մենք ենք տեսնում կամ մեր տեսակետից:

Պիղատոսը հարցրեց Յիսուսին. «Որ՞ն է ճշմարտությունը»: Նա, իհարկե, սխալ հարցը տվեց, քանզի ճշմարտությունը երբեք պնդումներում չի կայանում, բայց ճշմարտությունն իրականում անձ է: Յիսուսն ասաց. «Ես եմ ճշմարտությունը»: Սա նշանակում է, որ ինչ էլ Յիսուսն ասի, դա է ճշմարտությունը՝ անկախ համատեքստից: Ամուսնալուծության դատական նիստի կատարված մի այցը պարզորոշ կերպով կցուցադրի այն, որ երբ երկու անկեղծ մարդիկ տալիս են «փաստերը», նրանք իրականում պարզապես ասում են ճշմարտությունը՝ ինչպես իրենք են տեսնում: Երկուսն էլ համոզված են, որ նրանք փաստերը ներկայացնում են ճիշտ այնպես, ինչպես դրանք տեղի են ունեցել, սակայն նրանք հաճախ իրենց հետևություններում տրամագծորեն հակադրվում են:

Դուք պետք է ինքներդ ձեզ համար որոշեք, որ եթե երբևէ դատարանում լինք, ինչպես ձեզ կպահեք: Ես շատ անգամ եմ եղել դատարանում և մերժել եմ երդվել Աստվածաշնչի վրա՝ մի պարզ պատճառով, որ հենց ինքն Աստվածաշունչն է արգելում ուխտ անելը: Ես թողնում եմ, որ *իմ «այո»-ն այո լինի, իսկ «ոչ»-ը՝ ոչ*, և ես ուխտի կարիք չունեմ, որպեսզի որևէ մեկին համոզեմ, թե ճշմարտությունն եմ ասում:

Ամուսնական երդում

Ամուսնական երդումը քննարկման մեկ այլ նյութ է: Եկեղեցին այս երդումը ստեղծել է՝ «ամուսնության սրբությունը պաշտպանելու» համար, և ես հասկանում եմ դրա ետևում ընկած տրամաբանությունը: Շատ ամուսնություններ են պահպանվել «Աստծո առաջ կատարած այս երդումների» պատճառով, սակայն Աստվածաշունչը մեզանից չի պահանջում Աստծու առաջ ամուսնական երդում տալ, և ինչպես արդեն քննարկել ենք, քրիստոնյայի խոսքը պետք է բավական լինի: Այսօրվա

հասարակությունում ամուսնությունների երեքից երկուսն ամուսնալուծությամբ են ավարտվում, և այս հարաբերակցությունը միևնույնն է նաև քրիստոնյաների շրջանակներում՝ ներառյալ հոգևոր ծառայողներին: Հետաքրքիր է, թե քանի քրիստոնյա է Ամենակարող Աստծու առաջ իր երդումը զանցել. սա շատ լուրջ վիրավորանք է:

Դուք պետք է ինքներդ հետևություն անեք, բայց երբ ես իմ կնոջ հետ ամուսնացա, ես որևէ երդում չտվեցի: Աստծու շնորհով ես հավատարիմ կլինեմ՝ ոչ թե որևէ օրենքից ելնելով, այլ որովհետև ես քրիստոնյա եմ ու ազնվություն ունեմ և ինձ կարելի է վստահել: Հավատացած եմ, որ հենց սա է կնոջս՝ իմ նկատմամբ ունեցած ապահովությունը, այն է՝ Քրիստոսն ինձանում:

Մեկ այլ կետ, որ անհրաժեշտ է նշել, այն է, որ վիուկությունը և այլ կախարդական կազմակերպություններ պահանջում են, որ ընդունելությունը լինի ուխտ անելով: Սատանան, մեր թշնամին, ուխտերն ու երդումները գործածում է մեզ կապելու ու մեր ոգիները գերելու համար: Ֆրանկմասոնների ընդունելությունը ներառում է մի ուխտ, որ նման է սրան. «Ավելի լավ է, որ կոկորդս ականջից ականջ կտրեն ու աղիներս գետնին թափվեն, քան ես հրապարակեմ Մասոնների կախարդական գաղտնիքները»: Սա ճիշտ այն բանի հակառակն է, ինչ Աստված է անում: Նա մեզ չի կապում, այլ հետամուտ է լինում մեզ իր սիրով ու հավատարմությամբ: Այս կապանքները սիրո կապանքներ են, այլ ոչ ստրկության թուկեր:

Հայհոյանքը

Ուխտերն ու երդումները գործ ունեն **մեր ասած բաների** հետ, և ես չպետք է այս գլուխն ավարտեմ առանց զգուշացնելու, որ *ամեն մի դատարկ խոսքի համար, որ մենք խոսում ենք, հաշիվ պիտի տանք դատաստանի օրը* (Մատթեոս 12: 36-37):

Ամենաշատ գործածվող հայհոյանքի արմատները կրոնական են կամ էլ Աստծու կարգուկանոնի այլասերման հետևանք. այլ կերպ ասած՝

սրբապիղծ խոսքեր: Միգուցե ամենաանմեղ, սակայն միևնույն ժամանակ ամենակործանարար բառը «գրողը տանի» արտահայտությունն է: Մեկին «գրողը տանի քեզ» ասելը բավականին անվնաս է թվում, սակայն մեկին կրակի լիճը գցելով անհիծելը վստահաբար ամենավատ անեծքն է, որ երբևէ կարող եք մեկին ասել: Սա շատ ավելի վատ է, քան մեկին սեռական գործողության խոսակցական տերմինով կամ էլ վերարտադրության օրգանի անունով կոչելը, որը պարզապես տհասություն է: Հավատացած եմ, որ «գրողը տանին» ամենավատ հայհոյանքն է, որ մեկը կարող է կիրառել:

Ամեն մի դատարկ խոսք

Իհարկե, ցանկացած տհաս բառի կիրառությունն էլ աստվածային չէ, և ես ապշած եմ, թե քանի-քանի քրիստոնյաներ են այս գռեհիկ արտահայտությունները կրկնօրինակում մեր օրերի հումորիստներից: «Ռեխը բաց մնաց» մի արտահայտություն է, որ համոզված եմ, երբեք չէր դուրս գա Պողոսի կամ Հիսուսի բերանից, կամ էլ ցանկացած մարդու, ով Աստծու շնորհով է լեցուն: Ի՞նչ պակաս են «զարմացած» կամ «ապշած» բառերը: Արդյոք ինչու պետք է մենք մրցենք աշխարհի տհաս լեզվի հետ: Դուք պետք է ինքներդ ձեզ համար որոշեք, թե ինչպես գործածեք ձեր ցանկացած լեզուն, սակայն հիշեք Հիսուսի զգուշացումը, որ ամեն մի դատարկ խոսքի համար հաշիվ պիտի տաք:

Հիսուսի նկարագրություններից յուրաքանչյուրում մենք միևնույն մոդելն ենք տեսնում. սերը միշտ էլ հաշիվները մաքրում է խնդրի արմատների հետ՝ նախքան դրանք արտաքին մեղք կգործեն: Ուրեմն, ի՞նչ կարող ենք սովորել այս օրինակից: Դե, ուխտ անելու պատճառը մեր ջանքերն ուժեղացնելն ու ինքներս մեզ «ողնաշար» տալն է: Եթե մենք զգում ենք, որ երդում անելու կարիք ունենք, ապա պետք է այդ անելու մեր դրդումները քննենք ու տեսնենք, թե արդյոք արմատը թուլությունը չէ: Մենք պետք է հարցնենք, որպես քրիստոնյաներ, թե ինչու պետք է ավելի ուժեղացնենք մեր խոսքը երդումներով և

ուխտերով, երբ Հիսուսն ասաց, որ «այո»-ն կամ «ոչ»-ը պետք է բավական լինի: Եթե մենք անկեղծ լինենք, ապա կտեսնենք, որ դա սովորաբար մեր թուլութիւնները ծածկելու ու պաշտպանելու համար է:

*Մի՛ թողատրեր՝ որ քու բերանդ մարմինիդ մեղանչել տայ,
եւ հրեշտակին առջեւ մի՛ ըսեր. «Սխալեցայ»:
Ինչու՞ Աստուած քու խօսքիդ համար զարյանայ,
Ու ձեռքերուդ գործը փճացնէ:
Արդարեւ երազներուն շատութեան մէջ
եւ խօսքերուն շատութեան մէջ
Ունայնութիւններ ալ կան,
Բայց դու վախեցի՛ր Աստուծմէ:*

Ժողովող 5:6-7

Նշումներ

1. Մատթեոս 7:6: Այս մեջբերման մասին կիրառվի այս շարքի հաջորդ գրքերում, բայց ես այստեղ կարող եմ ասել, որ եթե մենք որևէ բան ենք Աստծուն նվիրում, ապա դա պետք է կիրառվի բացառապես նրա նպատակներով:



ԳԼՈՒԽ 17

Ակն ընդ ական

*Լսեր էք, թե ըսուեցաւ. "Աչքի տեղ՝ աչք, եւ
ականայի տեղ՝ ականայ":*

Մատթեոս 5:38

Ամենափոքր վրեժը կրթունավորի ոգին:

Հրեական սասցվածք

Այժմ մենք հասել ենք Հիսուսի հինգերորդ օրինակին, թե ինչպես կարող ենք սիրո միջոցով իրագործել Օրենքը: Այս մեկը, ինչպես նախորդ երկուսը, Տասը պատվիրաններից բերված մեջբերում չէ, այն Մովսեսի Օրենքից է: Հիսուսը մեջբերում է Ելից 21:24-25-ից:

Հիսուսն օգտագործում է միևնույն արտահայտությունը, ինչ այլ օրինակներում. *Լսել էք, թե ասվեց նախնիների կողմից*, կրկին ի նկատի ունենալով այն, որ Աստծու ժողովուրդն ընդհանուր առմամբ չէր հասկացել, թե իրականում Օրենքն ինչ էր նշանակում: Մարդկանց ավանդույթները, ինչպես միշտ, ավելի ծանրակշիռ էին դարձել, քան Աստծու Հոգին, և նրանք հավատում էին, թե այս Օրենքը նրանց թույլ է տալիս վրեժ առնել՝ «ական ընդ ական» կամ «ատամն ընդ ատաման»:

Վրեժը չի պատճառը, համաձայն որի Աստված այս Օրենքը հաստատեց: Սա ոչ թե վրեժի հետ էր կապված, այլ արդարության՝ Աստծու արդարության: Ցանկացած դեպքում, երբ մենք կիրառում ենք Օրենքը, դա անում ենք ոչ թե մեր, այլ Աստծու անունից: Եկեք դիտարկենք սպանությունը՝ որպես օրինակ: Մահապատիժը պահանջվում է Աստծու կողմից՝ իր արդարությունը բավարարելու համար, և այն նաև արդարությամբ է պահանջվում, քանի որ դա

անաչառ է՝ ճիշտ կամ արդար: Աչքի տեղ աչք, ատամի տեղ ատամ, կյանքի տեղ կյանք. սա կատարելապես անաչառ է: Պատիժը ճիշտ և ճիշտ համապատասխան է հանցանքին: Այս արդարությունն անձնական չէ, այլ սահմանվել է մարդկանց կողմից՝ Աստծու անուկից:

Ավելի ուշ Օրենքում Ղևոսացոց 24:17-20-ում ասվում է. *«Ո՛վ որ մարդ մը սպաննէ, անչո՛ւշտ պիտի մեռցուի: Ա՛ն որ անասուն մը սպաննէ, թող հատուցանէ.- անասունի փոխարէն՝ անասուն: Եթէ մարդ մը իր դրացիին խեղութիւն պատճառէ, իր ըրածին պէս պիտի ընեն իրեն.- բեկումի տեղ՝ բեկում, աչքի տեղ՝ աչք, ակոայի տեղ՝ ակոայ. ինչպէս ան մարդու մը խեղութիւն պատճառեց, նոյնպէս պիտի ընեն իրեն»:*

Ետ պահող միջոց

Շատ հոգեբաններ ասում են, որ մահապատիժը ետ պահող միջոց չէ, սակայն Աստվածաշունչը չի համաձայնվում դրա հետ: Բ Օրինաց գրքի 19:19-21-ում ասվում է. *«...ըրէ՛ք անոր՝ ինչպէս անիկա խորհեցաւ իր եղբօր ընել: Չարութիւնը քու մէջէդ բնաջնջէ՛, որպէսզի ուրիշները լսելով վախնան, եւ ասկէ ետք՝ անգա՛մ մըն ալ ձեր մէջ այսպիսի չար արարք մը չգործեն: Աչքդ անոր վրայ թող չխղճայ. կեանքի տեղ կեանք պիտի տրուի, աչքի տեղ աչք, ակոայի տեղ ակոայ, ձեռքի տեղ ձեռք ու ոտքի տեղ ոտք»:*

Գանգատների հետ տասնչորս տարի աշխատելով ես կարող եմ խոսել իմ փորձից, այլ ոչ պարզապես տեսականորեն կամ ենթադրաբար: Փաստ է, որ բանկ թալանողներն ու կատաղի հանցագործները սկսեցին «գործիքավորվել» և զենք կրել, երբ մահապատիժը վերացվեց: Ես լսել եմ, թե ինչպես են նրանք այդ մասին խոսում: Նրանք գիտեին, որ ոստիկանի վրա կրակելը վստահաբար նշանակում էր մահապատիժ, և մահապատժի վերացումը նրանց համար լավ նորություն էր: Նրանք հասկացան, որ այժմ ոչ միայն կարող էին ոստիկանի վրա կրակել ու դրա համար չկախվել, այլև նրանք կարող

Էին նաև վերացնել ցանկացած ապացույց, որ նա կկարողանար բերել իրենց դեմ: Այս ամենը նրանց օգտին էր: Ուրեմն, մահապատիժը վստահաբար ետ պահող միջոց էր նրանց համար, և դեռ այսօր էլ կլիներ: Քրիստոնյաները, ինչպես միշտ, ձուլվել են աշխարհի ներկայիս մշակույթին, նորաձևությանն ու հոգեբանությանը: Արդյոք որ մի քրիստոնյան երկու հարյուր տարի առաջ կվիճարկեր այն փաստը, որ մահապատիժը ճիշտ բան էր: Ինչպե՞ս կարող են բարձրը փոխվել՝ նորաձևությանն ու մշակույթին համընթաց: Ցավոք սրտի, կարող են, և շատ հեշտությամբ են փոխվում, երբ մենք կոմպրոմիսի ենք գնում:

Աստված չի փոխվում

Աստծու եղբայրունն ու ծրագրերը չեն փոխվում սերնդից սերունդ կամ էլ, երբ կառավարությունը միապետությունից փոխվում է ժողովրդավարության: Նա հետևողական է, և ես կվիճեի, որ ցանկացած հասարակություն, որ Աստծու խոսքն է կիրառում, որպես իր օրենքի ու կարգուկանոնի հիմք, Աստծու կողմից օրհնված կլինի ու կբարգավաճի: Ես չեմ կարծում, թե պատահական է, որ Բրիտանիան իշխում էր ծովերի և ողջ աշխարհի մեկ երրորդի վրա, երբ նրա օրենքները հիմնված էին Աստծու խոսքի վրա: Այժմ, երբ մենք փոխել ենք մեր օրենքները, և դրանցից շատերը հակառակվում են Աստծու Օրենքին, մենք կորցրել ենք մեր ողջ կայսրությունն ու շատ հաճախ աշխարհի կողմից արհամարհված ենք, երբ մի ժամանակ հարգված էինք ու պատվելի:

Ես շատ մարդիկ գիտեմ, որ առաջին անգամ Աֆրիկայից կամ Ջնդկաստանից եկել են Բրիտանիա և ապշած են եղել իրենց տեսածից: Նրանք դաստիարակվել են՝ հավատալով, որ իրենց աստվածային բարոյական ժառանգությունը եկել է Բրիտանիայից, բրիտանական միսիոներներից, ովքեր քրիստոնյա արժեքներն իրենց ազգեր էին տարել, և իրենք էլ ապացուցված էին համարում այն, որ Բրիտանիան այսօր էլ միևնույն բարձր ստանդարտներն ուներ: Նրանք հիասթափվում են, երբ տեսնում են, թե Բրիտանիան ինչ է դարձել:

Չավատացած եմ, որ քրիստոնյաներն այսօր խնդիր ունեն ներումն ու արդարությունը տարբերակելու: Մենք կարծում ենք, թե եթե ներում գոյություն ունի, ապա ոչ մի պատիժ չպիտի լինի: Բայց Աստծու հետ գործերն այդպես չեն: Աստված ներում է մեղքը, բայց իր արդարությունը պահպանում է, որ պատիժ կիրառվի: Միշտ էլ մեղքերի ու սխալների համար հետևանքներ կան՝ անգամ Աստծու շնորհի ներքո:

Ոսկե հորթը

Մովսեսը Սինայի լեռան վրա քառասուն օր անցկացրեց՝ աղերսելով Աստծուն ներել իր ժողովրդին՝ ոսկե հորթին պաշտելու համար, և Աստված իրոք նրանց ներեց: Սակայն, Աստված հարվածեց ժողովրդին, և Ղևտացիները սպանեցին Աստծու ժողովրդից երեք հազար մարդ: Ելից 32:34 համարը նշում է. *«Ուստի հիմա գնա՛, ժողովուրդը առաջնորդե՛ այն տեղը՝ որ քեզ ըսի: Ահա՛ իմ հրեշտակս քու առջեւէդ պիտի երթայ. բայց իմ այցելությանս օրը՝ անոնց մեղքը պիտի հատուցանեմ իրենց»:*

Դավթի մեղքերը

Բ Թագավորաց 12-րդ գլխում կարդում ենք, որ Աստված ներեց Դավթին շնանալու ու սպանությունն գործելու համար և դա հեռացրեց, բայց Աստծու արդարությունն, այնուամենայնիվ, պահանջում էր, որ **«կյանքի դիմաց կյանք»** սկզբունքը կիրառվեր:

«Դաւիթ Նաթանի ըսաւ. «Տէրոջ դէմ մեղանչեցի»: Նաթան Դաւթի ըսաւ. «Տէրն ալ քու մեղքդ ներեց. պիտի չմեռնիս: Բայց քանի որ այս արարքով Տէրոջ թշնամիներուն առիթ տուիր զինք անարգելու, այս քեզի ծնած որդին անշուշտ պիտի մեռնի» (Բ Թագավորաց 12:13-14):

Աստված ներեց Դավթի մեղքը, բայց վերցրեց անմեղ երեխայի կյանքն՝ իր արդարությունը բավարարելու համար: Դավթին նաև ասվեց, որ իր մեղքի հետևանքները կազդեին իր և իր երեխաների ներկա և

ապագա հանգամանքների վրա: Գոյություն ունի հետևանքների մի ողջ ցանկ. օրինակ՝ Դավթի սեփական որդին ապօրինի կերպով գրավեց գահն ու կենակցեց իր հոր հարձերի հետ, նրա դուստրը բռնաբարվեց իր խորթ եղբոր կողմից. ցանկն այսպես շարունակվում է:

Արդյոք մենք Աստծու շնորհի ներքո չենք

Մենք այժմ շնորհով ազատման ներքո ենք, բայց Աստված իր եռությունը կամ արդարությունը չի փոխել: Մեր մեղքի համար դեռևս հետևանքներ գոյություն ունեն, անգամ եթե մենք ներված ենք ու հավիտենական կյանք ունենք:

Գործք առաքելոց 5-րդ գլխում կարդում ենք երկու աշակերտների՝ Անանիայի և Սափիրայի մասին, որոնք իրենց նենգության համար շատ բարձր գին վճարեցին: Նրանք շնորհի ներքո Աստծու զավակներն էին, բայց իրենց մեղքը ճակատագրական հետևանքներ ունեցավ: Նրանք երկուսն էլ Աստծու կողմից սպանվեցին ու վայրկենապես մահացան:

Դավթի դեպքում նա կարող էր սատանային մեղադրել իր կյանքում ծագող բոլոր անհաջողությունների համար՝ իր դստեր բռնաբարությունը, իր որդու կողմից գահն ապօրինաբար զավթելը և այլն, բայց նա սխալ կլիներ: Դա Աստծու արդարությունն էր և իր մեղքի հետևանքները, անգամ այն դեպքում, երբ իր մեղքը ներված էր: Մենք նաև պետք է հաշվի առնենք այն, որ երբ մենք փորձության մեջ ենք կամ էլ վշտացնող հանգամանքներում, արդյոք մենք այդժամ դեմ առ դեմ ենք դուրս գալիս մեր նախկին մեղքերի հետևանքների հետ, անգամ երբ այդ մեղքերն արդեն ներվել են: Ինչու՞ ենք սատանային մեղադրում մեր բոլոր վատ հանգամանքների համար և հաշվի չենք առնում, որ միգուցե մեր ուղիներն Աստծու առաջ կարող են կատարյալ չլինել:

Սակայն այս ամենն ասելով հանդերձ մենք չպետք է սխալվենք՝ ուրիշների դժբախտություններին նայելով ու ենթադրելով, թե դրանք նրանց մեղքի հետևանքներն են: Դա իրոք մեծամտություն կլիներ:

Ես այս գլխի սկզբում նշեցի, որ Աստծու ժողովուրդը կարծում էր, որ այս Օրենքը նրանց վրիժառուության հնարավորությունն էր տալիս, բայց Օրենքն ինքը պարզորոշ կերպով բացահայտում է այս սուտը՝ Ղեւտացոց գրքի 19:18-ում: *«Վրէժ մի՛ առնե՛ր, եւ ոխ մի՛ պահե՛ր քու ժողովուրդիդ որդիներուն դէմ, հապա սիրէ՛ ընկերդ քու անձիդ պես. ե՛ս եմ՝ Տէրը»*: Սրանից երևում է, որ Աստծու ժողովուրդը թուլյալությունն չունէր անգամ Մովսէսի Օրենքի ներքո ոխ պահելու:

Արդարությունը վրիժառուության հետ որևէ ընդհանուր բան չունի: Վրեժը միշտ էլ Աստծու բացառիկ իրավունքն է՝ թե՛ Հին և թե՛ Նոր կտակարաններում: Կարդացե՛ք Բ Օրինաց 32:35, Պողոս առաքյալի նամակը Եբրայեցիս 10:30 և Հայտնություն 6:10¹: Հիսուսը ոչ միայն մեզ ասում է, որ մենք չպետք է վրեժ առնենք, այլև որ որևէ քե՛ն չպետք է պահենք, բայց նա մեզ ասում է, որ մենք պետք է գերազանցենք փարիսեցիների արդարությունը:

Շնորհի ներքո գտնվող քրիստոնյաները՝ Աստծու սերն իրենց սրտներում տածած, պետք է ավելի հեռուն գնան, քան շատ քրիստոնյաներ անգամ կկամենան դիտարկել: Հաջորդ գլխում մենք կդիտարկենք այս հաճախ անտեսված ստանդարտն ու կտեսնենք, թե ինչպես սերը միշտ կիրագործի այս Օրենքը:

Նշումներ

1. Բ Օրինաց 32:35 – *«Իմս ե՛ն վրեժխնդրութիւնս ու հատուցումը. Անոնց ոտքը սահմանուած ժամանակին պիտի սահի. Որովհետեւ անոնց ձախտրդութեան օրը մօտ է, Ու անոնց համար պատրաստուածը կ'արտորայ »*:

Եբրայեցիս 10:30 – *«Քանի որ կը ճանչնանք ա՛ն՝ որ ըսաւ. «Վրեժխնդրութիւնը ի՛մս է, ե՛ս պիտի հատուցանեմ,- կ'ըսէ Տէրը»: Եվ դարձեալ. «Տէ՛րը պիտի դատէ իր ժողովուրդը»*:

*Չայտնություն 6:10 – «Ասուք բարձրաձայն աղաղակեցին.
«Սո՛ւրբ եւ ճշմարի՛տ Տիրակալ, մինչև ե՞րբ պիտի չդատես ու
չառնես մեր արիւնին վրէժը երկրի բնակիչներէն»:*



ԳԼՈՒԽ 18

Լրացուցիչ մղոնի փիլիսոփայությունը

...Բայց ես կը յայտարարեմ ձեզի. "Չարին մի՛ դիմադրէր. հապա ո՛վ որ ապտակէ աջ այտիդ, դարձո՛ւր անոր միւսն ալ: Եթէ մէկը ուզէ դատ վարել քեզի հետ ու բաճկոնդ առնել, թո՛ղ տուր անոր հանդերձդ ալ: Եւ ո՛վ որ ստիպէ քեզ մղոն մը երթալ, գնա՛ անոր հետ երկու մղոն: Տո՛ւր քեզմէ ուղողին, ու երես մի՛ դարձներ անկէ՝ որ կ'ուզէ փոխ առնել քեզմէ":

Մատթեոս 5:39-42

Սէրը համբերատար է, քաղցր է. սէրը չի նախանձիր. սէրը չի գոռոզանար, չի հպարտանար. անվայել վարձուներ չ'ունենար, իրենը չի փնտոներ, չի գրգռուիր, չարութիւն չի մտածեր. անիրաւութեան համար չ'ուրախանար, հապա ճշմարտութեան ուրախակից կ'ըլլայ. ամէն բանի կը հանդուրժէ, ամէն բանի կը հաւատայ, ամէն բանի կը յուսայ, ամէն բանի կը տոկայ: Սէրը բնա՛ւ չ'իյնար.:

Ա Կորնթացիս 13:4-8

Նախորդ գլուխը մեզ ցույց տվեց, որ մենք չպետք է պատասխանենք կամ կամենանք վրեժ առնել, բայց այս ամենը բացասական է, այն, ինչը մենք **չպետք է** անենք: Սերը դրական է ու

ակնառու, ուրեմն արդյոք ինչ կանի սերը՝ ըստ Հիսուսի: Քանզի միայն սերը կիրագործի Օրենքը:

Այժմ մենք Լեռան քարոզի մի հատվածում ենք, որը կորոշի մեր քրիստոնյա կենսակերպը: Ավելի վաղ Լեռան քարոզում Հիսուսը շատ պնդումներ է անում, սակայն այժմ նա գործնական ցուցումներ է տալիս: Հնարավոր է, թե մենք հավատանք ճիշտ դոկտրիններին ու կանոննորին, բայց դա ոչինչ է, եթե մենք գործնականում Հիսուսի այդ ցուցումների համաձայն չենք ապրում: Քրիստոնեությունն այն է, թե մենք ինչպես ենք ապրում, այլ ոչ այն, թե ինչի ենք մենք հավատում: Սատանան ինքը գիտի ու հավատում է, որ ողջ Աստվածաշունչը ճշմարիտ է¹, և դա է պատճառը, որ նա այդքան հմուտ է այն այլասերելու գործում, բայց նա անհնազանդ է և ըմբոստ դրա նկատմամբ: Եթե որպես դավանող քրիստոնյաներ մենք միայն հավատում ենք Աստծու խոսքին ու չենք հնազանդվում դրանում եղած ցուցումներին, ապա մենք ավելի շատ հավատք չունենք, քան սատանան:

Հիսուսը մեզ չորսը տարբեր ուղի է ասում, որով գործնականում կարող ենք իրագործել օրենքը, և դրանք ներառում են յուրաքանչյուր իրավիճակ, որում մենք բնականաբար կցանկանային պատասխանել կամ վրեժ առնել: Դրանք են.

- 1. Ֆիզիկական չարաշահումը**
- 2. Իրավական չարաշահումը**
- 3. Քաղաքացիական չարաշահումը**
- 4. Անձնական չարաշահումը**

Ես սրանցից յուրաքանչյուրը կդիտարկեմ առանձին:

1. Ֆիզիկական չարաշահումը

«...Բայց ես կը յայտարարեմ ձեզի. "Չարին մի՛ դիմադրէր. հապա ո՛վ որ ապտակէ աջ այտիդ, դարձու՛ր անոր միւսն ալ» (տող 39):

Ինչո՞ւ դարձնել մյուս այտը, ինչո՞ւ չպատասխանել, երբ մենք արդեն առաջին հարվածն ենք ստացել: Արդյոք հիմարություն չի լինի մյուս այտն էլ առաջարկել: Միթե ես պետք է փախաս լինեմ: Առաջին ֆիզիկական չարաշահման դեպքում չպատասխանելը քրիստոնեության հետ որևէ կապ չունի: Կարգապահություն ու լավ բնավորություն ունեցող լավ մարդը կհեռանա ու անախորժություն չի ստեղծի ու ոչ էլ կցանկանա վրեժ առնել: Իրական քրիստոնեությունն ի հայտ է գալիս միայն, երբ մենք մյուս այտն ենք դարձնում: Սերը միշտ էլ ավելի հեռուն է գնում, քան պարտականությունը, և մենք չենք կարող ապացուցել, թե սիրում ենք, եթե մենք միայն մեր պարտականությունն ենք կատարում ու պահպանում Օրենքի ապահով սահմանը:

Հիսուսը Ղուկաս 17:10-ում ասաց, որ *երբ մենք անենք մեզ հրամայված բոլոր բաները, մենք դեռևս անպիտան ծառաներ ենք*, որովհետև սերն անում է շատ ավելին, քան պարտականությունը, իսկ Աստված պահանջում է, որ մենք սիրենք, այլ ոչ թե պարզապես պահենք մեռած տառը՝ պարտականությունից ելնելով: Կեղծավորները կարող են իրենց պարտականությունն անել: Նրանք կարող են աղոթել, ծոմ պահել ու տասանորդ տալ, բայց նրան երբեք մյուս այտը չեն դարձնի: Այստեղ կրկին ի հայտ են գալիս երանությունները: ***Երանի ձեզ, երբ նախատում են ձեզ ու հալածում ստույգամբ*** (Մատթեոս 5:11): *Ուրախացե՛ք և ցնծացե՛ք այդ օրը* (Ղուկաս 6:23): Ցանկացած մարդ կարող է ուրախանալ, երբ օրհնություն է գալիս, բայց միայն իրական Քրիստոնյան կարող է ուրախանալ ու օրհնել իր թշնամուն ձախողության դեպքում:

Մենք որպես մեր ուղեցույց պիտի վերցնենք Աստվածաշնչում եղած այն մարդկանց օրինակները, որոնք չդիմադրեցին չարին՝ Հովսեփը և Դանիելը Հին կտակարանում, և իհարկե, Նոր կտակարանում Հիսուսը մեր ամենամեծ օրինակն է: Պարտեզում նա Պետրոսին ասաց, որ չդիմադրի: *Այդժամ Հիսուսն ասաց Պետրոսին. «Սուրդ իր տե՛ղը դիր»* (Մատթեոս 26:52): Պետրոսն ավելի ուշ հիշեց, թե Հիսուսն իրեն ինչ էր ասել, ու չդիմադրեց, երբ իրեն ձերբակալեցին ու բանտ գցեցին այն

բանից հետո, երբ Յակոբոսին սրով սպանել էին (Գործք առաքելոց 12:1-5):

2. Իրավական չարաշահումը

«Եթէ մէկը ուզէ դատ վարել քեզի հետ ու բաճկոնդ առնել, թո՛ղ տուր անոր հանդերձդ ալ» (տող 40):

Օրենքն իրագործելու այս երկրորդ օրինակն իրավական չարաշահման մասին է, սակայն այն խենթութիւնն է թվում: Սա դատարան տարվելու ու այն ունեցվածքի համար դատի առաջ կանգնելու մասին է, որի նկատմամբ մենք օրինական իրավունք ունենք, սակայն այդ դեպքում էլ դատական գործը տանուլ ենք տալիս: Վստահաբար, սա խենթութիւնն է. այն բանից հետո, երբ մեզ ստիպում են հանձնել այն բաները, որոնք օրենքով մերն են, տալ նաև ավելին, քան մենք օրենքով պարտավոր ենք: Դե, այո՛, աշխարհի ու աշխարհիկ քրիստոնյաների համար սա խելագարութիւնն է, քանզի մեզ շահագործում են, և մենք մեր իրավունքներն ունենք: Սակայն կրկին, սա տարբերակում է իրական քրիստոնյաներին: Յավատալ, որ Աստված կարող է մեր մասին հոգ տանել՝ առանց մեր իրավունքները պաշտպանելու, իրականում հավատքի գործ է ու Աստծուն մեծ բավականութիւնն է պատճառում: Իրական քրիստոնեութիւնը իրավունքները հանձնելու մասին է, ճիշտ այնպես, ինչպես արեց Յիսուսը. *«Արդարեւ Քրիստո՛ս ալ մէ՛կ անգամ չարչարուեցաւ՝ մեղքերու համար, Արդարը՝ անարդարներուն համար, որպէսզի մօտեցնէ մեզ Աստուծոյ» (Ա Պետրոս 3:18):*

3. Քաղաքացիական չարաշահումը

«Եւ ո՛վ որ ստիպէ քեզ մղոն մը երթալ, գնա՛ անոր հետ երկու մղոն» (տող 41):

Այս չարաշահումը դժվար կլինի հասկանալ, եթէ չնայենք «ստիպել» բառին (անգլ.՝ «compel») ու դրա արմատներին: Սա

պարսկերեն բառ է և Նոր կտակատանում գործածվում է միայն ևս մեկ անգամ, բացի այս դեպքը: Այն պարապես նշանակում է «ստիպել հանրային ծառայություն կատարել»: Սիմոն Կյուրենացուն «ստիպեցին» վերցնել Հիսուսի խաչը (տես Մարկոս 15:21): Հրեաները հռոմեական տիրապետության տակ էին, և ցանկացած զինվոր կարող էր ստիպել, այն է՝ քաղաքացիական պարք կատարելու պարտավորության տակ դնել ցանկացած քաղաքացու: Թույլ տրված չէր մերժել:

Եթե մեզանից պահանջվում է որևէ քաղաքացիական պարտք կատարել, որը մենք չենք կարող մերժել, ապա ակնհայտ է, որ մենք պետք է կատարենք դա, բայց պարտավորված մեկ մղոնից հետո մենք ազատ ենք ցանկացած պարտականությունից: Ուրեմն ինչո՞ւ է Հիսուսն առաջարկում, ոչ մենք լրացուցիչ մղոնն անցնենք: Ես կրկին պետք է ասեմ, որ սա կամ խենթություն է կամ էլ իրական քրիստոնեություն, միջին գիծ գոյություն չունի, և սա կրկին անգամ ապացուցում է, թե արդյոք մենք իրական քրիստոնյաներ են: Իրական քրիստոնեությունը միայն լրացուցիչ մղոնն է, մյուս այտը:

4. Անձնական չարաշահումը

«Տո՛ւր քեզմէ ուզողին, ու երես մի՛ դարձներ անկէ՝ որ կ'ուզէ փոխ առնել քեզմէ» (տող 42):

Ինձ համար այս վերջին պնդումը անձնական չարաշահման վերաբերյալ ամենաձանրն է՝ ընդունել ու գործի դնելու համար, բայց մենք բոլորս տարբեր անցյալ ունենք ու տարբեր անհատականություններ ենք: Կրկին անգամ, Հիսուսի ցուցումներին հետևելը «ողջամիտ» չէ, բայց ես չեմ կարող Աստծու սերն ապացուցել առանց այս վերաբերմունքի ու գործողության: Հիսուսի մասին ավետիսը՝ բարի լուրը երբեք էլ չպետք է ողջամիտ ու հեշտ լիներ: Մենք պետք է *ուրանանք անձը, վերցնենք խաչն ու հետևենք Հիսուսին:*

Հիշում եմ, շատ տարիներ առաջ իմ ազգակիցներից մեկն ինձնից խնդրեց օգտագործել իմ երկար ձեռնասանդուկքը: Դա ինձ ընկերներիցս մեկն էր տվել, որը տեղափոխվել էր Ավստրալիա ապրելու, և ես անգամ

այն չէի էլ օգտագործել դեռ: Ազգակիցս այն վերցրեց ու մի քանի ամիս անց, երբ ես դրա կարիքն ունեի, նա այն դեռ չէր վերադարձրել: Ես զանգահարեցի նրան ու խնդրեցի, որ վերադարձներ ձեռնասանդուղքը, սակայն նա ասեց, որ այլևս մեծ մեքենա չուներ ու չէր կարողանա այն իմ տուն հասցնել: Ես բարկացած էի ու հիասթափված, քանի որ դա նշանակում էր, որ ինքս պետք է մեծ դժվարությամբ գնայի ու վերցնեի այն՝ իմ մարդատար փոքր մեքենայով:

Իրական փորձություն

Մի քանի շաբաթ անց միևնույն մարդն ինձ զանգահարեց ասելու, որ իր կտուրից մի քանի շերտաքար էր ընկել ու խնդրեց, թե արդյոք կարող էր կրկին օգտագործել իմ ձեռնասանդուղքը: Սրտումս ցանկանում էի ստել ու ասել, որ պատրաստվում էի այն ինքս օգտագործել, և համոզված եմ, որ եթե ժամանակ ունեցած լինեի ծրագրելու, ապա հենց այդպես էլ կվարվեի: Բայց մինչև նա հեռախոսագծի մյուս կողմում սպասում էր իմ պատասխանին, ես դժկամությամբ ասացի, որ անշուշտ կարող էր օգտագործել իմ ձեռնասանդուղքը: Բայց իրականում ես չկամությամբ էի տալիս այն նրան, ու իմ սիրտը նրան սիրելուց ու նրա կարիքները հասկանալուց շատ հեռու էր: Հիսուսը մեկ այլ հատվածում ասում է. *«Եթէ փոխ տաք այնպիսի մարդոց՝ որոնցմէ յոյս ունիք վերստանալու, ի՞նչ շնորհք կ'ունենաք. որովհետեւ մեղաւորներն ալ փոխ կու տան մեղաւորներուն, որպէսզի վերստանան նոյն չափով: Հապա դուք՝ սիրեցէ՛ք ձեր թշնամիներիը ու բարի՛ք ըրէք, փոխ տուէք՝ առանց փոխարէնը բան մը սպասելու, եւ ձեր վարձատրութիւնը շատ պիտի ըլլայ ու Ամենաբարձրին որդիները պիտի ըլլաք, որովհետեւ ան քաղցր է ապերախտներուն ու չարերուն հանդէպ» (Ղուկաս 6:34-35):*

Կանոնն ու կիրառությունը

Չիսուսի խոսքերը կարող են հաճելի ու բարոյական թվալ, սակայն շատ մեծ տարբերություն կա Չիսուսի ասածներին հավատալու ու դրանք իրականում, գործնականում ապրելու միջև: Քրիստոնյաների մեծամասնությունը կհամաձայնվի Չիսուսի ասած ամեն մի բանի հետ, բայց իրենց ամենօրյա կյանքում նրանք վճռականորեն կմերժեն այդ ասածները կիրառելը: Եկեք հիշենք, որ այս օրինակն ամբողջովին վրիժառության հետ է կապված: Մենք ոչ միայն չպետք է վրեժ առնելու ցանկություն ունենանք, այլ մենք պետք է հակառակ ուղղությամբ գնանք ու անենք այն, ինչ մաքուր սրտից բխող սերը կանի:

Թույլ տվեք ձեզ հիշեցնել, որ Լեռան քարոզի այս հատվածում Չիսուսը բացահայտում է մեր արտաքին մեղքերի արմատները: Եթե ես երբևէ **իմ սրտում** վրդովմունք կամ վիրավորանք ունեմ, ապա ես վտանգի մեջ եմ, քանզի դա հաստատ նշան է այն բանի, որ ես իմ իրավունքների պահանջատերն եմ: Սա հեշտ չէ ընդունելը, բայց ճշմարտությունը մեզ ազատում է: Ինչպես Չակոբոսն է ասում. *«Սակայն խօսքը գործադրողներ՝ եղէք, եւ ո՛չ թէ միայն լսողներ՝ դուք ձեզ խաբելով» (Չակոբոս 1:22):*

Նշումներ

1. «Դուն կը հաւատաս թէ Աստուած մէկ է. լա՛ւ կ'ընես: Դեւե՛րն ալ կը հաւատան ու կը սարսռան» (Չակոբոս 2:19):



ԳԼՈՒԽ 19

Սիրի՛ր ընկերոջդ, ատի՛ր թշնամուդ

Լսեր էք թէ ըսուեցաւ. «Սիրէ՛ ընկերդ եւ ատէ՛ թշնամիդ» :

Մատթեոս 5:43

Սա Հիսուսի վեցերորդ և վերջին նկարագրությունն է Օրենքը սիրով իրագործելու վերաբերյալ: Նա միևնույն բառերն է օգտագործում, ինչ մյուս օրինակներում. «Լսել էք, թե ասվեց»՝ հասկացնելով, որ Հիսուսի օրերում Աստծու ժողովրդի մեծամասնությունը չէր հասկանում Մովսեսի Օրենքը կամ էլ, թե ինչպես պետք է իրագործել դրա ոգին: Նրանք ոչ էլ գիտեին (ինչպես ապացուցում է նկարագրությունը), թե ինչպես պետք է տարբերակել Օրենքը և մարդկանց ավանդույթներն իրարից:

Առաջին հինգ մեջբերումները Մովսեսի Օրենքից էին, և մենք որևէ պատճառ չունենք կասկածելու, որ այս մեջբերումն օրենքից չէ, բայց մենք չարաչար կսխալվենք, եթե այդպես մտածենք: Սկսելով Տասը պատվիրաններից՝ Հիսուսը մեզ անցկացրեց ողջ Օրենքով ու հասցրեց մարդկանց ավանդույթներին՝ առանց մեր իսկ գիտակցելու: Այս վերջին մեջբերումը ողջ Աստվածաշնչում որևէ տեղ գտնել հնարավոր չէ: Իրականում, այն հակադրվում է այն բանին, ինչ Օրենքն է ասում:

Գոյություն չունի մի սուրբ գրություն, որը մեզ կասի ատել մեր թշնամիներին: Աստծու ժողովրդին ասված չէ ոչնչացնել Քանանի երկրում բնակվողներին, նրանք պետք է սպանեին տղամարդկանց, կանանց և երեխաներին, ինչպես նաև անասուններին, սակայն սա Քանանի մարդկանց նկատմամբ ունեցած իրենց որևէ ատելության պատճառով չէր: Սա Աստծու արդարությունը կիրառելու համար էր:

Ամորիացիների մեղքերն իրենց լիությանն էին հասել: *«...քանի որ Տէրը այս ազգերը իրենց անօրէնութեան համար կը վտարէ առջեւէդ»* (Բ Օրինաց 9:4): Աստուծու ժողովրդին հրամայված էր ոչնչացնել ու սպանել, բայց նրանք որևէ թուլւթուլութիւն չունեին ասելու:

Երբ Յեսուն երկիրն Աստուծու ժողովրդի համար վերցրեց, այդժամ այնտեղ բնակվողների դեմ անձնական ոչինչ չկար. նրանք պարզապէս հնազանդվում էին Աստուծու ցուցումներին: Ինչպէս մենք արդէն տեսանք, «սիրիւր մերձավորիդ, ինչպէս ինքդ քեզ» արտահայտուիւնը Նոր կտակարանից չէ, այլ վերցված է Մովսէսի Օրենքից: *«Վրէժ մի՛ առնէր, եւ ոխ մի՛ պահէր քու ժողովուրդիդ որդիներուն դէմ, հապա սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս...»* (Ղեւտացոց 19:18):

Ո՞վ է ընկերդ

Որպէսզի մենք չասենք, թէ այս «ընկերական սերը» վերաբերում է միայն մեր ընտանիքներին կամ քրիստոնյա եղբայրներին, եկեք հիշենք, որ Հիսուսը փարիսեցիներին մերկացրեց այն բանի համար, որ այս կերպ էին մտածում, երբ նա պատմեց Բարի սամարացու պատմութիւնը: Նա ապացուցեց, որ մեր ամենավատ թշնամուն Աստված կարող է նայել որպէս մեր ընկերոջ:

Ես գտնում եմ, որ այս նկարագրութիւնն ամենադժվար ընդունելին է, քանզի մենք կտեսնենք հաջորդ գլխում, որ Հիսուսը մեզ մի քանի փուլերի միջով է տանում ու ցույց տալիս, թէ քրիստոնյա կատարելութիւնն ինչ է Աստուծու աչքին:



ԳԼՈՒԽ 20

Սիրի՛ր թշնամիներիդ

Բայց ես կը յայտարարեմ եմ ձեզի. "Սիրեցէ՛ք ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողներին, բարի՛ք ըրէք անոնց՝ որ կ'ատեն ձեզ, եւ աղօթեցէ՛ք անոնց համար, որ կը պախարակեն ու կը հալածեն ձեզ, որպէսզի ըլլաք ձեր երկնաւոր Հօր որդիները...":

Մատթեոս 5:44-45

Եւ սա՛ պատուիրանը ունինք անկէ. «Ո՛վ որ կը սիրէ Աստուած, թող սիրէ նաեւ իր եղբայրը:

Ա Հովհաննես 4:21

Գաւազանին խնայողը իր որդին կ'ատէ,
Բայց զայն սիրողը փութով կը խրատէ:

Առակաց 13:24

Մենք այժմ ապրում ենք այն իրականության մեջ, երբ Աստուծո թագավորությունը մարդու մեջ է: Այն *չի գալիս դրսից երևացած բաներով*, ուրեմն ի տարբերություն հսրայելի թագավորությանը, Աստված մեզանից չի պահանջում իր թշնամիներին ոչնչացնել կամ մարդկանց որևէ ֆիզիկական վնաս հասցնել: Հիսուսն ու իր առաքյալներն ասում են մեզ, որ մենք անգամ չպետք է քեն պահենք, ատենք կամ պախարակենք որևէ մեկին: Ուրեմն, ի՞նչ պետք է անենք այն մարդկանց հետ, որոնք ատում, հալածում ու զրպարտում են մեզ:

Հիսուսը մեզ այս ուղորտում իրական քրիստոնյայի առաջընթացի չորս փուլ է ցույց տալիս: Թույլ տվեք դրանք մեկ առ մեկ քննարկել:

1. Սիրեցե՛ք ձեր թշնամիներին

Հիսուսի այս վերջին ցուցումները մինչ այժմ ամենադժվար կիրառելիներն են, և դրանք իրոք ապացուցում են, թե արդյոք մենք պատրաստ ենք հնազանդվելու Հիսուսին, թե պարզապես ցանկանում ենք հավատալ նրա «լավ» ուսմունքներին: Սա ապացուցում է, թե արդյոք մենք իրականում հավատում ենք, որ Աստծու բուն եռթյունը սերն է, ու արդյոք պատրաստ ենք դա ցուցադրաբար ապրել:

Ինչո՞ւ պետք է սիրենք մեր թշնամիներին: Դե, Հիսուսը հստակորեն այս հարցին պատասխանում է Ղուկաս 10:25-37-ում՝ շատ հայտնի «Բարի սամարացու» առակում: Առակում պատմվում է, որ մի օրինական (հրավաբան) ոտքի կանգնեց ու հարցրեց Հիսուսին, թե ինչ պետք է անի հավիտենական կյանք ժառանգելու համար: Հիսուսը նրան հարցրեց, թե ինչպես էր մեկնաբանում Օրենքը, և օրինականն ապացուցեց, որ լիովին հասկանում էր Օրենքի տառը: Նա մեջբերեց երկու մեծ պնդում, որոնք ծածկում են ողջ Օրենքն ու մարգարեներին. *սիրի՛ր Աստծուն և սիրի՛ր ընկերոջդ՝ ինչպես ինքդ քեզ*: Հիսուսը նրան ասաց, որ պետք է այդ պատվիրանները կիրառի կյանքում, ու այդ դեպքում պիտի ապրի: Հենց այստեղ է, որ Աստծու ժողովուրդը միշտ սայթաքում է. նրանք հավատում են խոսքերին, բայց չեն ցանկանում հնազանդվել դրանց գործնականում:

Բարի սամարացին

Օրինականը, ցանկանալով խույս տալ հնազանդվելու իրականությունից, փորձեց արդարացնել իրեն ու հարցրեց Հիսուսին, թե ով էր իր ընկերը: Հիսուսն այնուհետև պատմեց առակը, ու օրինականն

ընդունեց, որ իր թշնամին էր իրականում իր ընկերը, որին նա հենց նոր խոստովանեց, թե պետք է սիրի: Հիսուն ասաց նրան, որ հեռանա ու **կիրառի** դա:

Այս երկու պնդումները, այն է՝ «Աստծուն սիրելը» ու «ընկերոջը սիրելը» միշտ էլ ծուղակը պիտի գցեն կեղծավորին, քանզի այս պնդումներն անբաժան են միմյանցից, և դրանցից յուրաքանչյուրը մյուսի մի մասն է: Թե որքան եմ ես սիրում Աստծուն կարող է չափվել նրանով, թե որքան եմ ես սիրում իմ ընկերոջը: Ուրեմն, յուրաքանչյուր քրիստոնյայի Աստծուն սիրելու չափը կարող է չափվել իր թշնամիներին սիրելու չափով:

Հիսուսը հստակորեն ցույց տվեց, թե որքան էր սիրում Աստծուն. խաչի վրա մեռնելու ու այդ ընթացքում ծաղրանքի ենթարկվելու ժամանակ նա Աստծուն խնդրեց հասկանալ ու ներել այդ թշնամիներին: Սա քրիստոնյա կատարելություն է, և ինչպես մենք ավելի ուշ պիտի տեսնենք, սա միակ չափանիշն է այն բանի, *որ Աստծու սերը մեր սրտերում սփռված է **բոլոր** մարդկանց նկատմամբ:*

Հնարավոր է ասել, թե մենք մեր սրտերում սիրում ենք մեր թշնամիներին, սակայն կարիք չունենք դա արտահայտելու: Ճշմարիտ է, որ սերն իրոք սրտում է սկսվում, և որ գործողությունը միայն կարող է լինել պարզապես կեղծավորություն և արտաքին ցուցադրական քայլ: Սակայն հավատացած եմ, որ հետևյալ պնդումը միշտ էլ ճիշտ է. **մենք կարող ենք գործել՝ առանց սիրո, սակայն երբեք չենք կարող սիրել՝ առանց գործողության:** Այսպիսով, Հիսուսը զարգացնում է ուսմունքը, անցնելով հաջորդ ցուցմանը, որը ոչ միայն սրտում սիրելու մասին է, այլև մի սիրո, որը արտահայտվում է գործողություններում:

2. Օրհնե՛ք ձեզ անիծողներին

Մենք այժմ շարժվում ենք սրտից դեպի բերանը: Օրհնելը մի բան է, որ մենք անում ենք մեր խոսքերով: Մենք ապացուցում ենք, որ մեր սրտում իրոք սեր կա, երբ մենք բացում ենք մեր բերանն ու ասում որևէ

լավ բան այն մարդկանց նկատմամբ, որոնք իրենց բերաններով անիծում են մեզ: Սերը կախված չէ զգացմունքներից, այն ավելի շատ կապ ունի հնազանդության հետ: Միայն հնազանդությունը կարող է ապացուցել, որ մենք սիրում ենք Աստծուն: Հիսուսն ասաց. *Եթե սիրում ես ինձ, պահիր պատվիրաններս* (Յովհաննես 14:15):

Հիսուսն իրոք օրհնեց իր թշնամիներին, և եղեկեցիներին ուղղված նամակները մեզ սովորեցնում են միևնույնն անել: Յովմեացիս 12-րդ գլխում Պողոս առաքյալն ասում է մեզ նորոգել մեր միտքը, և այս գլխում թվարկվում են բազմաթիվ գործնական ցուցումներ, որպեսզի մենք սկսենք մտածել աշխարհից տարբեր: Տող 14-ում նա ասում է. *ձեզ հալածողներին օրհնե՛ք. օրհնե՛ք և մի՛ անիծեք*: Սա որևէ կապ չունի այն բանի հետ, թե մենք ինչպես ենք **զգում**, այլ այն բանի հետ, թե ինչպես մենք պետք է **գործենք**: Հիսուսն այժմ մեզանից պահանջում է ավելի հեռուն գնալ, քանզի մեկ այլ առաջխաղացում կա:

3. Բարիք արեք նրանց, որ ատում են ձեզ

Մենք նախորդ գլուխներից տեսանք, որ ատելությունը սպանության սերմն է: Այն մարդիկ, որոնք մեզ ատում են, սպանության սերմն ունեն իրենց սրտում՝ անգամ եթե նրանք անձամբ չեն գիտակցում դա: Հիսուսն ասում է, որ այն սերը, որ իրագործում է Օրենքը, *նրանց բարիք կաներ*: Այս փուլն ավելին է, քան պարզապես խոսելը: Մեզանից այժմ պահանջվում է արտահայտել Աստծու նկատմամբ մեր սերը՝ դրանով իսկ նաև մեր ընկերոջ նկատմամբ ունեցած մեր սերը: Մենք երբեք չենք կարող ասել, որ սիրում ենք Աստծուն, բայց չենք սիրում որոշ մարդկանց: Դա մեզ ստախոս է դարձնում: Յովհաննես առաքյալի նամակը եկեղեցիներին մեզ հստակորեն ցույց է տալիս, որ մենք մոլորության մեջ ենք, եթե սա չգիտենք.

«Եթե մեկը ըսէ. «Ես կը սիրեմ Աստուած», եւ ատէ իր եղբայրը, ստախոս է. որովհետեւ ան որ չի սիրեր իր եղբայրը՝ որ կը տեսնէ,

Ի՞նչպէս կրնայ սիրել Աստուած՝ որ չի տեսներ: Եւ սա՛ պատուիրանը ունեինք անկէ. «Ո՛վ որ կը սիրէ Աստուած, թող սիրէ նաեւ իր եղբայրը» (Ա Հովհաննէս 4:20-21):

«Ա՛ն որ կ'ըսէ թէ լոյսի մէջ է եւ կ'ատէ իր եղբայրը, տակաւին խաւարի մէջ է: Ա՛ն որ կը սիրէ իր եղբայրը, կը բնակի լոյսի մէջ, ու գայթակղութիւն չկայ իր մէջ: Բայց ա՛ն որ կ'ատէ իր եղբայրը՝ խաւարի մէջ է, խաւարի մէջ կը քալէ եւ չի գիտեր թէ ո՛ւր կ'երթայ, որովհետեւ խաւարը կուրցուցած է իր աչքերը» (Ա Հովհաննէս 2:9-11):

Արդյոք սա նշանակում է, որ դուք պետք է ձևանաք, թե սիրում եք ձեր թշնամիներին: Սա նշանակում է, որ դուք պետք է հնազանդ լինեք ու բարին անեք ձեր թշնամիներին, որպեսզի ապացուցեք, որ սիրում եք Աստծուն ու հնազանդվում եք նրան: Եթե ես 50 \$ուևտ ուղարկեմ իմ թշնամուն, որովհետև ես սիրում եմ Աստծուն ու ցանկանում եմ հնազանդվել նրան, ապա ես սիրում եմ իմ թշնամուն, անգամ եթե ես դեռ նրա նկատմամբ վատ եմ տրամադրված: Սերը զգացմունքների մեջ չէ, այլ նրանում, թե մենք ինչ ենք անում: Սակայն քանի-քանի քրիստոնյաներ են ասում մեկ այլ քրիստոնյայի, թե նրան «Տիրոջ սիրով» են սիրում, երբ իրականում նրանք, փաստորեն, ատում են նրանց: Մենք պետք է նրանց ինքներս սիրենք: Աստված նրանց սիրում է՝ անկախ մեզանից յուրաքանչյուրի, և մենք պետք է նրանց մեր սրտից սիրենք: Մենք ցույց ենք տալիս, թե որքան հաճախ կարծր ու սառն են մեր սրտերը և ծածկում ենք այդ փաստը գեղեցիկ խոսքերով:

Գործեր, ոչ խոսքեր

Թույլ տվեք մի գործնական օրինակ ցույց տալ ձեզ: Այն անձը, որ ատում է ձեզ, կարող է ձեր մասին ստել ավելի բարձր իշխանության և պատճառ հանդիսանալ, որ ձեզ աշխատանքից ազատեն: Ի՞նչ պետք է անեք դուք: Դե, բավական չէ ասել, թե դուք սիրում եք նրանց, և անգամ բավական չէ նրանց հետ խոսելն ու նրանց օրհնելը: Անհրաժեշտ է «լրացուցիչ մղոնը», և մենք պետք է նրանց բարին անենք: Շատ հաճախ

Նրանք բարությունը բացեիբաց չեն ընդունի, բայց ի՞նչ կլինի, եթե նրանց ուղարկեք ծաղիկներ, մի տուփ շոկոլադ, ֆուտբոլային խաղի տոմս, կամ էլ ցանկացած այլ բան, որ նրանց հաճելի կլինի:

Սա բթամտություն ու հիմարություն է թվում: Այո, աշխարհի համար դա հենց այդպես է, բայց սա է Աստծու սիրո ուժը նրանց համար, ովքեր հասկանում են, որ սա հենց այն է, ինչ Քրիստոսն արել է ձեզ և ինձ համար: Նա ոչ միայն մեզ իր սրտում սիրեց, այլև խոսեց ու ասաց. *Ահա՛ գալիս եմ քո կամքը գործադրելու, ո՛վ Աստված*: Այնուհետև նա գնաց դեռ ավելի հեռուն ու կատարեց բարության մի հիմար գործողություն: Նա եկավ ու մահացավ իր թշնամիների համար՝ ձեզ և ինձ: Այս մտածելակերպն ու գործողությունը կամ խենթություն է, կամ էլ իրական քրիստոնեություն: Գոյություն չունի ոսկե միջին: Մնացյալ ամեն ինչ ունայն կրոն է կամ կեղծավորություն:

Արդյոք այս երրորդ քայլը վերջնականն է: Ես այդպես էի կարծում, սակայն Հիսուսն ասում է, որ էլ ավելի հեռուն տանող փուլ կա:

4. Աղոթե՛ք նրանց համար, որ պախարակում են ձեզ

Առաջին հայացքից սա կարող է ամենահեշտ բանը թվալ, որ կարող ենք անել. պարզապես աղոթել այն մարդկանց համար, որոնք ձեր նկատմամբ պախարակելի գործողություններ են կտարել՝ ձեզ վիրավորելու նպատակով: Իմ կինը՝ Ջոանան, օգնեց ինձ հասկանալու, որ սա ամենադժվար բանն է, եթե իրոք հասկանանք, թե ինչ է իրականում նշանակում:

Ես մեծացել եմ սիրով ու կայունությամբ լեցուն մի ընտանիքում, ու երբևէ չեմ հիշում, որ որևէ մեծ վիրավորանք ստացած լինեմ մեկից, սակայն Ջոանայի ընտանիքում տիրել է վեճերի և բռնության մթնոլորտ, և նա վախեցած էր ու վիրավորված անգամ այն մարդկանց կողմից, որոնք իրեն շատ մտերիմ էին: Նա լի էր իր ընտանիքի մի մասին նկատմամբ ատելությամբ ու սրտում սպանության մտքեր ուներ:

Ժամանակի ընթացքում նա սովորեց ներել ու դադարեց նրանց նկատմամբ վրավորական բաներ ասելուց: Նա անգամ հասավ այնպիսի պահի, երբ կարող էր «բարին անել» նրանց նկատմամբ՝ գաղտնի: Սակայն մի քանի տարի առաջ Ջոաննան ինձ հետ կիսեց, որ ամենադժվարինը, որը նա ստիպված է եղել հաղթահարել, նրանց համար աղոթելն է եղել՝ ոչ միայն, որ Աստված օրհնի նրանց, քանզի դա հեշտ է եղել, այլ նրանց հետ **կրկին հաշտվելու համար**: Ինչո՞ւ: Որովհետև սա այն չէր, ինչը նա իրականում ցանկանում էր իր սրտում: Ներելը հնարավոր էր, սակայն աղոթել, որ Աստված իրենց միավորի, և որ ինքը կրկին խոցելի դառնա հետագա շահագործման ու վիրավորանքի՞. սա մի աղոթք է, որ նա երկար տարիներ չէր կարողանում աղոթել:

Ժամանակը մոլորեցնում է մեզ

Մենք հաճախ մտածում ենք, թե ներել ենք մարդկանց, երբ իրականում դա միայն այն պատճառով է, որ այդ մարդիկ այլևս մեր կյանքում չեն: Եթե այդ մարդիկ հետ գային մեր կյանք, ապա միզուցե բոլոր հին վիրավորանքները մակերես դուրս գային: Հաճախ ճշմարիտ է այն, որ մենք իրականում չենք ներել, այլ պարզապես մոռացել ենք վիրավորանքները: Սա Աստծու կողմից ընդունելի չէ, քանզի նա ցանկանում է լիակատար աշխատանք տանել մեր սրտերում: Առանց պայմանի հաշտեցման ու միության համար աղոթելը միակ ապահով աղոթքն է, որ կարող ես ասել, եթե ցանկանում ես կատարյալ լինել:

Այս վերջին նկարագրությունը վերջնականն է, քանզի այն ցույց է տալիս մեզ «քրիստոնյա կատարելությունը»: Մենք դա կդիտարկենք այս գրքի հաջորդ ու վերջին գլխում:



ԳԼՈՒԽ 21

Քրիստոնյա կատարելություն

...որպեսզի ըլլաք ձեր երկնաւոր Հօր որդիները. որովհետեւ իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛ բարիներուն վրայ, եւ անձրեւ կը դրկէ թէ՛ արդարներուն եւ թէ՛ անարդարներուն վրայ: Որովհետեւ եթէ դուք սիրէք ձեզ սիրողները, ի՞նչ վարձատրութիւն կ'ունենաք. մաքսաւորներն ալ նոյնը չե՞ն ըներ: Ու եթէ բարեւէք միայն ձեր եղբայրները, ի՞նչ աւելի կ'ընէք ուրիշներէն. մաքսաւորներն ալ նոյնը չե՞ն ըներ: Ուրեմն դուք կատարեալ եղէք, ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է:

Մատթեոս 5:45-48

Որդեակներս, սիրե՛նք ո՛չ թէ խօսքով ու լեզուով, հապա՛ գործով եւ ճշմարտութեամբ:

Ա Հովհաննես 3:18

Մի՞թէ հնարավոր է կատարյալ լինել՝ որպէս քրիստոնյա: Լեռան քարոզից վերը բերված մեջբերումն այդպէս է ասում: Այս պնդումը հասկանալու բանալին համատեքստը հասկանալն է: Սա Հիսուսի՝ Օրենքը սիրով իրագործելու վերջին նկարագրության եզրահանգումն է: Եթէ, ինչպէս Աստվածաշունչն է ասում, *Տիրոջ Օրենքը կատարյալ է* (Սաղմոս 19:7), ապա այդ Օրենքը սիրով իրագործելը մեզ կատարյալ է դարձնում:

Պետք է հատկանշեմ այն, որ սա որևէ կապ չունի որպես քրիստոնյա *առանց մեղքի* լինելու հետ: Ես սա նախորդ գլուխներում քննարկել եմ ու ցույց տվել, որ ասելն այն, որ մենք մեղք չենք գործում, մեզ ստախոս կդարձնի: Հիսուսը չի խոսում *առանց մեղքի կատարելության* մասին, այլ խոսում է *քրիստոնյա կատարելության* մասին: Քրիստոսի արյունը վճարում է մեր թողության համար, դարձնում է մեզ Աստծու համար ընդունելի ու տալիս մեզ հավիտենական կյանք, բայց մեր վերաբերմունքն ու գործողությունները մեզ դարձնում են **կատարյալ ու հասուն մեր վարմունքի մեջ** և այնպես, ինչպես մեր երկնավոր Հայրն է:

Եթե մենք գործենք, ինչպես մեր երկնավոր Հայրը, ապա կդառնանք նրա պես կատարյալ, և մեր Հայրը գոհ կլինի: Հիսուսն իր այս վերջին նկարագրությամբ բացատրում է ոչ միայն իր Հոր բնույթը, այսինքն՝ սերը, այլ այն, թե ինչպես է իր Հայրը գործում: Աստված իր լավ կամ վատ գործողություններով խտրականություն չի դնում ցանկացած կենդանի էակի նկատմամբ՝ թե բարի ու թե չար: Միգուցե այս պնդումը հակասում է նրան, ինչ դուք լսել եք բազում ամբիոններից, ուրեմն ես ձեզ մարտահրավեր եմ նետում սա փորձելու:

Կազմեք մի ցուցակ՝ բախկացած ձեր իմացած քսան չար կամ անաստված մարդկանց անուններից և մեկ այլ ցուցակ՝ բաղկացած քսան Աստվածավախ մարդկանց անուններից: Նրանք կարող են լինել թե անցյալից ու թե ներկայից: Այնուհետև համեմատեք այդ երկու ցուցակներում եղած մարդկանց կյանքի իրադարձությունները, ու կարող եմ երաշխավորել, որ միջին հաշվով որևէ տարբերություն չի լինի:

Անաչառ

Աստծո մոտ աչառություն չկա, և Աստվածաշունչն ասում է, որ փորձությունները **մարդկային են**: Ձեր երկու ցուցակներում եղած մարդկանց ընտանիքներում էլ մարդիկ մահացած կլինեն նախքան յոթանասուն տարեկանը: Մի քանիսը ավտովթարներ ունեցած կլինեն:

Մի քանիսին կողոպտած կլինեն, մյուսները հիվանդությունից տառապած կլինեն: Երկու ցուցակներում եղած մարդկանց կյանքում էլ լավ բաներ պատահած կլինեն:

Եթե չար հողագործը ջանադրաբար աշխատի ու ցորեն ցանի դաշտում, ապա կստանա միևնույն մեկ դաշտի չափով բերք, ինչ քրիստոնյան: Եթե ծուլ քրիստոնյան դաշտի կեսը ցորեն ցանի, ապա նա կստանա դաշտի կեսի չափով բերք, որովհետև ցանելն ու հնձելը Աստծու բնական օրենքներից է, որը ցանկացած մարդ կարող է կիրառել՝ անկախ Աստծու առաջ իր սրտի կարգավիճակից: Որոշ աստվածավախ մարդկանց խարույկի վրա այրել են, իսկ որոշ չար մարդիկ թվում է թե սքանչելի կյանք են ապրել:

Խտրականությունն մի՛ դրեք

Քրիստոնյաները պետք է ցանկացած ժամանակ Աստծու պես գործեն և խտրականություն չդնեն իրենց սիրո մեջ: Սա է այն հասունությունն ու «կատարելությունը», որի մասին Հիսուսը խոսում է:

Հակոբոս առաքյալն իր ընդհանրական նամակի 2-րդ գլխում խոսում է այն խտրականության մասին, որը չպետք է լինի Աստծու եկեղեցում, ու մեզ ցույց է տալիս, որ պետք է իրագործենք *արքայական օրենքը*, այն է՝ սիրենք մեր ընկերներին, ինչպես ինքներս մեզ (տող 8), և նա սա կոչում է *ազատության օրենք* տող 12-ում:

Նա այդ գլուխն ավարտում է՝ ցույց տալով, որ հավատքն առանց գործերի բոլորովին էլ ճշմարիտ հավատք չէ: Հավատացած եմ, որ կարող եմ միևնույնն ասել սիրո մասին: Սերն առանց գործողությունների, ինչպես նկարագրված է նախորդ գլուխներում, բոլորովին էլ սեր չէ: Այն ունայնություն է և որևէ կապ չունի Քրիստոսի ավետարանի հետ: Միգուցե ես կարող եմ ավարտել երեք փոքր պնդումներով, որոնք ես հավասարաչափ կիրառում եմ հավատքի ու սիրո դեպքում.

✓ **հավատքը կամ սերն առանց գործերի մոլորություն է**

- ✓ գործերն առանց հավատքի կամ սիրո կեղծավորությունն են
- ✓ հավատքը կամ սերը գործերով ճշմարիտ քրիստոնեությունն է

Հավատացած եմ, որ Հիսուսի այս վեցը նկարագրությունները, որոնք մենք դիտարկեցինք, բերված են մեր կյանքում եղած կեղծավորությունը բացահայտելու նպատակով, և պետք է խոստովանեմ, որ ցանկացած ժամանակ, երբ ես դրանք ուսուցում եմ, ես կրկին անգամ բացահայտվում եմ: Ես երբեք չեմ սպանել, բայց հենց այս գրելու պահին էլ հասկացա, որ վերջին անգամ այս պատգամը քարոզելուց ի վեր ես սրտումս սպանության սերմեր եմ ունեցել: Միևնույնը ճշմարիտ է նաև շնանալու մասին: Փառք Աստծո, ես կնոջս հավատարիմ եմ, բայց Աստծու խոսքն ինձ բացահայտում է, քանի որ այս գրելու պահին չեմ կարող վստահաբար պնդել, թե երբեք սրտումս ցանկության միտք չեմ ունեցել: Այս վեցը օրինակները բացահայտում են իմ սիրտը:

Ո՞րն է սրտիս գաղտնի կյանքի պատասխանը. այն գաղտնի կյանքի, որի մասին անգամ կինս ու ընկերներս չգիտեն, մի կյանք, որը թաքցված է անգամ իմ սրտից: Դե, Հիսուսը մեզ հիասքանչ հույս է տալիս, և սա կլինի հաջորդ գրքի առարկան՝ «Աշակերտի գաղտնի կյանքը»:

*Որդեակներս, սիրե՛ք ո՛չ թե խօսքով ու
լեզուով, հապա՛ գործով եւ ճշմարտութեամբ:
Ա Հովհաննես 3:18*





Մորիս Բարրաթը դաստիարակվել է իր հոր՝ Բիլլ Բարրաթի քրիստոնեական ծառայության ներքո: Նա քրիստոնյա է դարձել վեց տարեկանում և իր երիտասարդությունից ի վեր ապրել ավանդական քրիստոնյա կենսակերպով: Սակայն երեսուն տարեկանում նրա վրա խորը ազդեցություն է թողնում իր հոր ուսուցումը՝ հիմնված Հիսուսի Լեռան քարոզի վրա, որտեղ խոսվում է իրական քրիստոնյայի

սկզբունքների և կենսակերպի մասին: Այդ ժամանակվանից ի վեր նա սկսում է ավանդական, «նորմալ» քրիստոնյայից դառնալ մի մարդ, ով համոզված է, որ այն, ինչի պակասն այսօր քրիստոնյաներն ունեն, ոչ թե գերբնական զորությունն է կամ շնորհները, այլ պտուղը՝ Հիսուսի եռությունը, նրա բնավորությունը:

Վերջին երեսուն տարիների ընթացքում Մորիսը նվիրաբար հետևում է իր կանչին. ուսուցանում է եկեղեցուն (այսինքն հավատացյալ ժողովրդին) քրիստոնյա աշակերտի իրական կենսակերպը: Նա ուսուցանում է եկեղեցիներում, տնային խմբերում, բանտերում, դպրոցներում և աստվածաշնչյան դպրոցներում, Եվրոպայի, Աֆրիկայի, Ասիայի մի շարք պետություններում, ԱՄՆ-ում և Կանադայում:

Քրիստոնյայի կենսակերպին վերաբերող դասերի մեծամասնությունը հասանելի են համացանցում՝ www.barrattministries.org.uk կայքում, որտեղ ներառված է նաև Լեռան քարոզի շարքը՝ 64 դասից կազմված:

Մորիս Բարրաթը Մեծ Բրիտանիայի Մանչեսթեր քաղաքում գործող «Barratt Ministries»-ի տնօրենն է: Նրա «Արմատական քրիստոնեություն» շարքը ուղղված է Լեռան քարոզի խորաթափանց ուսումնասիրությանը, որի նպատակն է, կոչ անել այսօրվա քրիստոնյաներին հետևելու Հիսուսին՝ ապրելով նրա պատգամած կենսակերպով:



**«Barratt Ministries» հրատարակչության
կողմից հրատարակված այլ գրքեր**

**«Արմատական քրիստոնեություն» շարք - մաս 1
Կարող եմ արդյոք իրական քրիստոնյաները
ոտքի կանգնել**

**«Արմատական քրիստոնեություն» շարք - մաս 2
Աղ և լույս. աշակերտի եությունը**

**«Արմատական քրիստոնեություն» շարք - մաս 4
Աշակերտի գաղտնի կյանքը**

**«Արմատական քրիստոնեություն» շարք - մաս 5
Ագա՞հ, թե՞ հագեցած**

**«Արմատական քրիստոնեություն» շարք - մաս 6
Աշակերտի ընտրությունները**



«Barratt Ministries»-ը քրիստոնյա կազմակերպություն է, հիմնադրվել է 1985 թ-ին Մեծ Բրիտանիայի Մանչեսթեր քաղաքում: Այն զբաղվում է գրքերի և գրականության հրատարակմամբ, երաժշտական, ուսուցողական սկավառակների ձայնագրմամբ և այլն:

«Barratt Ministries» հրատարակչություն

